Tournefort J. P. 1727, Relation d'un voyage du Levant: fait par ordre du Roi par M.Pitton de Tournefort, t. III, Lyon, chez les frères Bruyset, 405 p.

Villotte J. 1730, Voyages d'un missionaire de la Compagnie de Jesus, Vincent, 646 p.

ՀՌԻՓՍԻՄՅԱՆ ԿՈՒՅՍԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂԵԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ Գ.

Ամփոփում

Բանալի բառեր՝ Ագաթանգեղոս, վարքագրություն, ճամփորդական նոթեր, վերափոխություն, «Սուրբ Հռիփսիմյան կույսերի պատմություններ», ինտերտեքստ, էքսպեդիենտ-ռեցիպիենտ:

Քրիստոնեության պատմության հետ կապված բազմաթիվ ավանդազրույցների մեջ Հռիփսիմյան կույսերի նահատակության պատմությունն իր դրամատիզմի շնորհիվ աննկատ չի մնացել և եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններում կայուն տեղ է զբաղեցնում՝ Հայաստանի մասին պատմությունների շարքում: Ուղեգրական գրականության մեջ այդ պատմությունը զգալի փոփոխությունների է ենթարկվել, ինչը պայմանավորված է մատուցվող տեղեկատվության բնույթով: Մի դեպքում տեղեկությունները գալիս էին գրավոր աղբյուրներից (միջտեքստային փոխառություններ), մյուս դեպքում՝ բանավորներից՝ կատարողից (էքսպեդիենտ) ունկնդրողին (ռեցիպիենտ): Ավանդազրույցի ստեղծման ընթացքում կիրառվել են ստեղծարար գործունեության հիմնական բաղադրիչները՝ ճանապարհորդի երևակայություն, որը խեղաթյուրում է վարքագրությունը և այն շարադրվում է սեփական

ընկալմանն ու վերաբերմունքին համապատասխան: Արդյունքում ստացվում է անհատական ստեղծագործական երևակայության արգասիք:

ON THE STORY OF SAINT HRIPSIMEAN VIRGINS' MARTYRDOM IN EUROPEAN TRAVELOGUES

KARAGYOZYAN G.

Summary

Key words: Agathangelos hagiographic legend, travelers' notes, modification, "The Story of Saint Hripsimean Virgins" intertext, expedient-recipient.

Among the numerous legends on Christianity the story of Hripsimean Virgins' martyrdom due to its dramatic undertones was noteworthy, thus becoming a recurrent theme in the European travelers' notes about Armenia. The story underwent several modifications in travelogues. Those modifications were conditioned by the mode of providing information i.e. in some cases the information was obtained from written sources (intertextual borrowing), while in other cases via oral sources when information was conveyed by the speaker (expedient) to the listener (recipient). In the process of myth creation the main components of creativity are activated, the traveler's imagination and fantasy in the interpretation of a hagiographic legend constructed in accordance with the author's understanding and attitude towards the reproduction, play a decisive role. As a result a product based on individual creative fantasy comes into existence.

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ*
Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
K86Mkrtchyan@gmail.com

ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ 2000-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բանալի բառեր. Իրանի հայ համայնք, ժողովրդագրական գործընթացներ, արտագաղթ, քրիստոնյա համայնքներ, տարածաշրջանային զարգացումներ, Թեհրանի Հայոց թեմ, համայնքային գործիչներ:

Ներածություն

Իրանի հայ համայնքը XXI դար մուտք գործեց նախորդ դարի 80-ական թթ. սկիզբ առած և դեռևս շարունակվող արտագաղթի պայմաններում: Այն հետևանք է այն իրողության, որ վերջին չորս տասնամյակները ռազմա-քաղաքական և սոցիալ-տնտեսական բարդ փորձաշրջան էին Իրանի նորաստեղծ Իսլամական Հանրապետության համար: 1980-ական թթ. Իրան-իրաքյան պատերազմը, ապա դրան հաջորդած տասնամյակներին և ընդհուպ մինչև մեր օրերը Արևմուտքի կողմից ձեռնարկած և պարբերաբար խստացվող պատժամիջոցները սոցիալ-տնտեսական մեծ վնաս պատճառեցին Իրանի բնակչությանն առհասարակ:

Տարածաշրջանային վերոնշյալ զարգացումների համատեքստում իր գործունեությունն է ծավալում հայ համայնքը, որը քանակապես աստիճանաբար նվազում է: Դրանով հանդերձ, հարկ է նշել, որ Իրանի քրիստոնյա համայնքների շարքում հայերը հաստատուն կերպով զբաղեցնում են առաջին տեղը:

Արտագաղթի խնդիրն իրենց գործունեության օրակարգում են պահում Իրանի Հայոց երեք թեմերը կրոնական տեսանկյունից ղեկավարող Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, համայնքի հոգևոր և աշխարհիկ կառույցների ղեկավարները, ազգային գործիչները: Միաժամանակ նշելի է, որ ժողովրդագրական ճգնաժամի հետևանքով փակվում են դպրոցներ, նվազում է հատկապես երիտասարդության թիվը:

---

* *Հոդվածը ներկայացվել է 05.07.20, գրախոսվել է 06.07.20, ընդունվել է տպագրության 13.04.21:*

Ժողովրդագրական գործընթացներն Իրանի հայ համայնքում փարածաշրջանային զարգացումների համատեքստում

Իրանի հայ գաղթօջախների անցյալի պատմությունը հայ գրչի մշակների կողմից բավականաչափ ուսումնասիրված է, մի բան, որ չի կարելի ասել այդ համայնքի ներկա վիճակի ու զարգացումների մասին: Մինչդեռ խնդիրը խիստ արդիական է և ոչ զուրկ քաղաքական իմաստից, մանավանդ Մերձավոր ու Միջին Արևելքում ընթացող հասարակական-քաղաքական ներկա բարդ և պայթյունավտանգ գործընթացների համատեքստում[1]:

1979 թ. Իսլամական հեղափոխությանը հաջորդած Իրան-իրաքյան պատերազմը, այնուհետև Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները սոցիալ-տնտեսական մեծ վնաս են հասցրել ինչպես Իրանի ամբողջ բնակչությանը, այնպես էլ նրա մի մասը կազմող հայ համայնքին: Այն արտահայտվեց արտագաղթի տեսքով: Կարելի է ասել, որ վերջին 40 տարում համայնքը նվազել է ավելի քան երեք անգամ:

1980-ական թթ. Իրանը լարել էր իր ուժերը Իրաքի դեմ ծանր ու հյուծիչ պատերազմը շարունակելու համար, որը ոչ միայն խլում էր հարյուր հազարավոր մարդկային կյանքեր, այլև վիթխարի նյութական վնասներ էր պատճառում երկրին[2]:

Ներկայումս ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ Իրանի բնակչությունը կազմում է ավելի քան 83 մլն, որը աշխարհի բնակչության 1,08%-ն է[3]: Բնակչության թվով երկիրը զբաղեցնում է 18-րդ տեղը: Հատկանշական է, որ բնակչության 75,5%-ը կամ շուրջ 63 մլն մարդ քաղաքաբնակ է և միջին տարիքը կազմում է 32:

2013 թ. Ասորի եկեղեցու Թեհրանի Գաղտիացի թեմի առաջնորդ Ռամզի Կարմուի տվյալներով՝ Իրանի բոլոր քրիստոնյաների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 70 հազար, որոնք պատկանում են տարբեր համայնքների: Հայերը կազմում են Իրանի քրիստոնյա հասարակության մեծ համայնքը՝ շուրջ 50 հազար առաքելականներ և շուրջ 300 կաթոլիկներ: Ուրմիա քաղաքում բնակվող Ասորի գաղտիացիների թիվը շուրջ 5 հազար է: Նեստորական եկեղեցու հետևորդները, որ հայտնի են «արևելքի ասորիներ» անվամբ, հաշվվում են շուրջ 7 հազար հոգի, բողոքական խմբակները՝ շուրջ 1000 հավատացյալ, լատինածես քրիստոնյաները՝ մոտ 500 մարդ, որոնց մեծ մասը օտարերկրա-

[1] **Բայբուրդյան** 2013, 11:

[2] **Բայբուրդյան** 2005, 730:

[3] https://www.worldometers.info/world-population/iran-population/#:~:text=The%20current%20population%20of%20the,year%20according%20to%20UN%20data. դիտվել է 28.02.2020:

ցիներ են: Ներկայումս քրիստոնյաների մեծ մասն ապրում է Թեհրան քաղաքում[4]: Նշելի է, որ բացի քրիստոնյա համայնքներից, զրադաշտները կազմում են շուրջ 30 հազար, իսկ հրեաները՝ մոտ 20 հազար: Հայ համայնքը կազմել է Իրանի քրիստոնյա ընդհանուր բնակչության ավելի քան 70%-ը:

Իրանում հայության թվաքանակի վերաբերյալ կարևոր է հաշվի առնել վիճակագրական հետևյալ տվյալները: Այսպես՝ 1851 թ. իրանահայերի թիվը կազմել է մոտ 20 հազար, 1890 թ.՝ 80 հազար[5], 1979 թ.՝ 200 հազար[6], 2003 թ.՝ 80 հազար[7], ներկայումս՝ շուրջ 50 հազար[8]: Հատկանշական է, որ մինչև Հայոց ցեղասպանությունը, հայրենիքից դուրս ապրող հայության թիվը (չհաշված Ռուսական և Օսմանյան կայսրությունների հայությունը) հասնում էր մոտ 200 հազարի, որից 100 հազարը բնակվում էր Իրանում, իսկ մնացածը՝ աշխարհի տարբեր երկրներում[9]:

Ժողովրդագրական իրավիճակը Իրանի հայ համայնքում անհանգստացնող է հիմնականում երեք ուղղություններով. ա/ մեծանում է արտագաղթողների թիվը, բ/ գրանցվում է ծնելիության փոքր թիվ, գ/ փակվում են դպրոցներ:

Իրանի հայ համայնքին հուզող արդի խնդիրները առնչվում են տարածաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական ընդհանուր մթնոլորտի թելադրած գերխնդիրների հետ, որոնք իրենց արտացոլումն են գտնում համայնքի առօրյա կյանքի տարբեր ոլորտներում[10]: 2001 թ. սեպտեմբերի 11-ի Նյու Յորքի ահաբեկչությունը նոր լարվածություն հաղորդեց տարածաշրջանային զարգացումներին. զգալիորեն մեծացավ լարվածությունն իրանա-իսրայելյան, իրանա-ամերիկյան հարաբերություններում[11]:

---

4 http://www.archivioradiovaticana.va/storico/2013/05/18/%D5%AB%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB_%D6%84%D6%80%D5%AB%D5%BD%D5%BF%D5%B8%D5%B6%D5%A5%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8_%D6%83%D5%B8%D6%84%D6%80%D5%A1%D5%A9%D5%AB%D6%82_%D5%A5%D5%B6/arm-693252 դիտվել է 28.02.2020:

5 **Բադալյան** 2011, 397:

6 **Դալլաքյան** 2004, 194:

7 **Փահլևանյան** 2003, 240:

8 https://armenpress.am/arm/news/777670/irani-60-hazaranoc-haykakan-hamaynqy-ir-kniqn-uni-irani.html դիտվել է 28.02.2020:

9 **Եղիազարյան** 2017, 121:

10 **Բայբուրդյան** 2013, 12:

11 **Վերանյան** 2016, 165:

2018 թ. նոյեմբերի 3-ին ԱՄՆ նախագահ Դ. Թրամփը վերականգնեց Իրանի դեմ պատժամիջոցները[12]: Ակնհայտ է, որ դրանց[13] միջոցով Արևմուտքը նպատակ է դրել կիրառել նոր ճնշումներ, ինչը ըստ նրանց հաշվարկների, կհանգեցնի Իրանի ժողովրդի՝ սեփական իշխանության դեմ ընդվզումների: Սակայն այսպես կոչված ժողովրդական ընդվզումը զանգվածային կերպով տեղի չունեցավ, թեև առանձին քաղաքներում նկատվեցին մասնավոր դեպքեր:

Ըստ էության հայությունն այս երկրում ապրում է արտակարգ իրավիճակներով պայմանավորված գործընթացների ազդեցության ներքո, եթե հաշվի առնենք, որ դեռևս մոտ ապագայում փոքր է նշված պետությունների միջև բնականոն հարաբերություններ հաստատելու հավանականությունը: Ուստի, համայնքի խնդիրները սերտորեն առնչվում են նաև ՀՀ անվտանգային միջավայրին: Ավելին, հաշվի առնելով Իրանի զբաղեցրած ծանրակշիռ տեղն ու դերը Սիրիայի և Իրաքի հասարակական-քաղաքական կյանքում, ուրվագծվում է նրա անզիջում պայքարը տարածաշրջանում:

Իրանահայ համայնքային գործիչների դիրքորոշումը արտագաղթի հարցում

Տարածաշրջանային վերոնշյալ գործընթացների պայմաններում է իր գործունեությունը ծավալում Իրանի հայ համայնքը: Թեհրանում լույս տեսնող «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր Դերենիկ Մելիքյանի գնահատմամբ՝ հայկական համայնքն արդեն ընտելացել է ներկա պայմաններին, դիմակայում և շարունակում է իր բնականոն կյանքը: Ավելին, Իրանից հայության նոր արտագաղթի վերաբերյալ Մելիքյանը նկատում է. «… *Հիմա արտագաղթի նոր ալիք բարձրանալու համար պատճառներն անցյալի համեմատ պակասել են, և դժվար թե արտագաղթի նոր հոսք սկսի և նկատելի դառնա համայնքում: Այսօր արտագաղթ չլինելու կարևոր պատճառներից մեկն էլ կարելի է համարել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմից ընդունած ներգաղթյալ-*

[12] https://www.abc.net.au/news/2018-11-03/trump-and-iran-sanctions/10462528 դիտվել է 28.02.2020:

[13] Իրանը պատժամիջոցների է ենթարկվել նաև 2015 թ.-ին, սակայն, որպես աջակից, այն ժամանակ հանդես էր գալիս Եվրոպան, որն ընդդիմանում էր ԱՄՆ-ի միակողմանի պատժամիջոցներին: Բացի դրանից, կարևոր է Չինաստանի և Ռուսաստանի աջակցությունը, որի պայմաններում ԱՄՆ-ի պատժամիջոցներն ընդդեմ Իրանի հնարավորինս չեզոքացվում են: Այս քաղաքականության հետևանքով թանկանում է արտարժույթը, բազմապատկվում ապրանքների գները, ինչն էլ ազդում է մարդկանց կենսամակարդակի վրա:

ների վերաբերյալ օրենքը, որը սահմանափակում է արտագաղթողների քայլերը»[14]: Դ. Թրամփի ներգաղթի քաղաքականությանը հաջորդեց տնտեսության ազգայնացումը[15]:

Ըստ Թեհրանի Հայոց թեմի թեմական խորհրդի փոխնախագահ Արա Շահնազարյանի՝ 2014 թ.-ին Իրանում հայ համայնքը հաշվվում է 55–60 հազար, որի մեծ մասը՝ շուրջ 45–50 հազարը, կենտրոնացած է մայրաքաղաքում[16]: Նշելի է, որ 2005 թ. Ատրպատականի հայ համայնքում (ներառյալ Թավրիզը) հաշվվում էր մոտ 2000 հայ[17]:

2013 թ. հուլիսի 3-ին ԻԻՀ խորհրդարանի հայազգի պատգամավոր Կարեն Խանլարյանը նշել է, որ հայ համայնքից որոշակի արտագաղթ է նկատվում՝ դեպի ԱՄՆ ու Կանադա: Ըստ նրա՝ Իրանում ապրում է մոտ 60–70 հազար հայ, որոնց մեծ մասը զբաղվում է արհեստներով ու առևտրով[18]:

Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսյանի տվյալներով, Իրանում ապրում է մոտ 70.000–80.000 հայ՝ գլխավորապես չորս քաղաքներում, որից՝ Թեհրանում ապրում է գրեթե 60.000 հայ, Սպահանում՝ մոտ 5000, Թավրիզում՝ ավելի քիչ, իսկ Ուրմիայում՝ մոտ 1200: Թեհրանի Հայոց թեմի մյուս քաղաքներում ապրում են 15-20-ական հայ ընտանիք[19]:

Հայության թվային տարբերությունը տարբեր գործիչների հաշվումներով՝ պայմանավորված է նաև այդ երկրի խորհրդարանում երկու պատգամավոր ունենալու հանգամանքով: Տեղին է նշել, որ դեռևս 1908 թ. հունվարին Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Բագրատ վրդ. Վարդազարյանցը պաշտոնական գրությամբ դիմել է մեջլիսի նախագահին՝ թույլատրելու պարսկահայ ժողովրդին այնտեղ ունենալ երկու պատգամավոր: 1908 թ. մայիսի կեսերից հարցն սկսել էր շրջանառվել մեջլիսում[20]: Պրոֆ. Վ.

---

14 https://aparaj.am/%D5%AB%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B5%D5%B6%D6%84%D5%AB%D6%81-%D5%B6%D5%B8%D6%80-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B2%D5%A9-%D5%B9%D5%AB-%D5%BD%D5%BA/ դիտվել է 28.02.2020:

15 https://www.thebalance.com/donald-trump-immigration-impact-on-economy-4151107 դիտվել է 29.04.2020:

16 https://armenpress.am/arm/news/777670/irani-60-hazaranoc-haykakan-hamaynqy-ir-kniqn-uni-irani.html դիտվել է 28.02.2020:

17 **Բայբուրդյան** 2013, 37:

18 https://armenpress.am/arm/news/724867/ դիտվել է 13.03.2020:

19 http://www.tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1158-2017062003 դիտվել է 02.03.20:

20 **Սիմոնյան** 2017, 167:

Բայբուրդյանը գրում է, որ Իրանի խորհրդարանում ներկայացուցիչներ ունենալու իրավունքը իրանահայերը ստացել են 1905–1911 թթ. իրանական հեղափոխության ժամանակ[21]:

Փաստորեն, շուրջ մեկ դար իրանական խորհրդարանում հայության ներկայության քաղաքական մշակույթը որոշակիորեն պայմանավորված է եղել նաև այդ երկրում հայության մեծ թվով լինելու փաստով և ավանդույթի ուժը հիմքեր է տալիս նրանց Իսլամական խորհրդարանում ունենալ երկու պատգամավոր: Նկատենք, որ Իրանի կրոնական փոքրամասնությունները՝ հայերը, ասորիները, հրեաները և զրադաշտականները միասին վերցրած զբաղեցնում են 5 տեղ, որից երկուսը պատկանում է հայերին:

Հիրավի, արտագաղթը վնասում է համայնքի կենսագործունեությանը: Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին այդ երևույթը փոքր-ինչ նվազման միտում ունի, 2000-ական թթ. սկզբին գրանցված տվյալները դեռևս ակնառու են:

Իրանի հայ համայնքային կյանքն իր վրա կրում է սիրիական իրադարձությունների ազդեցության կնիքը, քանի որ Իրանը, առավել քան տարածաշրջանի որևէ այլ երկիր, ներքաշված է այդ իրադարձությունների մեջ: Այդ առումով իրանցիներն իրենց սիրիացիներին բախտակից են համարում, իսկ իրանահայերը՝ սիրիահայերին[22]:

Հայերի արտագաղթին նպաստող գործոններից մեկն էլ այն է, որ հեռացողներն ազգականներ ունեն շատ երկրներում: Բացի այդ, Իրանում գործունեություն է ծավալել «Հայազ» կոչվող հրեական կազմակերպությունը: Յուրաքանչյուր անձից արտագաղթը դյուրին և առանց թղթաբանական քաշքշուկների կազմակերպելու համար, այդ կազմակերպությունը գանձում է 5000 ԱՄՆ դոլար, ընդ որում գումարն արտասահմանում հետ վերադարձնելու պայմանով: Չնայած կազմակերպության խարդախ լինելու մեծ հավանականությանը, այն Իրանում փաստորեն գործում է անարգել: Կան նաև տեսակետներ, որ դա տարածաշրջանի հայաթափման ծրագիր է: Ուշագրավն այն է, որ «Հայազ»-ի ծրագիրը տարածվում է միայն կրոնական փոքրամասնությունների վրա, այսինքն՝ մահմեդականները ներգրավված չեն դրա մեջ[23]:

Ըստ իրանահայ որոշ գործիչների՝ կրոնական փոքրամասնությունների հետ կապված թեմաները դեռևս շարունակվում են դիտարկվել երկրի պե-

---

[21] **Բայբուրդյան** 1999, 309:

[22] **Բայբուրդյան** 2013, 39:

[23] **Բայբուրդյան** 2013, 40:

տանվտանգության համար բարձր ռիսկայնության համատեքստում՝ «*չկա համայնք, չկա և հնարավոր խնդիրը*» կանխարգել բանաձևով: Մյուս կողմից կրոնական փոքրամասնությունների խնդիրները իր հոգածության առարկան դարձնելով՝ իրանական պետությունը միաժամանակ փորձում է կանոնակարգումների միջոցով վերահսկելի և կանխատեսելի դարձնել տարադավան էթնիկ միավորներին՝ որպես արտերկրի կողմից հնարավոր միջամտության լծակների[24]:

2010 թ. Թեհրանի Հայոց թեմի պատգամավորական ժողովի և Իրան-Հայաստան բարեկամության միության վարչության անդամ Ռուբեն Սարդարյանը հաստատեց, որ «Հայազ» կազմակերպության կենտրոնը գտնվում է ԱՄՆ-ում: Իրանում բնակվող փոքրամասնությունները 3000 դոլարով դրան անդամագրվելուց հետո մեկնում են Ավստրիա, հետ ստանում վճարած գումարն ու դյուրին պայմաններով մեկնում ԱՄՆ[25]:

Փաստորեն, կարելի է արձանագրել, որ այդ կազմակերպությունը հավաքագրել է միջինը 3000–5000 դոլար, և ինչ-որ տեղ սակարկման մեխանիզմ է կիրառել:

Տ. Սեպուհ արք. Սարգսյանի համոզմամբ արտագաղթի հարցում կա միտում, եթե հաշվի է առնվում գաղթողների՝ այդ երկրի պայմաններում համեմատաբար բարեկեցիկ սոցիալական կարգավիճակը: *«Այո, համարում եմ, որ միտումնաւոր է արւում: Որովհետեւ մեր գաղութի զաւակներից շատ-շատերը, ովքեր հեռացել են, ունէին տուն-տեղ, գործարան կամ համալսարանի դասախօսներ էին: Սա ոչ մի կերպ չի բացատրւում: Բացի միայն՝ մէկը միւսի հետեւից գնալու սովորութիւնից»*[26]:

Համայնքային գործիչների վերոնշյալ նկատառումները և հրապարակի վրա եղած այլ նյութերը հիմք են տալիս եզրակացնելու, որ եթե 2000-ական թթ. Իրանում հայությանը թիվը կազմել է 80.000, ապա այսօր այն նվազել է մինչև 50.000:

Արտագաղթի հետևանքով սոցիալապես ապահովված 25.000 (որոշ տվյալներով՝ մինչև 30.000) մարդով նվազել է համայնքի թիվը: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ վերջին տասնամյակում արտագաղթի հետևան-

---

24 **Փոլադյան** Իրանի կրոնական փոքրամասնություններ, https://www.lragir.am/2010/03/27/33471/ դիտվել է 22.03.2020:

25 http://www.aaeurop.com/?p=3606 դիտվել է 10.03.2020:

26 http://www.tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1158-2017062003 դիտվել է 02.03.2020:

քով Իրանի հայ համանքը նվազել է մոտ 30%-ով: Անկասկած, դա մեծ թիվ է, եթե հաշվի առնենք այն կարևոր փաստը, որ այդ տոկոսային կազմի մեջ զգալի թիվ են կազմում ուսանելու նպատակով արտերկիր մեկնած երիտասարդները և դպրոցահասակ երեխաները: Ահա թե ինչու համայնքում նկատվում է դպրոցների քանակի որոշակի նվազում[27]: Ըստ էության վերարտադրողական տարիքի բնակչության արտահոսքը զգալիորեն թուլացրել է համայնքը:

2014 թ. հոկտեմբերի 20-ին՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ, Իրան այցելած Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը կոչ է ուղղել Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի բակում հավաքված հազարավոր հայորդիներին: Անդրադառնալով արտագաղթի մտահոգիչ երևույթին՝ նա շեշտել է Իրանին ամուր կառչելու հրամայականը. «*Բանաստեղծին բառերով խնդրելու պէս կը պահանջեմ ու պահանջելու պէս կը խնդրեմ Իրանի մեր ժողովուրդի սիրելի զաւակներէն: Մի՛ հեռանաք Նոր Ջուղայէն, Շահրնշահրէն, Թեհրանէն, Թաւրիզէն եւ Ուրմիայէն: Ձեր պապերը ծով զոհողութեամբ այս գաղութները կազմակերպեցին, եկեղեցի ու դպրոց շինեցին, մշակոյթ ստեղծեցին ու պահեցին: Դուք կոչուած էք շարունակելու անոնց նուիրական գործը: Իսկ եթէ ոմանք ինչ-ինչ պատճառներով պարտաւորուած կ'ըլլան հեռանալու այս երկրէն, անոնք միայն մէկ հասցէ պէտք է ունենան՝ Հայաստան, միայն Հայաստան…*»[28]:

Կարևոր է նկատի ունենալ, որ իսլամական միջավայրում հայ համայնքն իր դավանանքը և դիմագիծը պահպանում է դպրոցների միջոցով: Թեհրանում գործում է 16 դպրոց և 4 մանկապարտեզ[29]: Դրանք պատկանում են համայնքին և առաջնորդվում են ուսուցման պետական ծրագրով: Սակայն զուգահեռ իրականացվում են հայկական ծրագրերը: Բացի դրանից, պետությունն ինքն է համայնքին ուսուցիչներ տրամադրում:

Ըստ Թեհրանի Հայոց թեմի կանոնադրության նախաբանի Ա. կետի՝ Իրանի հիմնական և քաղաքացիական օրենքների համաձայն, իրանահայությունը հետևում է երկրի օրենքներին և կրոնական փոքրամասնություն ճանաչվելով՝ ունի կրոնի ազատության, կրոնի, լեզվի և ազգային սովորույթների ուսուցման, խորհրդարանում երկու ներկայացուցիչ ունենալու իրավունք: Իսկ մասնավոր խնդիրներում հետևում է իր կրոնի ու դավանանքի օրենքներին ու

---

[27] https://news.am/arm/news/24342.html դիտվել է 20.03.2020:

[28] «Հասկ» 2014, հոկտեմբեր, 957–959:

[29] http://www.tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1158-2017062003 դիտվել է 02.03.2020:

ազգային սովորույթներին, որոնց հիման վրա վարում է իր եկեղեցական, կրոնական ու կրթական գործերը՝ համապատասխան ժողովների և մարմինների միջոցով[30]:

Քննարկելով Իրանի հայ համայնքի թվային պատկերը՝ որոշակի նշանակություն ունի այդ թվում իր ուրույն տեղը զբաղեցնող, խիստ փոքրաթիվ, սակայն իր գործունեությունը ծավալող Իրանի Հայ Կաթողիկե համայնքը, որն անդամներ ունի Սպահան և Շիրազ քաղաքներում: Հայ կաթողիկեներին արտոնում են հիմնել դպրոցներ, միաբանություններ, տպարաններ և տպագիր հանդեսներ: Արտագաղթի պայմաններում բազմապատիկ նվազել է նաև համայնքը: 1990–2000 թթ. այն կազմել է 2200, իսկ 2005–2008 թթ. Վատիկանի հրապարակած վիճակագրության համաձայն՝ 10 հազար մարդ: Սակայն վերջին թիվը ուռճացված է, չնայած այն կարելի է մեկնաբանել որպես Իրաքի վերջին պատերազմի հետևանք: Այդուհանդերձ, դժվար է հավատալ, որ Իրաքի Հայ Կաթողիկե համայնքը, որի անդամների թիվը միշտ էլ համարվել է 2000, արտագաղթել է միայն Իրանի ուղղությամբ[31]: Այլ կերպ ասած՝ Վատիկանը հավակնում է կաթողիկե համայնքի հետևորդների թիվը մեծացված ներկայացնելու նպատակով առավել ամրապնդել իր դիրքերն Իրանի կրոնական փոքրամասնությունների խճանկարում:

Վերջին տարիներին Իրանի Հայ Կաթողիկե համայնքի առանձին ներկայացուցիչներ մշտական տեղափոխվել են Հայաստան և ձեռք բերելով բնակարաններ հիմնավորվել Հայրենիքում: Սակայն հայ կաթոլիկների շրջանում ևս առկա է արտագաղթ այլ երկրներ, հատկապես ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և այլն[32]: Ինչ վերաբերում է Իրանում Հայ Ավետարանական եկեղեցուն, ապա նրա հետևորդների թիվը կազմում է 300–350 հոգի[33]:

Ժողովրդագրական խնդիրը դարձել է առաջնահերթ Իրանի հայ համայնքում, որի մասին վկայում են և՛ գիտական շրջանակները, և՛ համայնքային գործիչների հրապարակումները: Մյուս կողմից նշելի է, որ արագ փոփոխվող արդի աշխարհում արտագաղթած բազմաթիվ իրանահայեր եվրոպական կամ արևմտյան այլ երկրներում շարունակում են զբաղվել համայնքային կյանքով՝ ինտեգրվելով տվյալ երկրում արդեն իսկ առկա հայկական կառույցներին, իսկ դրանց բացակայության դեպքում իրենք են նախաձեռնում և

---

[30] http://tehranprelacy.com/kanonagrutiun դիտվել է 28.03.2020:

[31] **Բայբուրդյան** 2013, 63:

[32] **Բայբուրդյան** 2013, 65:

[33] **Բայբուրդյան** 2013, 186:

ստեղծում այդպիսիք: Այլ խոսքով՝ օտար միջավայրում շարունակում են պահպանել իրենց ինքնությունը:

Եզրակացություններ

Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանում տեղի ունեցող ռազմաքաղաքական զարգացումները ազդում են Իրանի հայ համայնքի կենսագործունեության վրա: Իրան-իրաքյան պատերազմը, այնուհետև Իրանի նկատմամբ տասնամյակներ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև վերջին տարիներին քաղաքացիական կռիվները Սիրիայում սոցիալ-տնտեսական մեծ վնաս են հասցրել այդ երկրի բնակչության մի մասը կազմող հայ համայնքին: Միայն արտագաղթի հետևանքով համայնքը նվազել է ավելի քան երեք անգամ:

Արտագաղթի շարունակումը կարող է թուլացնել նաև ՀՀ դիրքերը սահմանակից և բարեկամ Իրանում: Հաշվի առնելով այդ երկրում առկա միլիոնավոր թյուրքախոս զանգվածի առկայությունը՝ նրանց գործողություններին իր ներկայությամբ դեռևս հակազդում է հայ համայնքն իր հոգևոր և աշխարհիկ կառույցների շնորհիվ: Ուստի, համայնքի պահպանումը բխում է նաև ՀՀ անվտանգային շահերից:

Այսօր էլ Իրանի արտաքին քաղաքականության սրացման պայմաններում հայության հեռանկարը մշուշոտ է: Ահա թե ինչու մեծանում են արտագաղթի տեմպերը և տրամադրությունները: Մյուս կողմից նշելի է, որ ԱՄՆ ներգաղթի քաղաքականությամբ պայմանավորված առաջիկայում որոշակիորեն կնվազի հայության հոսքն Իրանից, որը ժամանակավոր բնույթ կունենա:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բայբուրդյան Վ. 2013, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, «Լուսակն», 211 էջ:

Բայբուրդյան Վ. 2005, Իրանի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 784 էջ:

Բայբուրդյան Վ. 1999, Իրանն այսօր (տեղեկատու), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 336 էջ:

Բադալյան Գ. 2011, Իրան. Հանրագիտարան, Երևան, Հեղինակային հրատ., 880 էջ:

Դալլաքյան Կ. 2004, Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, «Զանգակ-97», 288 էջ:

Եղիազարյան Ա. և ուրիշներ 2017, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան, ԵՊՀ հրատ., 244 էջ:

Սիմոնյան Հ. 2017, 1905–1912 թթ. պարսկական հեղափոխությունը և հայերը, Երևան, ԵՊՀ հրատ., 606 էջ:

Վերանյան Կ. 2016, Իսրայելի քաղաքականության վերաբերյալ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 224 էջ:

Փահլևանյան Հ. 2003, Իրան, Հայ Սփյուռք հանրագիտարան, Խմբ.՝ Հովհ. Այվազյան, Ա. Սարգսյան և ուրիշ., Երևան, «Հայկական հանրագիտարան», 235–267 էջ:

Արամ Ա. Կաթողիկոս 2014, «Նոր Ջուղան հաւատարիմ պէտք է գտնուի իր անցեալին, որպէսզի վերանորոգ հաւատքով կերտէ իր ապագան», «Հասկ» պաշտօնական ամսագիր Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, ՁԳ. Տարի 2014, հոկտեմբեր, էջ 957–959:

Իրանի քրիստոնեաները փոքրաթիւ են..., 18.05.2013, http://www.archivioradiovaticana.va/storico/2013/05/18/%D5%AB%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB_%D6%84%D6%80%D5%AB%D5%BD%D5%BF%D5%B8%D5%B6%D5%A5%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8_%D6%83%D5%B8%D6%84%D6%80%D5%A1%D5%A9%D5%AB%D6%82_%D5%A5%D5%B6/arm-693252 դիտվել է 28.02.2020:

Իրանի 60 **հազարանոց հայկական համայնքը իր կնիքն ունի Իրանի կյանքում**, 25.09.2014, https://armenpress.am/arm/news/777670/irani-60-hazaranoc-haykakan-hamaynqy-ir-kniqn-uni-irani.html դիտվել է 28.02.2020:

“Donald Trump Restores Iran Sanctions, Hitting Oil Exports Over its Support for Militant Groups”. ABC News. 2018-11-03. Retrieved 2019-01-31. https://www.abc.net.au/news/2018-11-03/trump-and-iran-sanctions/10462528 դիտվել է 28.02.2020:

Իրանահայ համայնքից նոր արտագաղթ չի սպասվում. իրանահայ գործիչ, 24.11.2018, https://aparaj.am/%D5%AB%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B5%D5%B6%D6%84%D5%AB%D6%81-%D5%B6%D5%B8%D6%80-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B2%D5% A9-%D5%B9%D5%AB-%D5%BD%D5%BA/ դիտվել է 28.02.2020:

Իրանի 60 **հազարանոց հայկական համայնքը իր կնիքն ունի Իրանի կյանքում**, 25.09.2014, https://armenpress.am/arm/news/777670/irani-60-hazaranoc-haykakan-hamaynqy-ir-kniqn-uni-irani.html դիտվել է 28.02.2020:

Իրանահայերը Ռոհանիից ակնկալիքներ ունեն Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում. ԻԻՀ խորհրդարանի հայազգի պատգամավոր, 03.07.2013, https://armenpress.am/arm/news/724867/ դիտվել է 13.03.2020:

Իրանահայ համայնքը Հայաստանի հայելին է Թեհրանում, 06.11.2010, http://www.aaeurop.com/?p=3606 դիտվել է 10.03.2020:

Սրբազան Հօր Հարցազրոյցը Հայաստանի «Փաստ» Օրաթերթի հետ, 22.06.2017, http://www.tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1158-2017062003 դիտվել է 02.03.2020:

Թեհրանում փակվում են հայկական դպրոցները, https://news.am/arm/news/24342.html դիտվել է 20.03.2020:

Կանոնագրութիւն Թեհրանի Հայոց Թեմի, http://tehranprelacy.com/kanonagrutiun դիտվել է 28.03.2020:

Վարդանյան Թ., Իրանահայ համայնք. ճամպրուկային տրամադրություններ, 21.06.2007, http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2376 դիտվել է 28.03.2020:

Փոլադյան Ա., Իրանի կրոնական փոքրամասնությունններ, https://www.lragir.am/2010/03/27/33471/ դիտվել է 22.03.2020:

Kimberly Amadeo, Donald Trump on Immigration, Pros and Cons of Donald Trump's Immigration Policies, Updated April 25, 2020, https://www.thebalance.com/donald-trump-immigration-impact-on-economy-4151107 դիտվել է 29.04.2020:

Iran Population (LIVE), retrieving data... https://www.worldometers.info/world-population/iran-population/#:~:text=The%20current%20population%20of%20the,year%20according%20to%20UN%20data. դիտվել է 28.02.2020:

ВОПРОСЫ ДЕМОГРАФИИ ИРАНСКИХ АРМЯН В 2000-Х ГОДАХ

МКРТЧЯН К.

Резюме

***Ключевые слова*:** армянская община Ирана, демографические процессы, эмиграция, христианские общины, региональные события, Армянская епархия Тегерана, общинные деятели.

Военно-политические события, имевшие место на Ближнем Востоке, отразились на жизнедеятельности армянской общины в Иране. Ирано-иракская война, затем санкции в отношении Ирана на протяжении ряда десятилетий нанесли значительный ущерб армянской общине, составляющей часть населения страны. Эмиграционные процессы привели к сокращению численности населения Ирана более чем в три раза.

На сегодняшний день в связи с эскалацией внешней политики Ирана перспективы для армян весьма неблагоприятны. Именно поэтому растет уровень эмиграции. В то же время следует отметить, что из-за эмиграционной политики США поток армян-эмигрантов из Ирана несколько сократится.

THE DEMOGRAPHIC ISSUES OF IRANIAN ARMENIANS IN THE 2000S

MKRTCHYAN K.

Summary

Key words: the Armenian community of Iran, demographic processes, emigration, Christian communities, regional developments, the Armenian Diocese of Tehran, community leaders.

The military-political developments in the Middle East are affecting the life of the Armenian community in Iran. The Iran-Iraq war and the subsequent decades-long sanctions against Iran have caused great socio-economic damage to the Armenian community that is part of the country's population. Emigration alone has reduced the community more than threefold.

Even today, with the escalation of Iran's foreign policy, the prospects for Armenians are bleak. That is why emigration rates and moods are rising. On the other hand, it is noteworthy that due to the US immigration policy, the flow of Armenians from Iran will decrease to some extent in the near future.

NAREK MARTIROSYAN*
post-graduate researcher
Institute of History NAS
Martino-1988@mail.ru

THE ASHRAFS IN THE OTTOMAN PARLIAMENT

Key words: Ottoman parliament, Midhat's constitution, election law, census bill, dynastic aristocracy, petition, Armenian deputies.

Introduction

The Ottoman Empire has paved its unique way in transforming itself into a constitutional state. The attempt was recorded in 1876. The establishment of the Ottoman parliament and the constitution authored by Midhat pasha were the cornerstones of this historical event. Unfortunately, this parliament was short-lived. Nevertheless, Midhat pasha's work was not only preserved but also returned to the historical arena, for this time it had been reformed and refined in terms of its content and vitality. In the history of the Ottoman Empire it is known as "the second constitutional stage".

The first parliament convocation – "the second constitutional stage" was characterized by its multi-national, multi-religious, and more importantly by its multi-layered social classes. No matter how much the Armenian and Turkish revolutionaries advocated revalidation of constitution and formation of the parliament, after the elections the majority of the parliament consisted more of ashrafs rather than revolutionaries. These retrograde powers of the Ottoman Empire entered the parliament due to the election rig – falsification that was carried out with the ittihat's full awareness and permission.

Constitution and Election Law as the Basis for the Formation of the Parliament

In 1907–1908 the sole goal of the Young Turks was to overthrow Sultan Abdul Hamid's government and restore the constitutional law. To achieve this goal a revolution or a coup would be made in the aftermath of which parliamentary

* *Հոդվածը ներկայացվել է 13.09.19, գրախոսվել է 27.09.20, ընդունվել է տպագրության 13.04.21:*

elections would be held and a parliament formed. The parliamentary elections were to be held in accordance with the 1876 election law as well as with the election amendments introduced in the pre-election program of Young Turks.

According to the 1876 election law, only male representatives without any religious segregation were eligible to participate in the elections. Each 50000 Ottoman resident had one deputy represented in the parliament. However, in case of 75000 inhabitants it was permissible to elect a second deputy. The elections were meant to be a two-stage system "by secret ballot" and "fair"[1]. There existed two categories of voters. The voters of the first category elected "secretly" though not the deputy but the second-category electors. The latter respectively voted for a deputy or deputies. The candidate of a committee, party or alliance of parties who would gain more second-category electors would be elected as a deputy of the Ottoman parliament.

The 1876 election law was based on such privileged categories as property, residence, education and the requirement to have a command of the Turkish language. The election law in question only granted rights to those who paid land and income taxes to the state i.e. the privilege of property was acknowledged only. In the election campaign publicized in September, 1908 the Young Turks maintained the validity of this law only for the first-category voters, while they expanded the scope of second-category voters, including those individuals who paid taxes for cattle farming as well. The election campaign prioritized the enforcement of the new election law as well as the people's right to elect the two thirds of the Senate, endowing the deputies with legislative authority, allotting Parliament seats to the ethnic minorities[2]. If the previous bill banned the political parties to nominate candidates, then since 1908 the electoral campaign was mainly between the committees and political parties or their alliances.

Hence, during the election campaign of 1908 the Ittihat members made some amendments both in the election law and in the respective constitutional bills. As far as the location of electing and being elected was concerned, it did not undergo any changes, any candidate could be elected in any region, however it was considered that he represented the whole population of the Ottoman Empire in the parliament. On the whole, it can be assumed that the electoral system of the

[1] **Хнкоян** 1990, 46.
[2] **Тунян** 2004, 63–64.

Ottoman Empire was based on the principle of proportional representation. The main powers of the Ottoman parliament, consisting of retrograde Turkish, Kurdish clergy and feudal noblemen (ashrafs) considered such a situation in the Ottoman state as utterly unacceptable. Those were basically the people who throughout the years terrorized, abducted, robbed and expropriated the wretched and poor population of the rural and urban regions. The ashrafs opposed any political or ideological progress. Any progressive ideology or movement like religious freedom, equality between people, a nation's right to self-determination, the supremacy of law and justice, an individual's right to free mobility were perceived by ashrafs as dangerous phenomena invented by either the Armenians or Europeans. Thus, those ideas were to be rooted out then and there. The majority of ashrafs saw the Armenians as the initiators of establishing the constitutional law. Therefore, the ashrafs' rebellions which were very often accompanied by violence and massacres perpetrated against Armenians should be viewed in this line of logic.

The 1908 parliament consisted of 275 deputies of which 142 were Turks and Kurds, 60 Arabs, 25 Albanians, 23 Greeks, 12 Armenians, 5 Jews, 4 Bulgarians, 3 Serbs, and 1 valakh[3]. It should be noted that none of the Armenian, Greek, Bulgarian, Jewish, or Serbian deputies were ashrafs. The Kurds and Turks were mainly ashrafs. As for the committees and political parties, 160 represented the committee "ittihat ve terakki", 20–25 – the Ahrar political party, 4 were from the Armenian Revolutionary Federation, 2 from the Bulgarian Constitutional Clubs, 1 was from the Social Democrat Hunchakian party and 70 did not have allegiance to any political party[4]. The aforementioned ashrafs mainly belonged to the Ittihat or were independent or deputies with no party affiliation. On March 31, 1909 after the coup organized to overthrow sultan Abdul Hamid's reign the situation changed. The coup against Abdul Hamid can be regarded as the ashrafs' first attempt of rebellion. A great number of ashrafs cooperating with the leaders of the coup, as well as others who were terrified by Sultan's retribution immediately joined the Ahrar party that was under the sultan's protection. Some of them formed new political parties, while a few of them merely left the Ittihat and remained independent. As a result, a different political situation developed in the

[3] Kuran 1956, 477.
[4] **Համբարյան** 1979, 14:

parliament, where the Ittihat was represented by 85–90 deputies, 25–30 deputies were from the newly formed clerical party "Jemiet Ilmiet", while 55–60 deputies belonged to the Ahrar and 90-100[5] had no political affiliation whatsoever. After the failure of the coup against Abdul Hamid, the number of Ittihat members naturally increased up to 125-130, while Ahrar consisting of a great many ashrafs formed an alliance with a range of political powers, thus transforming into a new political party named Freedom and Accord (Hürriyet ve İtilâf Firkasi).

It was obvious that these powers having "taken shelter" in major parliamentary parties would eventually fight for victory in the upcoming elections as this would secure the protection of their "petty" personal interests and their reproduction ensured by law. In May 1910, they were given such an opportunity.

The Rebellion of Ashrafs in the Parliament

May of 1910 is a notable phase in terms of establishing constitutional law in the Ottoman Empire, as during those days the parliament discussed and passed a range of greatly significant bills. Nevertheless, of special interest for us is the discussion of the law on census, specifically its Article 38. The content of the law was closely related to the electoral law, which was drafted and endorsed in 1876, before the enactment of the constitution on which the elections were held[6]. The election law consisted of seven articles, which were included in the charter on "The Formation and Establishment of the Senate and Parliament Chamber".

Article 38 similarly endorsed the electoral laws of 1876 and 1908, thus it was not random at all that the local Turkish and Kurdish seedy noblemen rebelled against this reform.

On May 11, 1910 the ashrafs of the Ottoman parliament took their colleagues by surprise. The first 37 articles of the law were discussed and passed without any objections. However, when Article 38, in fact the last one, was being discussed, the majority of the parliamentarians displayed such intolerance that many politicians were taken aback. The insurgence of the ashrafs was first reflected in a petition. In opposition to this article, they introduced a petition which suggested that in case of changing his residence the citizen had a right to vote or be elected only in 5 years' time. Instead, he would preserve his rights in his previous residence. One hundred and fifty-six deputies signed under the petition. In other

---

[5] **Փափազյան** 1952, 93:

[6] **Selda Kiliç** 2011, 28.

words, they represented the majority, and this was accounted for by the fact that the bill was not based on any ideology or public interest. The majority of the ashraf deputies (who belonged to the seedy nobility) were convinced that the bill suited their personal interests. Hence, the given majority included deputies from nearly all political parties i.e. from moderate liberals, people's party and naturally from the Ittihat[7]. In fact, the ashrafs were tools for the highest echelons of the Union and Progress to limit the citizens' electoral rights. It is common knowledge that after the coup of 1908 the Ittihat did not want to come to power directly[8]. Young Turks preferred to become a majority in the parliament and in this way counterbalance the government[9]. The use of ashrafs in the introduction and enactment of this infamous law can be explicated by this political strategy.

A deputy from Kumulgina (Komotine) Ismail Hagg bey, who was from the Ittihat, introduced the petition[10]. He was an educated man with a good command of law, and always supported the ashrafs. He was also the non-official speaker of the Ittihat. When it was necessary to make pressure on the ethnic minorities or on the intellectuals, the "heavy artillery" – Ismail Hagg bey was used.

Parliament Reaction

All Armenian deputies, irrespective of their party affiliation, along with many Greeks and some pro-center powers from the Progress and Union opposed the bill[11]. Since the initiators of the petition represented the overwhelming majority, they allowed the rest to speak their mind openly. However, when the opponents started to affect even those who had authored the bill the latter started to protest, and Grigor Zohrap had to intervene: "If you do not respect the freedom of speech here, what would you do to the people who voted for you, what would keep you back from bringing disasters on your own country?"[12]

In his speech, Jahid bey mentioned that the enactment of the census bill, being an amendment to the functioning law, would be a huge step towards separatism. He added that true patriots were self-reliant, consequently they were

---

[7] «Ազատամարտ», 12.05.1910:

[8] «Ժամանակ», 21.02.1909:

[9] **Մանդելշտամ** 1919, 32:

[10] Meclisi Mebusan Zabit Ceridesi, 11 Mayis 1326, Doksanaltinciinikad, Devre 1, Cilt 5, Ictima Senesi 2.

[11] «Բյուզանդիոն», 12.05.1910:

[12] «Ազատամարտ», 12.05.1910:

to reject the new bill which restricted the people's right to election. In his words, patriots should not be afraid of having rivals as the state benefitted from such rivalry. During Jahid bey's speech the noise was so great that the president of the parliament announced a two-hour adjournment. After the adjournment Khoneos effendi took the floor and backed Jahid Bey's viewpoint. Hasan effendi a deputy from Sinop tried to dissuade the advocates of the bill from making that proposal. Then Zohrap spoke, pointing out that the minority of the deputies were naturally expected to propose such a bill, as they might fear that the majority of the deputies, having formed a government would violate their rights in the next elections, but the fact that the majority had also signed the petition appeared to be illogical[13].

Ismail Hagg bey speaking on the legal basis of the introduced petition emphasized the importance of civil rights, pointing out that a citizen belonged to his community thus, as a deputy he had to be elected there, serving for the community's benefit[14]. Referring to Ismail Hagg bey's speech, Zohrap characterized it as absurd, while the introduced bill as illegal.

Ismail Hagg bey's substantiation was erroneous, since his claim to the civil law contradicted both the Ottoman constitution and the electoral law. In cases like this the constitution was prioritized. Undoubtedly, Ismail Hagg bey having a good command of jurisprudence and being well-aware of such a regulation tried to mislead all the other parliamentarians.

Soon the backers of the bill made such an unbearable noise that Zohrap was forced to leave the rostrum. The chairman of the Union and Progress party Khalil bey who found himself in a quandary called on the opponents to the bill to demand that the government express its position over the matter. Mehmet Talaat bey announced that he could not give an immediate response, as he had not discussed the issue with other ministers. Thus, he proposed that the discussion of the matter be delayed. The authors of the article suggested that the introduced bills should be read out and put to the vote. The opponents of the article put forward a new bill, adhering to the postponement introduced by the government. Meanwhile, two deputies rescinded their signatures on the article. The parliamentary majority – the ashrafs seemed to be losing control of events .Ilias

[13] «Բյուզանդիոն», 12.05.1910:

[14] See Meclisi Mebusan Zabit Ceridesi, ibid.

Sami the Kurdish ashraf from Mush also known as a notorious slaughterer and Armenophob expressed his surprise at the postponement of passing the petition supported by 156 deputies. Then he appealed to his ashraf colleagues not to rescind their signatures[15]. Ilias firstly declared Midhat's constitution as faulty, and then accused his Ittihat colleagues of not clarifying the article while making the 1908 amendments.

Hovhannes Serenkulyan also spoke on the issue. He basically refuted the arguments proposed by Ismail Hagg bey and Ilias Sam, hoping that even if the parliamentary commission passed it, the Senate (the upper chamber) would veto this infamous bill[16].

Brawl and Mutual Understanding

During the deputies' speeches, the government managed to introduce a new petition to the President of the Parliament. The government's petition demanded that ashrafs postpone the discussion of the petition.

The two bills were read out, then a controversy emerged over which of the bills should be put to the vote first. According to the law, the bill on the postponement of the discussion was to be put to the vote first. However, the authors of the bill persistently ignored this constitutional requirement, as a result their opponents attacked them and a brawl started. The President announced that according to the requirement of the law, the government's bill had to be put to the vote first. The authors of the article attacked the President and the proponents of the postponement. The Minister of Economics having found shelter within the "human" wall formed by Lutfi Fikr, Mustafa Ali, Zohrap, and Vardges fearlessly fought back[17]. Meanwhile Zayn-el-Apetin effendi and members of the Liberal Peoples' party and Ottoman Liberty party moving around the ballot box collected the votes. Ahmed Riza bey stated that he would consider the vote invalid. Seeing that his words had no impact, he tried to leave. The authors of the article surrounded Ahmed Riza and forcibly made him hold the session. Seeing no way out Ahmed Riza, announced that the session lacked majority, thus it was officially closed. The next day the parliament discussed the controversial article on the census. On May 12, when the parliament was about to put to the vote the bill on

[15] See Meclisi Mebusan Zabit Ceridesi, ibid.

[16] See Meclisi Mebusan Zabit Ceridesi, ibid.

[17] «Բյուզանդիոն» 12.05.1910:

the change of residence, Ismail Hagg bey introduced a new bill according to which, a person who had changed his residence had the right to vote or be elected in three years instead of five. It goes without saying that the bill was approved by the Ittihat government and it was not random at all that it was Ismail Hagg bey who introduced it. Before putting the bill to the vote, the Prime Minister of the Ottoman Empire Hagg pasha took the floor. He stated that the given issue should be dealt with when the code of electoral law was studied. The Prime Minister also noted that the elections were held based on the electoral regulation of 1876, assuring that in two years' time a new electoral law would be enforced. As a result, the President Riza bey put to the vote the bill introduced by Ismail Hagg bey which was passed with 51 votes "against" and 145 "in favor"[18].

Conclusion

Actually this was a movement supported by the ruling party or at least by its highest echelons which was aimed at obstructing or limiting the person' s right to participate in the country's government i.e. his electoral right. In the successive parliamentary elections this bill became the cornerstone due to which the local embezzlers, former officials with a criminal past, tribal chiefs with anti-Armenian views and other waste appeared in the parliament. Choosing ashrafs as its buttress, the ittihat annihilated the supremacy of law in the Ottoman Empire, the preservation of fundamental human rights i.e. a person's right to mobility was breached, thus eliminating any possible prospects of forming a lawful state.

This was ittihat's first step towards the distortion of the Ottoman constitution, which would eventually pave path to the collapse of the empire.

BIBLIOGRAPHY

«Ազատամարտ», 12.05.1910
«Բյուզանդիոն», 12.05.1910
«Բյուզանդիոն», 13.05.1910
«Ժամանակ», 21.02.1909
Համբարյան Ա. 1979, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908–1914), Երևան, 310 էջ:
Մանդելշտամ Ա. 1919, Օսմանյան կայսրության ճակատագիրը. Երիտասարդ թուրքերը պատերազմեն առաջ, Առաջին մաս,Կ.Պոլիս, 128 էջ:

[18] «Բյուզանդիոն» 13.05.1910:

Փափազեան Վ. 1952, Իմ Յուշերը, Բ հատոր, Պէյրութ, 610 էջ:

Тунян В.Г. 2004, Младотурки и армянский вопрос, часть первая, 1908–1912 гг., Ереван, изд-во Музей-институт геноцида армян, 381 с.

Хнкоян Н.С. 1990, Выборы 1912 года В Турции и формирование антимладотурецкого блока, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 7, էջ 44–52:

Kuran A. 1956, Osmanleimparatorluğunda inkilap hareketlerve Milli mücadele. Istambul, sayfa sayisi, 927.

Selda Kiliç, 1876 Meclis-i Mebusani ve seçim hazirliklari, Ankara Üniversitesi, D.T.C. Fakültesi, Tarih Bölümü, Ankaraö OTAM 30, Güz 2011.

Meclisi Mebusan Zabit Ceridesi, 11 Mayis 1326, Doksanaltinci İnikad, Devre 1, Cilt 5, Içtima Senesi 2.

ԷՇՐԱՖՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ն.

Ամփոփում

Բանալի բառեր՝ Օսմանյան խորհրդարան, միդհատյան սահմանադրություն, ընտրական օրենք, մարդահամարի օրենք, ազնվականություն, խնդրագիր, հայ պատգամավորներ:

1908-ի հեղափոխությունից հետո երիտթուրքերը վերականգնեցին Միդհատ փաշայի հեղինակած սահմանադրությունը և կազմավորեցին Օսմանյան խորհրդարանը: Առաջին գումարման խորհրդարանը բազմազգ էր, բազմակրոն և որ ոչ պակաս կարևոր է՝ բազմախավ: Ընտրությունների արդյունքում, այդ նոր խորհրդարանում հայտնվեցին ավելի շատ էշրաֆներ, քան հեղափոխականներ: Օսմանյան պետությունում և խորհրդարանում զգալի ուժ ներկայացնող հետադիմական, կղերաֆեոդալական թուրք և քուրդ տոհմիկ ազնվականությունը (էշրաֆ) ընդդիմանում էր մարդու իրավունքներին առնչվող ցանկացած բարեփոխմանը և սահմանադրական համակարգի հաստատմանը: 1910 թ.-ի մայիսի 10-ին խորհրդարանը քննարկում էր մարդահամարի մասին օրենքը: Ուղղորդվելով իշխող կուսակցության՝ երիտթուրքերի կողմից, էշրաֆները պահանջեցին, որ խորհրդարանը համապատասխանեցնի ընտրական օրենքը իրենց նեղ անձնական շահերին: Իթթիհատը օգտագործելով էշրաֆներին՝ ի չիք էր դարձնում իրավական պետություն ստեղծելու ցանկացած հավանականություն:

ЭШРАФЫ В ОСМАНСКОМ ПАРЛАМЕНТЕ

МАРТИРОСЯН Н.М.

Резюме

Ключевые слова: османский парламент, мидхатовская конституция, закон о выборах, закон о переписи населения, дворянство, петиция, армянские депутаты.

После революции и прихода к власти младотурок в 1908 г. была восстановлена конституция Мидхата паши и был сформирован парламент Османской империи. В результате выборов большинство депутатов в парламенте оказались представителями турецкого и курдского родового дворянства (эшрафы). Эти люди в основном представляли интересы правящего класса Османской империи. Они преследовали цель противостоять развитию конституционной системы, следовательно, выступали против реформ, связанных с правами человека и утверждением конституционной системы в Османской империи. В мае 1910 г. при обсуждении в парламенте закона о переписи населения эшрафы, по настоянию младотурок, потребовали от парламента, чтобы последний при принятии закона о выборах руководствовался их личными интересами. Посредством эшрафов младотурки хотели пресечь любую возможность создания правового государства.

ԱՆԱՀԻՏ ՇԱԳՈՅԱՆ*

Հայցորդ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

anahit.shagoyan@yahoo.com

ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԵՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Թուրքեստանյան գեներալ-նահանգապետություն, հայ վերաբնակներ, Աշխաբադ, հայ վաճառականություն, Մերվ, հայ հոգևորականություն, բարեգործական ընկերություն:

Ներածություն

XIX դարի երկրորդ կեսին Ալեքսանդր 2-րդը ավարտին հասցրեց Թուրքեստանի (Միջին Ասիայի) նվաճումը և արդեն 1867 թ. իրականություն դարձավ Թուրքեստանի գեներալ-նահանգապետության ստեղծումը: Տարածաշրջանը հեշտ կառավարելու նպատակով ստեղծվեց Հատուկ կոմիտե՝ Չինվորական նախարար Դ. Միլյուտինի գլխավորությամբ[1]: Նույն տարում կայսրությունը որդեգրեց տարածաշրջանը կառավարելու սկզբունքային ուղղություն և ապրիլի 23-ին հայտարարվեց «Ժամանակավոր դրություն՝ Թուրքեստանյան գեներալ-նահանգապետության շրջաններում»: Համաձայն դրա, Թուրքեստանի գեներալ-նահանգապետին իրավունք տրվեց նշված հիմքերով՝ ձեռնարկել բոլոր այն միջոցները, որոնք նա օգտակար է համարում տարածաշրջանի կայացման համար»[2]: Ձեռնարկված միջոցառումները ոչ միայն հեշտացրեցին տարածաշրջանի կառավարումը, այլև հնարավորություն տվեցին զարգացնել այն՝ օգտագործելով տեղի բնակչության և կայսրության բնակիչների ներուժը, որից անմասն չմնաց նաև հայությունը:

---

* *Հոդվածը ներկայացվել է 13.09.20, գրախոսվել է 27.09.20, ընդունվել է տպագրության 13.04.21:*

[1] Источниковедение истории канцелярии Туркестанского генерал-губернатора по материалам ревизии сенатора **Палена К.К.,** https://dergipark.org.tr/en/download/article-file/155157.

[2] Источниковедение истории канцелярии Туркестанского генерал-губернатора по материалам ревизии сенатора **Палена К.К.,** https://dergipark.org.tr/en/download/article-file/155157.

Նահանգային իշխանությունները հայ վերաբնակների նկատմամբ ունեին հակասական վերաբերմունք. մի կողմից բարեկամաբար էին վերաբերվում, քանի որ հայերը քրիստոնյա էին, իսկ ռուս կառավարիչները փնտրում էին դաշնակիցներ այդ մահմեդական տարածաշրջանում[3]: Ուստի և զարմանալի չէ, որ հայերը տարածաշրջանի խոշոր քաղաքներում իրենց ձեռքում էին կենտրոնացրել տնտեսական կյանքի կարևոր ոլորտները: Մյուս կողմից՝ նրանք ցանկալի չէին համարում տարածաշրջանի կովկասյան բնակչության հետ հայերի մերձեցումը[4]: Թուրքեստանյան տարածաշրջանի խոշորագույն քաղաքներում (Աշխաբադ, Մերվ, Կոկանդ, Սամարղանդ) բնակություն հաստատած հայությունը զգալի նշանակություն է ունեցել տեղի տնտեսական ու հասարակական կյանքում[5]:

Թուրքեստանյան տարածաշրջանի խոշորագույն քաղաքները

Աշխաբադ: Հայերը Աշխաբադում բնակություն են հաստատել դեռևս 1880-ական թվականներին, և կարճ ժամանակահատվածում իրենց առևտրական շնորհների արդյունքում ներգրավվել են քաղաքի տնտեսական կյանքում: Նրանց ձեռքին էր կենտրոնացված մանուֆակտուրայի մեծագույն մասը: Հայ վաճառականության համար կարևոր էր այն հանգամանքը, որ Աշխաբադում էր գտնվում երկաթուղային կայարանը՝ իր բազմաթիվ պետական և բանկային ծառայողներով և զինվորականներով[6]:

Տեղի հայ վաճառականությունը առևտրական կապեր ուներ Պարսկաստանի հետ: Առավելությունն այն էր, որ Աշխաբադը գտնվում էր ռուս-պարսկական սահմանին մոտ և առևտրականները կարողանում էին Պարսկաստան արտահանել մեծ քանակությամբ մանուֆակտուրային արտադրանք,

---

[3] **Алексанян О.**, Армяне в русском Туркестане: расселение и вклад в развитие края, http://armstudies.asj-oa.am/278/1/98.pdf?fbclid=IwAR3XI4hg0IaDef-EUo36so-9ugWEShcNSAYd1Z8TAUtN55DUmsNb2jxTUd4, էջ 100:

[4] **Григорянц В.,** К истории Армянской церкви в Туркмении (конец XIX – середина XX вв.), http://lraber.asj-oa.am/3402/1/1991-6(8).pdf.

[5] 1897 թ. դրությամբ հայ բնակչությունը տարածաշրջանում կազմել է 4862 մարդ: Նրանց 89%-ը (4317 մարդ) բնակություն են հաստատել քաղաքում, 11%-ը (546 մարդ)՝ գյուղում: 1909 թ. հայ բնակչությունն ավելացավ՝ կազմելով 11,007 մարդ: **Алексанян О.,** Армяне в русском Туркестане: расселение и вклад в развитие края, http://armstudies.asj-oa.am/278/1/98.pdf:

[6] Երկաթուղու կառուցումը և ֆաբրիկագործարանային ձեռնարկությունների ստեղծումը նպաստեց Թուրքեստանում արդյունաբերական հասարակության ձևավորմանը: **Պետրոսյան** 1987, 18:

նավթ, շաքար և այլ ապրանքներ՝ փոխարենը ներմուծելով բամբակ, բուրդ, չոր մրգեղեն և այլն: Փաստացի, Պարսկաստանի հետ ունեցած առևտրական գործը նույնպես գտնվում էր հայերի ձեռքում: Հայության ձեռքին էր կենտրոնացած նաև բամբակի արդյունաբերությունը: Բամբակը զտելու և յուղ պատրաստելու գործարանները պատկանում էին հայերին: Հավաքելով հումքը թուրքմեններից՝ հայերը այն զտում և ուղարկում էին Կենտրոնական Ռուսաստան, իսկ բամբակի կորիզներից պատրաստած յուղը վաճառում թուրքմեններին: Քաղաքում ամենահայտնի բամբակի գործարանը պատկանում էր Ավետիս Տեր-Մկրտչյանին[7]: Հայերի ձեռքին էր գտնվում նաև կատարելագործված մեքենաներով մի ջրաղաց, որը աղում էր ալյուրը զանազան տեսակներով: Օրինակ, Աշխաբադում Հ. և Մ. Տերտերյանց եղբայրներն ունեին շոգեշարժ ջրաղաց, որն ընդունում էր Կովկասի բոլոր կայարանների ալյուրի պատվերները[8]:

Հայերի մի զգալի մասը զբաղվում էր սայլապանությամբ: Սայլերը կազմում էին նրանց սեփականությունը և պետք է շեշտել, որ սայլապաններից շատերն ունեին իրենց տունը: Հայերի մի մասը արհեստավորներ էին և գործակատարներ: Իհարկե, նրանց որոշ հատվածն ապրում էր ծայրամասում և գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանր վիճակում՝ չունենալով ապրուստի տարրական պայմաններ, սակայն մեծ մասամբ, հայությունը տեղակայված էր քաղաքի կենտրոնում՝ ներգրավված լինելով նաև քաղաքային, պետական և կրթական կյանքում: Ինչ վերաբերում է գաղութի հոգևոր կյանքին, ապա այն սկսեց կազմակերպվել XX դարասկզբին կառուցված եկեղեցու շուրջ[9]: 1901 թ. նոյեմբերի 20-ին Աշխաբադի հայ գրիգորյան (առաքելական) եկեղեցու սպասավոր Իվան Շահունցևի՝ Անդրկասպյան շրջանի ղեկավարին ուղղված նամակից ակնհայտ երևում է, որ դեռևս 1900 թ. հայ գրիգորյանական եկեղեցին դիմել է շրջանի ղեկավարին՝ հոգևոր կյանքը կազմակերպելու համար նոր եկեղեցի կառուցելու թույլտվության խնդրանքով (պայմանավորված հայերի

[7] **Григорянц** 1984, 45.

[8] «Մշակ», 1908, N 71:

[9] Առաջին հայ եկեղեցին Աշխաբադում կառուցվել է 1884 թ.՝ Անդրկասպյան տարածաշրջանի գեներալ-լեյտենանտ Ա.Վ. Կոմարովի թույլատվությամբ: 1887 թ. թույլատրվեց իրականացնել կրոնական ծիսակատարություններ, տես՝ Հայ Սփյուռք հանրագիտարան, 2003, 205:

թվաքանակի ավելացմամբ)[10]: Դեռևս 1896 թ. նման խնդրանքով շրջանի ղեկավարությանը դիմել էր նաև տեղի հայությունը[11]:

1902 թ. արդեն պատրաստ էր եկեղեցու հատակագիծը, որի հեղինակը հայազգի ինժեներ Մուրաֆյանն էր: Եկեղեցին կառուցվեց ազգային ոճով՝ նման Անիի եկեղեցիներին[12]: Սակայն պետք է նշել, որ հոգևորականների վեճերը թույլ չէին տալիս նոր կազմավորվող եկեղեցու հիմքերը: Մինչ 1903 թվականը եկեղեցին երկու միմյանց քննադատող քահանաների վիճաբանության առարկա էր: Քահանաներից մեկը ռոճիկ տրամադրելու մասին հարց էր բարձրացրել, որպեսզի վերջ տրվի հոգևորականների մրցակցությանը[13]: Արդյունքում, տուժում էին հայ հավատացյալները: Սակայն Թադևոս Ատովմյանի քահանա դառնալուց հետո իրավիճակը որոշակիորեն բարելավվեց: Դա հատկապես պարզ է դառնում հայ-թաթարական ընդհարումների ընթացքում եկեղեցու ցուցաբերած դիրքորոշումից: Քահանան ոչ միայն կարողանում է համախմբել հայ հասարակությանը, այլև ստեղծված իրավիճակում թուրքերի հետ պահպանում է բարիդրացիական հարաբերություններ: Դրա վառ օրինակը Բաքվի աղետի զոհերին նվիրված հոգեհանգստի արարողությունն էր, որին մասնակցեցին նաև տեղի մահմեդականները[14]:

Գաղութի կրթական կյանքում կարևորագույն դեր ուներ եկեղեցուն կից գործող ծխական դպրոցը, որը սակայն գտնվում էր անմխիթար վիճակում[15]: Դպրոցի բյուջեն գոյանում էր հայերի կողմից տրվող գումարներից: Ցավոք հայ հասարակության ոչ բոլոր ներկայացուցիչներն էին պատրաստ նման պատասխանատվություն ստանձնել, չնայած որ առանձին-առանձին ունակ էին վճարել սահմանված գումարի կրկնակի չափը: Դա խոսում էր միայն ու միայն ստեղծված մթնոլորտի և հայ հասարակության անտարբերության մասին[16]: Ծխական դպրոցը ակտիվ համագործակցում էր Սամարղանդի, ինչպես նաև Թուրքեստանում գործող բոլոր ծխական դպրոցների հետ՝ կազմակերպելով ժողովներ: Այն դրական արձագանք էր գտնում Թուրքեստանի տարածաշրջանի նույնիսկ հեռավոր մասերում: Վարչական կազմակերպման հար-

[10] ՀԱԱ, ֆ. 52, ց. 1, գ. 4249, թ. 2:

[11] ՀԱԱ, ֆ. 52, ց. 1, գ. 4249, թ. 4:

[12] «Մշակ», 1902, N 36:

[13] «Մշակ», 1902, N 207:

[14] «Մշակ», 1905, N 32:

[15] Ծխական դպրոցը բացվել է 1890 թ., **Григорянц** 1984, 9:

[16] «Մշակ», 1907, N 80:

ցերից բացի, օրակարգի մաս էին կազմում նաև մանկավարժական և ծրագրային կետեր[17]: Շատ դեպքերում նման հանդիպումները տալիս էին ցանկալի արդյունք: Հայկական ծխական դպրոցների հետ համագործակցությունից զատ, դպրոցի հոգաբարձությունը չէր մերժում նաև քաղաքում գտնվող բաբիստների դպրոցի համագործակցության առաջարկները: Նման հարաբերությունների հաստատումը նպաստում էր ոչ միայն երկու ժողովուրդների կրթական կապերի ընդլայնմանը, այլև նյութական մեծ հնարավորություններ էր ընձեռում[18]:

Աշխաբադի հայերի կրթական կյանքը կազմակերպվում էր ոչ միայն Հայոց ծխական դպրոցի ջանքերի շնորհիվ, այլ նաև մանկապարտեզ-պրոգիմնազիայի միջոցով, որը պահվում էր 1901 թ. հիմնադրված Հայ լուսավորչական կանանց բարեգործական ընկերության հաշվին[19]: Մանկապարտեզը սկզբնական տարիներին չէր ծառայում իր նպատակին՝ անփորձ վարժուհիների պատճառով: Սակայն 1903 թ. սկսած այն կարողացավ նոր հիմքերի վրա գործել՝ շնորհիվ նոր վարժուհու[20]: Մանկապարտեզում, մանկական խաղերին համընթաց, ուսուցանում էին հայերեն և ռուսերեն, կարդում էին հեքիաթներ և աղոթքներ: Մանկապարտեզ-պրոգիմնազիայի գործունեությունը իրականացվում էր բարձր մակարդակով, որն ապացուցվում է ծնողների գոհունակությամբ[21]: Հաստատությունը յուրովի մրցակցության մեջ էր տեղի ծխական դպրոցի հետ:

Վերը նշված ծխական դպրոցի և մանկապարտեզ-գիմնազիայի հասույթը գոյանում էին Աշխաբադի ժողովարանում, երբեմն նաև եկեղեցու բակում կազմակերպվող ներկայացումներով: Պետք է նշել, որ դեռևս 1898 թ. սկսած քաղաքում հայերեն լեզվով տարբեր ժանրերի ներկայացումներ էին բեմադրվում, որին ակտիվ մասնակցություն էին ունենում Հայաստանից (Կովկասից)

---

[17] «Մշակ», 1907, N 88:

[18] «Մշակ», 1911, N 67:

[19] Հայ լուսավորչական կանանց բարեգործական ընկերությունը հիմնվել է 1901 թ.: Ընկերության հիմնադիրը Սուսաննա Մամիկոնյանն էր: Կազմակերպության պատվավոր անդամը գեներալ Կուրոպատկինն էր, պատվավոր հոգաբարձուն՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը, («Մշակ», 1901, N 56): Ընդ որում, քաղաքներում ստեղծված հայ կանանց բարեգործական ընկերությունները Միջին Ասիայում կանանց առաջին հասարակական կազմակերպություններն էին, (Հայ Սփյուռք հանրագիտարան, 2003, 207, http://lraber.asj-oa.am/621/1/2009-3__296_.pdf):

[20] «Մշակ», 1903, N 104:

[21] «Մշակ», 1903, N 104:

ժամանած թատերական խմբերը: 1900 թ. քաղաքում հայտնի դերասան Անդրանիկը առաջին անգամ ներկայացրեց Շիլլերի «Ավազակներ» դրաման: Ներկայացումը բավական մեծ արձագանք գտավ: Ներկա էին նաև օտարազգիներ[22]: «Մշակի» էջերից ակնհայտ երևում է, որ այդ տարիներին դերասան Անդրանիկը հայտնի է եղել Աշխաբադի հանդիսատեսին և խաղացել է այնպիսի դերեր, ինչպիսիք են Գ. Սունդուկյանի Պեպոն[23] և Րաֆֆու Սամվելը[24]: Սիրելի դերասանուհի էր նաև Սիրանույշը, ով խաղացել է շեքսպիրյան «Համլետ»-ում[25]: Կային նաև չհաջողված ներկայացումներ[26]: Ընդհանրապես, նման ներկայացումները հայ հասարակության առօրյան հաճելի և հետաքրքիր դարձնելուց, ինչպես նաև դպրոցների հասույթն ապահովելուց զատ, ունեին նաև բարեգործական այլ առաքելություններ: Խոսքը հատկապես վերաբերում է 1902 թ. քաղաքում հայկական գրադարան ունենալու մտահղացմանը, որը ընթերցողներին կապահովեր հայերեն գրականությամբ: Գրադարանի կառուցումը կունենար հայապահպան կարևոր նշանակություն, սակայն այն իրականություն չդարձավ՝ գումարի սակավության և հայ հասարակության անտարբերության պատճառով[27]: Վերջինս նման անտարբերություն էր ցուցաբերում նաև ներկայացումների նկատմամբ: Կապ չուներ ներկայացումը որակյալ էր, թե ոչ, դահլիճը դատարկ էր: Օրինակ՝ հայտնի դերասան Աբելյանի դեպքում, երբ թվում էր, թե դահլիճը պետք է լեփ-լեցուն լիներ, ստացվեց հակառակը[28]: Երբեմն Աշխաբադի հայ հասարակությունը նախընտրում էր իր գումարները վատնել տարածում գտած թղթախաղի և մեծ խնջույքների վրա, քան գնալ թատերական ներկայացումների:

Մերվ: Մերվում հայերը, ինչպես և Աշխաբադում, բնակություն են հաստատել 1880-ական թվականներից: Այնտեղ ապրող հայերի մեծամասնությունը առևտրականներ էին, նրանք ունեին իրենց աղոթատունը, ծխական դպրոցը, քահանան և երեցփոխը:

---

[22] «Մշակ», 1900, N 153:

[23] «Մշակ», 1901, N 272:

[24] «Մշակ», 1900, N 157:

[25] «Մշակ», 1901, N 274:

[26] Օրինակ՝ Սողոմոնյան ամուսինների ներկայացրած «Ընտանեկան գաղտնիք» կատակերգությունը և «Հյուր» դրաման, որոնք թարգմանել էր դերասան Անդրանիկը, «Մշակ», 1900, N 195:

[27] «Մշակ», 1902, N 66:

[28] «Մշակ», 1904, N 59:

Ի տարբերություն Աշխաբադի, Մերվի հայերի հոգևոր կյանքն ավելի կազմակերպված էր, տեղի քահանան վարձատրվում էր և նյութական խնդիրները մղված էին երկրորդ պլան: Դա է փաստում «Մշակ» թերթում երեցփոխ Ստեփանոս Նազարյանցի տված հայտարարությունը[29]: Աղոթատան օծումը տեղի է ունեցել 1902 թ., երբ քաղաք է ժամանել Աստրախանի թեմի առաջնորդ Արիստակես արքեպիսկոպոսը[30]: Ինչպես Աշխաբադում, այնպես էլ Մերվում, կային ավանդական սովորություններ, որոնք իրենց հետ բերել էին հայերը և որոնցից հրաժարվելը բավական դժվար էր: Խոսքը վերաբերում է «քելեխին» և «մատաղին», որոնք իրականացվում էին և՛ հարուստների և՛ աղքատների շրջանակում, ովքեր ծախսում էին իրենց վերջին կոպեկը[31]: Որքան էլ որ տեղի հոգևոր կյանքը կանոնակարգված էր, սակայն երբեմն հայ քահանաները հայտնվում էին տեղի նահանգային իշխանությունների ուշադրության կենտրոնում[32]: Խոսքը հատկապես Արշակ քահանա Տեր-Ոսկանյանի մասին է, ում մեղադրում էին քաղաքական գործունեության մեջ[33]:

Մերվում կարճ ժամանակով (մեկ ամիս) գործել է նաև գրադարան, գրքերը ստանում էին Կովկասից, Ռուսաստանից և Թուրքիայից: Այն փակվեց համայնքի անտարբերության պատճառով[34]: Պետք է արձանագրել, որ մշակութային կյանքը Մերվում, ի տարբերություն Աշխաբադի աշխույժ չէր: Բեմադրվեցին Շիրվանզադեի «Պատվի համարը», Ս. Թաղյանցի «Թաքնված ձայներ» դրաման և այլն: Երիտասարդները հետաքրքրված չէին այս ամենով, նրանց մի զգալի մասը զբաղված էր զվարճություններով, որ կործանարար էր գաղութի կյանքի համար: Առավել բարձր հիմքերի վրա էր դրված տարրական և մյուս կարգերի դպրոցական ուսուցումը: Շատ մանուկներ չէին սահմանափակվում միայն ծխական դպրոցի տված կրթությամբ[35], այլ սովորում կամ շարունակում էին իրենց ուսումը այլ դպրոցներում: Մերվում գործում էր «Մեր-

---

[29] «Մշակ», 1901, N 14:

[30] «Մշակ», 1902, N 253:

[31] «Մշակ», 1912, N 166:

[32] Եվ ոչ միայն քահանաները. 1905–1907 թթ. հեղափոխության տարիներին հայ համայնքի ներկայացուցիչները հաճախակի հրավիրվում էին ոստիկանություն՝ հարցաքննության: (**Պետրոսյան** 1987, 77–78):

[33] «Մշակ», 1913, N 108:

[34] «Մշակ», 1910, N 151:

[35] «Մշակ», 1914, N 232: Այդպիսի մի կրթական հաստատություն էր ռեալական դպրոցը, որը քաղաքում կառուցվել էր 1914 թ. հոկտեմբերին և պատկանում էր տեղի հայ հարուստ առևտրականներից մեկին: Այն ուներ 130 աշակերտ, որից 28-ը հայեր էին:

վի կանանց բարեգործական ընկերություն», որի եկամուտը գոյանում էր անդամավճարներից և նվիրատվություններից: Այդ գումարները ուղղվում էին տեղի մանկապարտեզին, օգնություն էր հասցվում չքավորներին[36]:

Սամարղանդ: Սամարղանդի հայ գաղութը կազմավորվել է 1888 թ., երբ Անդրկասպյան երկաթուղին հասավ Սամարղանդ: Սկզբնական շրջանում Սամարղանդի հայ գաղութը փոքրաթիվ էր: Տեղի հայերը հիմնականում զբաղվում էին առևտրով, իսկ մի փոքր մասը արհեստավորներ էին, ովքեր մրցակցում էին այստեղ ապրող հրեա և տեղաբնիկ բնակչության հետ (հիմնականում՝ սարտ*) արհեստակիցների հետ: Իսկ առևտրի ասպարեզում հաճախ հրեաները հայերին դուրս էին դնում մրցակցությունից՝ վերջիններիս ձեռքում թողնելով միայն չամիչի և գինու առևտուրը: Հայերի թվաքանակի ավելացմանը զուգահեռ աշխուժացավ նաև վերջիններիս հոգևոր կյանքը: Մինչև 1898 թ. Սամարղանդի հոգևոր կյանքը կազմակերպվում էր Մերվից եկած քահանայի միջոցով: Աստրախանի թեմի առաջնորդի Սամարղանդ այցելությունից հետո տեղի հայ բնակչությունը խնդրեց իրենց քաղաք ուղարկել մեկ այլ քահանայի: Նույն թվականի օգոստոսին քաղաք ժամանեց Գևորգ քահանա Զաքարյանցը, ում ջանքերի շնորհիվ վարձակալած տանը բացվեց համեստ աղոթատուն[37]: Սակայն պետք է նշել, որ Սամարղանդում սեփական աղոթատուն ունենալու հարցը լուծվեց Ռուբեն քահանա Բեկգույյանցի շնորհիվ[38]: Դեռևս 1900 թ. նա Աստրախանի թեմի առաջնորդ Արիստակես արքեպիսկոպոսին ներկայացրեց տեղի հայերի համախոսականը, որտեղ մանրամասն շարադրված էին աղոթատուն ունենալու պատճառները, և այն քայլերը, որոնք անհրաժեշտ էին կառույցի ստեղծման համար[39]: Այս համախոսականից հետո ընթացք տրվեց կառուցման գործընթացին: Արդեն, 1904 թ. փետրվարի 16-ին Ռուբեն Բեկգույյանցի գրությունից պարզ երևում է, որ աղոթա-

---

[36] «Մշակ», 1910, N 159: Մերվում գործում էր նաև «Հայ կանանց Կարմիր խաչի ընկերություն»:

* 15-րդ և 18-րդ դարերի Կենտրոնական Ասիայի և առանձին շրջանների նստակյաց բնակչության մի մասի անվանումը, Сарты, Большая Советская Энциклопедия, 1978, т. 30.

[37] «Մշակ», 1901, N 288:

[38] Ռուբեն քահանա Բեկգույյանցը ծնվել է 1873 թ.: 1900 թ. ձեռնադրվել է քահանա Սամարղանդի և Թուրքեստանի հովվական շրջանի համար: Նույն թվականի օգոստոսին հրավիրվել է Սամարղանդի իգական գիմնազիա՝ հայ կրոնի պատմություն դասավանդելու: 1905 թ. հոկտեմբերից ստանձնել է Սամարղանդի նորաբաց հայկական ծխական դպրոցում կրոնի պատմության դասավանդումը: Տե՛ս **Սահակյան** 2009, 297:

[39] ՀԱԱ, ֆ. 52, ց. 1, գ. 4441, թ. 8:

տունը կառուցվել է 1903 թ.՝ «հանուն Սուրբ նահատակաց»: Հողը, որի վրա կառուցվեց աղոթատունը, դարձավ հայերի սեփականությունը, որի համար նրանք վճարելու էին 3000 ռուբլի[40]: Աղոթատանը կից ազատ հողի վրա կառուցվեց նաև ծխական դպրոց[41]: Դպրոցի կառուցման համար սկզբնական գումարը հավաքվեց համայնքի միջոցով, իսկ հետագա կարիքները հոգալու համար սկսեցին բեմադրվել թատերական ներկայացումներ:

Կոկանդ: Կոկանդը համարվում էր տարածաշրջանի աշխույժ առևտրական կենտրոններից մեկը: Առևտրականների մեջ մեծ թիվ էին կազմում հրեաները և ռուսները, իսկ հայերը սակավ էին: Սակայն պետք է նշել, որ քաղաքի հայությունը ուներ աղոթատուն և ուսումնարան, որում իր մեծ ավանդն ուներ Ներսես քահանա Աբրահամյանը[42]: Վերջինիս ջանքերով աղոթատանը կից 1911 թ. սեպտեմբերին բացվեց նաև երկսեռ ծխական դպրոց[43]: Կոկանդը ևս հեռու չէր մնում թատերական կյանքից: Այնտեղ ևս բեմադրվում էին թատերական ներկայացումներ, այդ թվում Լևոն Մանվելյանի «Վերածնվածը» դրաման[44]:

Եզրակացություն

Տարածաշրջանի հայությունը իր ուրույն ներդրումն է ունեցել երկրամասի խոշորագույն քաղաքների սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքում: Թուրքեստանի հայերը էական դերակատարություն են ունեցել տարածաշրջանի, հատկապես՝ Անդրկասպիայի քաղաքային կյանքի զարգացման գործում:

Ինչ վերաբերում է առանձին քաղաքներում առկա համայնքային կյանքին, ապա իրավիճակը տարբերվում էր: Աշխաբադում, ի տարբերություն մյուս խոշոր քաղաքների, համայնքային կյանքը բավական կազմակերպված էր, աշխույժ էր նաև թատերական կյանքը: Ընդհանուր առմամբ, տարածաշրջանի քաղաքներում համայնքային կյանքը դժվարությամբ էր կանոնակարգվում: Հիմնական պատճառը հայ բնակչության քանակի սակավությունն ու հայրենիքից հեռու գտնվելն էր:

---

[40] ՀԱԱ, ֆ. 52, ց. 1, գ. 4441, թ. 16:
[41] «Մշակ», 1908, N 55:
[42] «Մշակ», 1912, N 161:
[43] «Մշակ», 1911, N 213:
[44] «Մշակ», 1912, N 219:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱԱ, ֆ. 52, ց. 1, գ. 4249, գ. 4441

Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, Երևան, Հայկական հանրագիտարան, 732 էջ:

«Մշակ» 1900 (153, 157), 1901 (14, 272, 274, 288), 1902 (36, 66, 207, 253), 1903 (59, 104), 1905 (32), 1907 (80, 88), 1908 (55, 71), 1910 (151, 159), 1911 (67, 213), 1912 (161, 166, 219), 1913 (108), 1914 (232):

Պետրոսյան Վ. 1987, Անդրկովկասի և Միջին Ասիայի բոլշևիկյան կազմակերպությունների համատեղ պայքարի պատմությունից, Երևան, «Հայաստան», 328 էջ:

Սահակյան Ռ., Ավագ քահանա Բեկգուլյանցի նամակները Արևմտյան Հայաստանում ռուսական իշխանությունների քաղաքականության մասին, http://lraber. asj-oa.am/621/1/2009-3__296_.pdf վերջին մուտք 20.12.2020:

Алексанян О., Армяне в русском Туркестане: Расселение и вклад в развитие края, http://armstudies.asj-oa.am/278/1/98.pdf?fbclid=IwAR3XI4hg0IaDef-EUo36so-9ugWEShcNSAYd1Z8TAUtN55DUmsNb2jxTUd4 վերջին մուտք 28.12.2020:

Большая Советская Энциклопедия (БСЭ), М., 1978, т. 30, 1488 с.

Григорянц А. 1984, Армяне в Средней Азии (вторая половина XIX в. – 1917 г.), Ереван, Академия наук АрмССР, с. 157.

Григорянц В., К истории Армянской церкви в Туркмении (конец XIX – середина XX вв.) http://lraber.asj-oa.am/3402/1/1991-6(8).pdf վերջին մուտք 25.12.2020:

Палена К., Источниковедение истории канцелярии Туркестанского генерал-губернатора по материалам ревизии сенатора, https://dergipark.org.tr/en/download/article-file/155157 վերջին մուտք 20.12.2020

АРМЯНЕ В ГОРОДАХ ТУРКЕСТАНА

ШАГОЯН А.

Резюме

Ключевые слова: Туркестанское генерал-губернаторство, армянские переселенцы, Ашхабад, армянские купцы, Мерв, армянская духовность, благотворительное общество.

Создание Туркестанского генерал-губернаторства в 1867 г. не только облегчило управление регионом, но и дало возможность развивать его, используя потенциал местного населения, часть которого составляли армяне.

Армянское население крупнейших городов Туркестана (Ашхабад, Мерв, Самарканд, Коканд) начиная с XX в. принимало активное участие как в социальной, так и культурной и духовной жизни республики, внося тем самым свой весомый вклад в развитие рассматриваемого региона. Речь идет о создании духовных и образовательных центров и формировании женских благотворительных обществ.

ARMENIANS IN THE CITIES OF TURKESTAN

SHAGOYAN A.

Summary

Key words: general-goverment of Turkestan, Armenian emigrant, Ashgabat, Armenian merchants, Merv, Armenian spirituality, benevolent organization.

In 1867, the creation of the general-governorship of Turkestan not only facilitated the management of the region, but also availed possibilities of its development, using the potential of the local population, the inhabitants of the Empire, in which the Armenians did not stand aside.

The Armenian population living in the largest cities of Turkestan (Ashgabat, Merv, Samarkand, Kokand) since the 1980s, took an active part in both the social and cultural-spiritual life of the republic, making a considerable contribution to the development of the region in question through establishing educational and spiritual centres, as well as women's benevolent organizations.

ԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ*

գիտաշխատող
Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ
anoush.sargsyan@gmail.com

«ՆԱԻԴ Ի ԲԵՌԱՑ ԹԵԹԵՒԱՑՈՅ...»[1]. ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇՆ ՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ

պ.գ.թ. Գագիկ Հարությունյանի հիշատակին

Բանալի բառեր՝ Ամիդ, աք-քոյունլուներ, Կոստանդին Վահկացի, Միջագետքի արքեպիսկոպոսություն, Թովմա Մեծոփեցի, Սյունյաց մետրոպոլիտություն, Ֆլորենցիայի ժողով:

Ներածություն




Հայերեն առաջին գրքերը տպագրվել են Վենետիկում 1512–1513 թվականներին Հակոբ անունով առեղծվածային մի հայի կողմից: Տպագիրներից վերջինի՝ Տաղարանի մեջ տեղ գտած *Նաղաշէ ասացեալ* «Տաղ Ղարիպի»-ի մեջ է գուցե մեր որոնած Հակոբը, որի «կեանքն է լալի ողբերգական, դառն ու լեղի, լի տրտմութեամբ ի նեղ զնտան, յորժամ լինի օտար երկիր թափառական...» (նկ.1)[2]: Իսկ Նաղաշը միջնադարից վաղ արդի շրջան թեքվող ժամանակներում հայտնված Մկրտիչ Նաղաշն է, ով գուցե և կենդանի է եղել Հակոբի մանկության կամ պատանեկության օրերում: Դժվար է պա-

* *Հոդվածը ներկայացվել է 21.10.20, գրախոսվել է 16.03.21, ընդունվել է տպագրության 13.04.21:*

[1] Մկրտիչ Նաղաշ «Խրատական բաներս ազահութեան եւ անընչութեան ի Նաղաշէ վարդապետէ ասացեալ», տե՛ս **Խոնդկարյան** 1965, 113–119:

[2] **Յակոբ Մեղապարտ** 1513:

տասխանել, քանի որ «մեղապարտ» Հակոբը համեստաբար լռում է իր մասին, իսկ Նաղաշի մահվան ժամանակը որոշողը նրա բանաստեղծություններն են[3]: Եւ բանաստեղծություններն են, որ նրան Վենետիկ են հասցրել, սակայն, «Տաղ Ղարիպի» տակ թաքնված նաղաշներից մեզ արձագանքում է եպիսկոպոս Նաղաշը:



Մկրտիչ Նաղաշի կյանքի խճանկարը կտոր-կտոր հավաքելու կարիք չկա. դեռևս նրա կենդանության օրոք՝ 1449 թ.-ին, Աստվածատուր եպիսկոպոսը շարադրել է այն ընդարձակ հիշատակարանի տեսքով՝ «Յիշատակարան գրոցս պատմագրաբար, զոր շինեալ…»[4] (նկ. 2): Սա մի կենսագրություն է՝ ավելի ճիշտ՝ ձոն, ոչ թե բանաստեղծի, այլ Միջագետքի «երկրորդ Լուսավորիչ» եպիսկոպոսի մասին, ում փառքի ճանապարհը սկսվում է եպիսկոպոսանալուց:

Աստվածատուր եպիսկոպոսի հիշատակարանի համաձայն՝ Մկրտիչ Նաղաշին եպիսկոպոս է ձեռնադրել Սսի հայոց կաթողիկոս Կոստանդին Վահկացին (1430–1439 թթ.) 1430 թ.-ին: Միևնույն ժամանակ նա Նաղաշին նշանակել է 24 գավառների արքեպիսկոպոս[5]: Այնուամենայնիվ, այդ իրադարձությանն ավելի մոտ գրված ձեռագրերի հիշատակարաններում, ի թիվս Նաղաշի պաշտոնների ու տիտղոսների, նշվում է նաև նրա Ամենայն հայոց կաթողիկոսի փոխանորդ («երեսփոխան») լինելը. «…Արդ գրեցաւ եւ աւարտեցաւ սուրբ աւետարանս… ի հայրապետութիւն տեառն Կոստանդի Վահկեցոյ եւ ի վերադիտողութեան Ամիթ շահաստանի տէր Մկրտիչ աստուածաբան վարդապետի եւ

---

[3] Մկրտիչ Նաղաշի մահվան մոտավոր թվականը հաշվվում է՝ ըստ «Ողբ ի Նաղաշ Մկրտիչ եպիսկոպոսէ վասն տղայոց մահուան» գործի, որը նվիրված է 1469 թ.-ին Միջագետքում բռնկված երկրորդ համաճարակին, տե՛ս **Խոնդկարյան** 1965, 39–40:

[4] **Խաչիկյան** 1955, 622–631, **Խոնդկարյան** 1965, 201–211:

[5] **Խաչիկյան** 1955, 622–631, **Խոնդկարյան** 1965, 201–211:

արքեպիսկոպոսի ամենայն Միջագետաց եւ երեսփոխանի կաթողիկոսի ամենայն Հայաստանեայց եւ մինչ ի ծայրս արեւելեան իշխեցողի…»[6]:

Ինչպես հայտնի է, միապետական-ուղղահայաց սկզբունքով կազմված հայ եկեղեցու ներսում հարաբերությունները կարգավորվում էին կանոնական իրավունքի սահմաններում: Ըստ այդմ՝ կաթողիկոսին էր վերապահված աստիճանակարգության կազմակերպումն ու թեմերի բաժանումը[7]:

Նշված ժամանակահատվածում Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռը գտնվում էր պատմական Մեծ Հայքի տարածքից դուրս: Անիի Բագրատունյաց պետության անկումից հետո (1045 թ.) այն շրջագայելով Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի մերձակա երկրամասերում (1066–1150 թթ.), երկար ժամանակով հանգրվանել էր Եփրատի աջ ափին գտնվող Հռոմկլա բերդաքաղաքում (1150–1292 թթ.)[8], իսկ 1292 թ.-ին մամլուքների կողմից Հռոմկլան գրավելուց հետո տեղափոխվել էր Կիլիկյան հայկական պետության մայրաքաղաք Սիս (1293–1441 թթ.): Տարածական մեծ հեռավորությունից ու քաղաքական այլ միջավայրից բավական բարդ էր Կիլիկիայից դուրս թեմերի հետ փոխհարաբերություններ ունենալը: Այդպիսով, վերևում վկայակոչած «երեսփոխան» տիտղոսը ենթադրում էր, որ իբրև Սսում նստող կաթողիկոսի գլխավոր ներկայացուցիչ, Մեծ Հայքի տարածքում գտնվող թեմերի հետ հարաբերությունները պետք է համակարգեր Նաղաշը:

Աստվածատուր եպիսկոպոսի ներկայացրած կենսագրության մեջ ներառված չէ նաև Վահկացի կաթողիկոսի հետ փոխկապակցված ևս մի կարևոր դրվագ: «Պատասխանի լատինացոց թղտոյն» անունով հայտնի թղթից պարզվում է, որ Ֆլորենցիայի տիեզերական XVII ժողովին (1438–1439 թթ., սկիզբը Ֆերրարայում) ընդառաջ պապը նամակով դիմել է արևելաքրիստոնեական եկեղեցիներին՝ կաթոլիկ եկեղեցու հետ միավորվելու կոչով: Որին ի պատասխան՝ Նաղաշը գրել է նշված թուղթը՝ Կոստանդին Վահկացու և Թով-

---

[6] **Խաչիկյան** 1955, 403–406: Նշված ձեռագրի գրիչը 1435 թ.-ին գրված հիշատակարանում Նաղաշի պաշտոններն ու տիտղոսները գրեթե նույն կերպ է ներկայացնում. «ի յառաջնորդութեան և վերատեսչութեան մայրաքաղաքին Ամթոյ արքեպիսկոպոսին տէր Մկրտչի նկարագրի, և երեսփոխանութեան ամենայն Հայաստանեայց և արքեպիսկոպոսութեան ամենայն Միջագետաց», տե՛ս **Խաչիկյան** 1955, 458:

[7] **Հարությունյան** 2000, 141–148:

[8] **Հարությունյան** 2000, 141–148, **Դանիելյան** 2014, 182–202:

մա Մեծոփեցու հրամանով. «Ի Մկրտիչ նկարագրէ, զոր գրեաց հրամանաւ կաթողիկոսին եւ մեծ րաբունապետին Թումայի»[9]:

Հավանական է՝ կաթողիկոսական աթոռի հետ Նաղաշի ունեցած վերոնշված սերտ հարաբերություններն Աստվածատուր եպիսկոպոսը միտումնավոր է դուրս թողել, քանի որ այդ նույն պատճառներով վերջինս միանշանակ չի ընկալվել նաև պատմագրության մեջ:

Ժամանակակից պատմիչ Թովմա Մեծոփեցին, որի Պատմագրությունը նվիրված է նաև Լանկ-Թամուրի և նրա հաջորդների ժամանակներում ապրած նշանավոր հոգևորականներին ու նրանց գործունեությանը, իսկ «Յիշատակարանը»՝ էջմիածնի ժողովին (1441 թ.) ու Հայոց կաթողիկոսական աթոռն էջմիածին վերադարձնելուն, Նաղաշի մասին լռում է[10]: Այն դեպքում, երբ Մեծոփեցին մի քանի անգամ անդրադառնում է Նաղաշի նստավայր Ամիդին: Մյուս կողմից, վերևում վկայակոչած լատինացիների պատասխան թուղթը ցույց է տալիս, որ Մեծոփեցին առնչվել է Նաղաշի հետ եկեղեցադավանաբանական կարևոր նշանակություն ունեցող այդ հարցում:

Մեծոփեցու լռությունը խախտում է Միքայել Չամչյանը՝ ներկայացնելով Նաղաշի *alter ego*-ն և Վահկացու նշանակումը վերագրելով նախապես ունեցած բարեկամությանը. «Եւ էր սա այր ճոռոմաբան եւ յաջող ի գործս. միանգամայն շքեղ կերպարանօք, պատուեալ յաչս մեծամեծացս այլազգեաց: Եւ զի սա ունէր բարեկամութիւն ընդ Կոստանդեայ Վահկեցւոյ, ի նստիլ նորա կաթողիկոս՝ եկն առ նա ի նմին ամի ի թուին ՊՀԹ (1430) եւ ձեռնադրեցաւ ի նմանէ եպիսկոպոս Ամդայ, որ Տիարպէքրու»[11]: Չամչյանի ազդեցությունը նկատելի է նաև Մաղաքիա Օրմանյանի շարադրանքում[12]:

Ըստ էության, Աստվածատուր եպիսկոպոսի ու Մեծոփեցու լռությունը և Չամչյանի կանխակալ մեկնաբանությունները քաղաքական ենթատեքստ ունեն: Այն երևան հանելու համար, նախ կներկայացվի Նաղաշի և Վահկացու շուրջը տիրող քաղաքական իրավիճակը: Այնուհետև վերջինս ծառայեցնելով իբրև հանգույց՝ ցույց կտրվի Նաղաշի ունեցած հարաբերությունները կաթողիկոսական աթոռի հետ «Վահկացու ծրագիր» հիպոթեզի շրջանակներում: Սրա հիման վրա փորձ կարվի մեկնաբանել լատինացիների պատասխան թուղթը

[9] **Գագեգին ծ. վարդապետ** 1916, 413–423, **Խոնդկարյան** 1965, 192–197, **Մանուկյան**, 2020, 58–95:

[10] **Թովմա Մեծոփեցի** 1999:

[11] **Չամչեան** 1786, 466–467:

[12] **Օրմանյան** 2001, 2409–2410:

Նաղաշին հանձրանարելու իրական նպատակը: Փոխադարձաբար պատասխանի բովանդակությունից ելնելով՝ ցույց կտրվի Նաղաշի քաղաքական դիրքորոշումն ու կենտրոնական իշխանության հետ ունեցած հետագա հարաբերությունները:

Մկրտիչ Նաղաշն ու Ամիդը[13]

Մկրտիչ Նաղաշը կնոջ մահից հետո որդու հետ Բաղեշից Ամիդ է տեղափոխվել հավանաբար 1420-ականներին[14]: Ժամանակակից ընկալմամբ մի պետական միավորից մյուսն է գաղթել, քանի որ Լանկ-Թամուրի մահից հետո (1405 թ.) նրա հսկայածավալ տերությունը մասնատվել էր, և պատմական Մեծ Հայքի տարածքներում հաստատվել էր քարա-քոյունլուների ու աք-քոյունլուների տիրապետությունը[15]: Տիգրիս գետի աջ ափին՝ Հայկական լեռնաշխարհի ու Միջագետքի սահմանագլխին գտնվող Ամիդ քաղաքը դարձել էր Տրապիզոնից Խառան տարածվող աք-քոյունլուների իշխանության կենտրոնը: Պետության հիմնադիր Քարա-Օսմանը (1403–1435 թթ.) և նրա որդի Համզան (1436–1444 թթ.), հարևան քարա-քոյունլուների դեմ անընդմեջ պատերազմներից ելնելով, քրիստոնյաներին սիրաշահելու քաղաքականություն էին որդեգրել: Թովմա Մեծոփեցու Պատմագրության, ինչպես նաև Նաղաշի կենսագրության մեջ Քարա-Օսմանը բնութագրվում է իբրև հայասեր. «... զտէրն Ամթայ Օթման անուն Աղ-ղօյինլու, սիրող յոյժ ազգիս Հայոց, քաջ զօրականն, որ եւ ասեն եթէ ՀԲ (72) պարոն սպանեալ էր եւ զԴիարբակն յինքն գրա-

---

[13] Միջնադարյան հայկական աղբյուրներում Ամիդ (հիշատակվում է նաև Ամիթ, Համիթ, Յամիթ և Քարա-Յամիթ ձևերով) անունով վկայված հնագույն քաղաքը XVI դարի վերջից նույնացվում է պատմական Տիգրան Երվանդյանի կառուցած Տիգրանակերտ քաղաքի հետ («Մայրաքաղաք Ամիթ ասի, Տիգրանակերտ սա անուանի» (1584 թ.) կամ «ի մայրաքաղաքս Տիգրանակերտ, որ այժմ կոչի Համիթ» (1613 թ.)՝ XVIII դարի ընթացքում հետ մղելով քաղաքի առաջին անվանումը: Հայկական և օսմանյան աղբյուրներում Ամիդի ու Տիգրանակերտի հետ մեկտեղ հիշատակվում է նաև քաղաքի ներկայիս անվանումը՝ արաբական ծագում ունեցող և ի սկզբանե վարչական միավորին տրված Դիարբեքիր ձևը («երկիրն Միջագետաց, որ այլազգիքն կոչէն Տիարբեքիրայ սանճախն, ուր կայ մեծ քաղաքն Համթայ»): Նշանավոր այս քաղաքն այժմ Թուրքիայի Հանրապետության հարավ-արևելյան Անատոլիա վարչական միավորի կազմում է: Այս մասին տե՛ս **Մինաս վարդապետ Համդեցի**, 1870, 12, **Ճեմճեմեան** 1996, 953–958, Sanjian 1976, 445–454, **Հակոբյան**, **Հովհաննիսյան**, 1974, 502–503, Hovhannisian 2006, 1–9, 52–79, 502–503:

[14] **Խաչիկյան** 1955, 622–631, **Խոնդկարյան** 1965, 201–212, 25–30:

[15] **Թովմա Մեծոփեցի** 1999, XVIII–XXV, **Խաչիկյան** 1955, VII–LV, **Մանանդյան** 1977, 377–402:

ւեալ»[16]: Ի հեճուկս աք-քոյունլուների՝ քարա-քոյունլուների տիրապետության տակ հայտնված քրիստոնյաները ծանր վիճակում են գտնվել հարատև պատերազմների, ծանր հարկերի ու կրոնական հալածանքների պատճառով[17]: Մեծոփեցին Նաղաշի հայրենի Բաղեշի տարածքում նկարագրում է կրոնական ճնշումների դեպքեր[18]: Ժողովրդագրական վերջին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ քաղաքականության պատճառով տեղի են ունեցել հայերի վերաբնակեցումներ ու գաղթեր դեպի Ամիդ[19]: 1431 թ.-ին Քարա-Օսմանի դաշնակից թեմուրյան Շահռուհի ավերիչ արշավանքի հետևանքով պատուհասած սովի պատճառով նմանատիպ մի գաղթի մասին է պատմում նաև Մեծոփեցին. «Եւ առեալ ոմանք զձիս իւրեանց՝ դիմեալ գնացին ի հեռաւոր աշխարհս ի Երզնկայն եւ ի Խարբերդն եւ ի յԱմիթ եւ ի յԱրղնի եւ ի Չմշկածագ»[20]: Այս տեղաշարժերի արդյունքում ամիդյան բազմակրոն (Նաղաշի կենսագրության մեջ հիշատակվում են քրիստոնյաներից բացի «Թուրք, Թաթ, Թաթար, Քուրթ, Արապ և Ջհուտ…ասորիք» համայնքները) միջավայրում քրիստոնեական համայնքների մեջ հայկական տարրը սկսել է գերակշռող դառնալ[21]: Եվ այս շրջանում է, որ ի հայտ է գալիս Մկրտիչ Նաղաշը: Կաթողիկոսից եպիսկոպոսական գավազան ստանալով՝ նա արժանանում է հոգևոր ամենաբարձր կոչմանը, քանի որ միանգամից նշանակվում է մինչ այդ գոյություն չունեցած Միջագետքի եկեղեցավարչական միավորի արքեպիսկոպոս (դարասկզբին այդ տարածքում հիշատակվում է Դիարբեքիրի և Մոսուլի արքեպիսկոպոսությունը (1402 թ.))[22]:

Ամիդ նստավայրով Միջագետքի արքեպիսկոպոսության մեջ են մտել 24 թեմեր, որոնցից մի քանիսին ծանոթանում ենք Նաղաշի 1449 թ.-ին թողած հիշատակագրությունից. «Եւ մեղաւորս Մկրտիչ սոսկ անուամբ եպիսկոպոս

[16] **Թովմա Մեծոփեցի** 1999, 118, **Խաչիկյան** 1955, 622–631, **Խոնդկարյան** 1965, 201–212:

[17] **Թովմա Մեծոփեցի** 1999, XVIII–XXXIV, 1–217:

[18] **Թովմա Մեծոփեցի** 1999, 64, 110–111, 141–143:

[19] **Երանյան** 2016, 230–238:

[20] **Թովնա Մեծոփեցի** 1999, 161–162:

[21] **Երանյան** 2016, 230–238:

[22] **Խաչիկյան** 1955, 28: Հավանական է, որ մինչ Դիարբեքիրի և Մոսուլի արքեպիսկոպոսության կազմավորումը Ամիդը մտել է Նփրկերտի եպիսկոպոսության մեջ, որի եպիսկոպոսները ներկա են գտնվել XII–XIV դարի եկեղեցական ժողովներում, տե՛ս **Օրմանյան** 2001, 1717–1719, 2084–2088, 2122–2125:

Ամիթ քաղաքի, Մերտընայ, Ուռհայու և Թլկուրանա, Հինու և Արղնու»[23]: Աք-քոյունլուների տիրապետության տակ գտնվող այս վարչատարածքային միավորներից կարելի է կռահել, որ արքեպիսկոպոսությունն ընդգրկել է աք-քոյունլուների տիրապետության տակ գտնվող հյուսիսային միջագետքյան թեմերը: Այլ կերպ ասած՝ արքեպիսկոպոսության սահմանները գծվել են աք-քոյունլուների պետության սահմաններին համապատասխան: Այդպիսով, Միջագետքի արքեպիսկոպոսությունը ինքնըստինքյան հայտնվել է հատուկ կարգավիճակում:

Մահմեդական օրենքով պետության մեջ կրոնական այլ համայնքների հետ հարաբերությունները կարգավորվում ու համայնքային կյանքը կազմակերպվում էր կրոնական առաջնորդի՝ տվյալ դեպքում՝ եպիսկոպոսի (արքեպիսկոպոսի) միջոցով: Վերջինս, ըստ առաքելական եկեղեցու օրենքի, աստծո փոխարեն խնամք էր տանում իր ժողովրդի հանդեպ և ու հավաքում էր հարկերը. «Սահման է առաքելական արհնաւքս, որ եպիսկոպոսն յԱստուծոյ տեղն խնամք տանի ժողովրդեանն և զայնչափ սահմանած հարկն առնու ի սուրբ եկեղեցոյն…»[24]: Աստվածատուր եպիսկոպոսի կենսագրության մեջ Մկրտիչ Նաղաշը ներկայացվում է իբրև վկայակոչած օրենքի մարմնացում: Ըստ այդմ՝ 13 կետով թվարկվում են Նաղաշի ունեցած ձեռքբերումները, որոնք վերաբերում են եկեղեցաշինությանը, եկեղեցական գույքերի համալրմանը, եկեղեցու «դիմոսական» (պետական հարկ) մաքսի վերացմանը, կրոնական ազատությունների շնորհմանը, տուգանքների վերացմանը, գերիների ազատագրմանը, սոցիալական աջակցությանն ու թաղման ծեսի վերականգնմանը: Վերջին կետը տարածվել է նաև ոչ մահմեդական կրոնական փոքրամասնությունների վրա («ասորիք, նեստորականք, ջհուտք»)[25]: Նաղաշի ունեցած հաջողությունները պսակվել են Արղնի թեմի Բարձրահայաց Ս. Աստվածածին վանքի (1433 թ.) և Ամիդի Ս. Թեոդորոս կամ Թորոս առաջնորդանիստ եկեղեցու (ավարտը 1439 թ.) կառուցմամբ[26]:

Վերոնշվածում ակնառու կերպով երևում է քրիստոնյաների հանդեպ աք-քոյունլուների վերաբերմունքի փոփոխության հետագիծը, որը, հավանաբար, տեղի է ունեցել 1430-ական թվականներին: Մինչ այդ, ինչպես վկայաբերվում

---

[23] **Խաչիկյան** 1955, 292:

[24] **Սմբատ Իշխան (Գունդստաբլ)** 1918, 21:

[25] **Խաչիկյան** 1955, 627:

[26] **Խաչիկյան** 1955, 622–631, **Խոնդկարյան** 1965, 201–212, 32–34:

է Նաղաշի կենսագրության մեջ, քրիստոնյաները սահմանափակ իրավունքներ են ունեցել. «…զի եկեղեցիս խախտեալ ոչ իշխէր քար մի ամրացնել…»[27]:

Աք-քոյունլու առաջնորդների բարեհաճ վերաբերմունքը նույնիսկ հանգեցրել է խռովության, որն ի հայտ է գալիս Ամիդի Ս. Թորոս եկեղեցու հետ կապված պատմության հետնախորքում: Ըստ այդմ՝ քաղաքի մահմեդական բնակչությունը դրսի ուժերի միջոցով ճնշում է գործադրել Համզայի վրա Ամիդի մինարեներից բարձր գմբեթ ունեցող Ս. Թորոս եկեղեցին քանդելու պահանջով. «և խոր խոցեցան, և ձայն ետուն միմեանց որդիքն հագարայ, և հոչակ հարեալ համբաւեցին և ամբաստան եղեն առ սուլթանն Եգիպտոսի, և առ թագավորն Պարսից, և առ սուլթանն Հոռոմաց տանն, եթէ այսպիսի գեղեցիկ յօրինվածքով բարձրացաւ եկեղեցին քրիստոնէից»[28]: Ի վերջո Համզան տեղի է տվել և հրամայել է քանդել Ս. Թորոսը (հավանաբար 1443 թ.-ին), որից հետո Նաղաշը հեռացել է Ամիդից ու գնացել սևծովյան հյուսիսային թեմերի ուղղությամբ՝ ապաստանելով Կաֆայում (Ղրիմ): Եվ երբ Համզային հաջորդել է նրա որդի Ջհանգիր իբն Ալին (1444–1451/52 թթ.), կազմակերպել է Նաղաշի վերադարձն ու Ս. Թորոսի վերակառուցումը (ավարտը 1447 թ.-ին)[29]: Ամենայն հավանականությամբ, Ջհանգիրի քայլը միտված է եղել Նաղաշի միջոցով քրիստոնյաների հետ խաղաղ համակեցության պայմանների ապահովմանը:

Այդպիսով, ի պաշտոնե կարողանալով ճկուն քաղաքականություն վարել աք-քոյունլուների առաջնորդների հետ, Նաղաշին հաջողվել է եկեղեցաքաղաքական լայն իրավունքներ ստանալ և դրանք ծառայեցնել քրիստոնեական համայնքների շահերին:

Կոստանդին Վահկացին ու կաթողիկոսական աթոռը

Կոստանդին Վահկացին պաշտոնապես կաթողիկոս է դարձել 1430 թ.-ին՝ գրավելով Սսի միաբանների կողմից սպանված Պողոս Գառնեցի կաթողիկոսի տեղը (1418–1430 թթ.)[30]: Օրմանյանի ենթադրությամբ՝ Վահկացին մասնակցություն է ունեցել Պողոս կաթողիկոսի սպանությանը[31], որն համոզիչ է թվում աթոռի *de jure* գոյատևման պայմաններում. Կիլիկյան պետությանը

---

[27] **Խաչիկյան** 1955, 622–631, **Խոնդկարյան** 1965, 201–212, 32–34:

[28] **Խաչիկյան** 1955, 622–631, **Խոնդկարյան** 1965, 201–212, 32–34:

[29] **Խաչիկյան** 1955, 622–631, **Խոնդկարյան** 1965, 201–212, 32–34:

[30] Կոստանդին Վահկացին հայերեն ձեռագրերի հիշատակարաններում կաթողիկոս է հիշատակվում 1428-1429 թթ.-ից, տե՛ս **Խաչիկյան** 1955, 723:

[31] **Օրմանյան** 2001, 2406–2410:

սերտաճած կաթողիկոսական աթոռը[32] վերջնականապես հեղինակազրկվել էր Կիլիկիայի հայկական պետության կորստով: 1375 թ.-ին Սիսը գրաված Եգիպտոսի մամլուքները գերեվարել էին Լևոն 5-րդ Լուսինյանին՝ իր ընտանիքի հետ և իշխանական տների ներկայացուցիչներին, ինչպես նաև Պողոս Սսեցի կաթողիկոսին[33]: Նրանից հետո աթոռակալած Սսի վերջին վեց կաթողիկոսներին Մեծոփեցին մեղադրում է նախորդներից ժառանգած լատինամետության («խմոր աղթարմարության») մեջ[34], որն այս կամ այն առիթով վկայակոչում են Չամչյանն ու Օրմանյանը՝ որպես ապացույց բերելով Վահկացու ունեցած առնչությունը կաթոլիկ եկեղեցու հետ: Սակայն, ինչպես հայտնի է, 1198 թ.-ից կաթոլիկ եկեղեցու հետ պաշտոնապես միացած Հռոմկլայի, ապա Սսի կաթողիկոսական աթոռին և Կիլիկյան թագավորական վերնախավին այդպես էլ չհաջողվեց իրականացնել միության ծրագիրը[35]: Ավելի ուշ կտեսնենք, որ 1375 թ.-ից հետո պապերը արևելյան գործերում միջամտություն չեն ունեցել մինչև Վահկացու ժամանակը: Մեծոփեցին հայտնում է նաև, որ Սսի վերջին վեց կաթողիկոսները դավադրաբար սպանվել են. «որ եւ ի ՊԽԱ (1392) թվականէն մինչև ի մեզ Զ (6) կաթուղիկոս եղին, եւ վեցին դեղ մահու արբուցին եւ կենաց աստի հանին..»[36] (հիշատակում է միայն Թեոդորոս Կիլիկեցու սպանության պատմությունը[37]): Այս տեսակետին հետևած Չամչյանի ու Օրմանյանի լրացումներից երևում է, որ այդ կաթողիկոսների իշխանությունն այնքան սահմանափակ ու ձևական բնույթ է կրել, որ նրանց գործունեությունը նշանավորվել է աթոռակալությամբ ու աթոռազրկությամբ կամ սպանությամբ: Պողոս կաթողիկոսի հաջորդ Թեոդորոս Կիլիկեցին 16 հայ տանուտերերի հետ միասին սպանվել է 1392-ին Եգիպտոսի սուլթան Բարկուկի արշավանքի ժամանակ, Կարապետ Կեղեցին գահազրկվել է կամ թունավորվել 1404 թ.-ին Ռամզայանների կողմից Սիսը գրավելու ժամանակ, Հակոբ Սսեցին թունավորվել է միաբանների կողմից, Գրիգոր Խանձաղուտցուն գահընկեց է արել Վահկացուն նախորդած Պողոս Գառնեցին[38]:

[32] **Հարությունյան** 2007 (Բ), 84–91, **Բոզոյան** 1997, 72–81:

[33] **Օրմանյան** 2001, 1937–1955:

[34] **Թովմա Մեծոփեցի** 1999, 223–224, 272, **Բոզոյան** 2006, 49–57:

[35] **Հարությունյան** 1994, 147–167, **Հարությունյան** 2007(Ա), 162–169, Bueno 2015 (A), Bueno 2015(B), 169–89.

[36] **Թովմա Մեծոփեցի** 1999, 224–225:

[37] **Թովմա Մեծոփեցի** 1999, 115–116:

[38] **Օրմանյան** 2001, 1959–1961, 1986–1993, **Չամչեան** 1786, 457–548:

Կիլիկիային տիրող ուժերի կողմից դրածո կաթողիկոսների նշանակումը նույնպես վկայում է, որ աթոռը տեղական ինքնամփոփ գործունեություն է ծավալել: Այս ճգնաժամի պատճառով աթոռի շուրջ մեծ խմորումներ են տեղի ունեցել Մեծ Հայքի տարածքում:

1408 թ.-ին Աղթամարի կաթողիկոս Դավիթը, նամակով դիմելով արևելյան թեմերին, առաջարկել է չընդունել Սսի կաթողիկոսի գերագահությունը: Աղթամարի կաթողիկոսության գերիշխանության հասնելու այս ձգտումը անտարբեր չի թողել Սյունյաց մետրոպոլիտությանը[39]: Վերջինս գործելով Օրբելյան իշխանական տան հովանավորչության ներքո՝ XIII դարի վերջից պայքար էր մղում միարարականների ու միարարական ուղիով գնացող Սսի կաթողիկոսների դեմ՝ հավակնելով կաթողիկոսական աթոռը Մեծ Հայք վերադարձնելու միջոցով իր ազդեցության գոտում պահել այն[40]: Նմանատիպ մտադրություն է ունեցել Հովհան Որոտնեցին, ով ցանկացել է աթոռը տեղափոխել Աղվանքի կաթողիկոսություն՝ «Սուրբ աթոռն փոխել…ի յԱղւանս, որ ճշմարիտ կաթողիկոս է և սուրբ աթոռն Գրիգորիսի…սրբոյն Ռստակիս[ի] աջն առ մեզ է և Գեղարդն սուրբ և այլ բազում սրբութիւն»[41]: Այս պատճառներով Սսի հետ կապերը խզած Աղթամարի կաթողիկոսության և նրա հետ գործակցած երեք այլ թեմերի դավադրության փորձը կանխել է Սյունյաց մեծ վարդապետ Գրիգոր Տաթևացին՝ Մեծոփա վարդապետների աջակցությամբ (1409 թ.): Ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի հրապարակումից տեղեկանում ենք, որ դավադրությունը կանխելու շրջանակներում Տաթևացին Աղթամարի կաթողիկոսության ենթակայության տակ գտնվող Արճեշի, Բերկրիի ու Արծկեի թեմերին ուղղված շրջաբերական մի թղթով վարդապետական գավազան է շնորհում իր աշակերտ Թովմա Մեծոփեցուն ու նշանակում է փոխանորդ («երեսփոխան»): Տաթևացին հանձնարարել է նաև շարունակել Աղթամարի կաթողիկոսներին հնազանդեցնելու գործը[42]: Այդպիսով, նույն տարում մահացած Տաթևացին այդ առաքելությունը փոխանցել է Մեծոփեցուն, ով և կազմակերպել է կաթողիկոսական աթոռի վերադարձն Էջմիածին:

Սակայն մինչև աթոռի վերադարձը՝ սյունեցիները, որ պատմագիտության մեջ ընդհանրացվում են «արևելյան վարդապետներ» անվան տակ, փորձել են նաև իրենց իշխանության տակ պահել աթոռը: Այդ նպատակով 1417/1418 թ.-ին

---

[39] **Օրմանյան** 2001, 2360–2365, **Չամչեան** 1786, 455–457:

[40] La Porta 2015, 269–294.

[41] **Խաչիկյան** 1955, XXXIV:

[42] **Թովմա Մեծոփեցի** 1999, XLIV–XLV:

Սիս են պատվիրակել Տաթևի դպրոցի սան և այդ ժամանակ Երուսաղեմի պատրիարք Պողոս Գառնեցուն, ում հաջողվել է տիրանալ աթոռին[43]: Ըստ երևույթին, Սյունյաց եպիսկոպոսությունն անմիջական մասնակցություն է ունեցել Պողոս Գառնեցու կաթողիկոս դառնալու հարցում, քանի որ Սսի ժողովում հաստատած կանոնակարգի համաձայն (1342 թ.)՝ կաթողիկոսի ընտրությանը պետք է մասնակցեին Սյունիքի, Արտազի, Աղթամարի ու Այրարատի աթոռները[44]: Գառնեցուն հաջողվել է բարեկարգել աթոռանիստը շինարարական ձեռնարկներով, ինչպես նաև արևելյան թեմերից (իմա՝ սյունեցիներին համակիր) հոգևորականներ բերելով[45]: Իսկ Ռուստամ Օրբելյանը, 1431 թվականին ընդարձակելով Էջմիածնի վանքապատկան հողերը, աթոռի տեղափոխության ուղղությամբ մեծ քայլ է կատարել[46]: Սակայն, կաթողիկոսական աթոռի վրա սյունեցիների ունեցած ազդեցությունը կամ նրանց ծրագրերը ժամանակավորապես տապալել է աթոռը գրաված Կոստանդին Վահկացին, ում քաղաքականությունն ի հայտ է գալիս Մկրտիչ Նաղաշին արած առանձնաշնորհումներով:

*«**Վահկացու ծրագիրը**»*

Ըստ էության, ճգնաժամային շրջանի թվարկված կաթողիկոսներից Վահկացին առաջինն է, որ, առանց արևելյան վարդապետների միջամտության, փորձել է հարաբերվել իր գերիշխանության տակ գտնվող արևելյան թեմական կառույցների հետ: Այս պատճառներով ենթադրելի է, որ բարեկամությունից անդին՝ քաղաքական նկատառումներից ելնելով է Նաղաշին պաշտոն ու տիտղոսներ շնորհել: Իսկ նրա ծրագիրն ուրվագծվում է Միջագետքի արքեպիսկոպոսության հիմնումով, որը լիովին տեղավորվում է Սսի կաթողիկոսական աթոռի տեղագրական կառուցվածքային կազմակերպման տրամաբանության մեջ:

Այս հարցը շուրջ մեկ և քառորդ դար կտրվածքով ուսումնասիրած պատմաբան Գագիկ Հարությունյանը ցույց է տալիս, որ Մեծ Հայքի սահմաններից դուրս գտնվող կաթողիկոսական աթոռը ձգտել է ձեռք բերել համահայկական կենտրոնի կարգավիճակ[47]: Նպատակն իրագործելու համար եկեղեցին կա-

---

[43] **Օրմանյան** 2001, 2382–2387:

[44] **Հարությունյան** 2000, 141–148:

[45] **Օրմանյան** 2001, 2387–2392, **Չամչեան** 1786, 457–458:

[46] **Թովմա Մեծոփեցի** 1999, XXIII:

[47] **Հարությունյան** 2007 (Գ), 108–118, **Հարությունյան** 2000, 141–148:

ռուցվածքային փոփոխություններ է արել ենթակենտրոններ ստեղծելու ճանապարհով. Հարությունյանի բանաձևմամբ՝ «տեղագրական կազմակերպման շրջանակներում հաճախ առանձնացվել են կարգավիճակային ենթակենտրոններ»[48]: Նմանատիպ նախադեպ է արձանագրվում 1287 թ.-ին, երբ Կոստանդին Բ Կատուկեցի կաթողիկոսը Ստեփանոս Օրբելյանին եպիսկոպոս ձեռնադրելով՝ նշանակում է Սյունյաց մեծ աթոռի մետրոպոլիտ և շնորհում «պռոտոֆրոնտէս Հայոց Մեծաց» տիտղոսը (բառացի թարգմանությամբ՝ նախաթոռ, նախագահ)[49]: Դրանով փաստորեն հաստատվում է Սյունյաց աթոռի գերակա դիրքը Մեծ Հայքի տարածքում, որից առաջ այդ պատիվը վերապահված էր Անիի եպիսկոպոսին[50]: Նախաթոռ տիտղոսով է ներկայանում Ադանայի ժողովին (1317 թ.) մասնակցած Տարոնի արքեպիոսկոպոսը՝ «Յոհաննէս արքեպիսկոպոս Տարունոյ եւ նախաթոռ Հայոց»[51]: Հարությունյանի մեկնաբանությամբ՝ Տարոնի արքեպիսկոպոսությանը հատուկ կարգավիճակ շնորհելով՝ Սսի կաթողիկոսությունը փորձել է հակակշիռ ուժ ստեղծել իր հետ մշտական կանոնական հարաբերություններ չունեցող Աղվանքի և Աղթամարի կաթողիկոսությունների դիմաց, ինչպես նաև թուլացնել Սյունյաց աթոռի և նրա շուրջ համախմբվածների ազդեցությունը[52]:

Նույն կերպ Կոստանդին Վահկացու՝ Նաղաշին արված առանձնաշնորհումներն ոչ այլ ինչ են, եթե ոչ Միջագետքում ենթակենտրոնի ստեղծում և վերջինիս հատուկ կարգավիճակի շնորհում: Այնուամենայնիվ, ի տարբերություն XIV դարի սկզբի՝ քննվող ժամանակաշրջանում Սսի կաթողիկոսությունում իրավիճակին տիրում էր Սյունյաց մետրոպոլիտությունը, որը հարմար առիթի էր սպասում աթոռը տեղափոխելու համար: Ենթադրելի է, որ Հյուսիսային Միջագետքում ազդեցության գոտի ձևավորելիս, Վահկացին հեռանկարում ունեցել է նաև այդ ծրագիրը: Իսկ արքեպիսկոպոսանիստ Ամիդը կենտրոն դառնալու մեծ հնարավորություն ուներ տվյալ ժամանակաշրջանում:

With the same warmth V. Brusov expresses his respect and honour on the occasion of Tumanyan’s death in his article, 1923 («Красная Нива», N 14). Similarly, as in the preface of the collection, he presents his soul-mate with greater insight,and underlines that Tumanyan devoted his whole conscious life to his people. Brusov wrote: “A real poet, an honourable poet, an omnipotent poet both in poetry and in life. Tumanyan reinforced his poetry with legends, popular proverbs, the echoes of popular songs and the description of national rituals and customs. Tumanyan was a poet for everyone both for Armenian intellectuals familiar with Western literature and for barely literate countrymen”[19].

It is remarkable to observe Tumanyan's relations with S. Gorodetsky, who considered himself the successor of Brusov's glorious work. The meeting of both poets again was a tragic period for the Armenian people. The Russian poet, who went to Tbilisi for special assignment, then to Van in 1916, found and recognized Tumanyan, as well as the spiritual greatness and the poetic expressiveness of the Armenian people. Tumanyan told Gorodetsky, who was going to visit Western Armenia, the following words; “It happens that a human being finds its straight path only through the prism of a difficult path. You are a poet. You go to the cradle of the ancient homeland of Armenia. Write about it. Poetry is the cognition of life. Otherwise it is useless. You will witness a terrible life, the life of the people on the verge of death. Write about it, whatever you see, and it will be the poetry”[20].

These words had a prophetic power on Gorodetsky and accompanied him, becoming a signal for reconstructing the reality through the guise of fiction. It did not take long for the Russian poet to reveal the characteristic features of Armenians, to recognize the inner essence and the identity of the nation, as well as the unbreakable faith and devotion to life and motherland and human values. Undoubtedly, Tumanyan’s literary works had an influence on Gorodetsky, who got

---

[18] Поэзия Армении с древнейших времен до наших дней 1916, 79: It is important to underline Brusov's words of appreciation about Tumanyan which were separately published in the joint issue of “Bazmavep”, Venice, 1918 and in the newspaper “Harach”, 1919 on the occasion of the 50th anniversary of the poet.

[19] **Брюсов** 1963, 181–182.

[20] Թումանյանը ժամանակակիցների հուշերում, 872–873:

acquainted with them in Western Armenia with the help of the poet's son Artavazd. Being involved in orphan salvation process with Gorodetsky in Van (Western Armenia), Tumanyan's son, in his spare time, read for the Russian friend from his father's literary pieces and reproduced them in Russian. With Artavazd's assistance Gorodetsky learnt Armenian.

During his activity in Western Armenia, Gorodetsky cooperated not only with newspapers by publishing articles, but also wrote reports, notes, articles, as well as weaved poetry influenced by heartbreaking and terrifying impressions. In 1918 by summarizing and publishing the book entitled "Ангел Армении" (The Angel of Armenia) Gorodetsky dedicated it to H. Tumanyan with the following ode; "I dedicate this book to you, my bright friend, because I am enchanted from the bottom of my heart not only by your personality, but also your name which is a notion – a beautiful notion of the Armenian resurrection through the friendship of my motherland"[21].

In Tbilisi a warm and pure relationship arose between Gorodetsky and Tumanyan, which was reinforced with mutual trust and the willingness to perceive and appreciate constantly the notions of beauty and honesty. Gorodetsky initiated the translation of his works, such as "The Concert", "The Irrevocable Traveller", "The Cursed Bride", quartets, etc.

The Russian poet participated in the celebrations of Tumanyan's 50th birthday with great enthusiasm and love. Thus, of great interest was Gorodetsky's article entitled as "The Wise and Delicate" published in the newspaper "Закавказское слово". The new attempt of the Russian intellectual to evaluate Tumanyan is almost identical to Brusov's descriptions. Considering Tumanyan's personality and literature as a harmonious entity, Gorodetsky wrote: "To understand H. Tumanyan means to understand Armenia with its ancient concepts of serene earthly life, its aspiration for an idyllic life in relation with nature and people, despite the tragic stream of life. His literary works are monuments of the historic sufferings of Armenia and an oath towards wealthy future…"[22]. Gorodetsky, who had been in close relations with the Armenian poet for years, revealed Tumanyan's rare human inner world and literary connotative overtones with his proficient observations.

---

[21] Թումանյանը ժամանակակիցների հուշերում, 874:

[22] Закавказское слово, N 27, 20 փետրվար, Թիֆլիս, 1919:

Conclusion

Hence, H. Tumanyan had a special relationship with Russian poets. He always encouraged them with his wise words and not only organized events, meetings of Russian and Armenian writers, lectures, translations of the best literary works, but also wrote different articles, public speeches, etc. It would not be an exaggeration to say that Tumanyan was one of the exceptional personalities, who, as a centripetal force, constantly united representatives of not only Russian, but also other nationalities. With his rare human character, Tumanyan became a living example of serenity and creation, a loving and forgiving person.

To date the exceptional appreciation of H. Tumanyan by Russian intellectuals remains a unique manifestation of evaluation of his creative world, a summary of the deep and comprehensive interpretations of Russian intellectuals and their endeavor to perceive the inner layers of the Armenian culture. Tumanyan's efficient and relevant personal and creative contacts with Russian intellectuals has not lost its literary-historic significance for more than a century, and today it is truthfully considered to be a symbol of cultural-spiritual relationship and centuries-old connections between Armenia and Russia.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թումանյանը ժամանակակիցների հուշերում 1969, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 998 էջ:

Թումանյան Ն. 1969, Հուշեր և զրույցներ, Երևան, «Լույս», 334 էջ:

Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատությամբ (1890–1913), 2019, Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 680 էջ:

«Հորիզոն», Թիֆլիս, 1915–1916:

«Մշակ», Թիֆլիս, 1915–1916:

Զանփոլադյան Մ. 2009, Отклики на творчество Ованеса Туманяна в русских изданиях 1893–1903 годов, «Թումանյանը և XXI դարը», գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, էջ 75–82:

Братская помощь пострадавшим в Турции армянам 1898, 2-е переработанное и дополненное издание, Москва, 960 с.

Брюсов В. 1963, Об Армении и армянской культуре, Ереван, изд. АН Армянской ССР, 247 с.

Закавказское слово, N 27, 20 փետրվարի, Թիֆլիս, 1919:

Поэзия Армении с древнейших времен до наших дней (под редакцией Валерия Брюсова), 1916, Москва, изд. Московскаго Армянскаго Ком., 543 с.

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՌՈՒՍ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ե.

Ամփոփում

Բանալի բառեր՝ Հովհ. Թումանյան, ռուս մտավորականություն, քննադատություն, բարձր գնահատական, ժողովրդայնություն, պոեզիայի «նահապետ», հոգևոր-մշակութային կապ:

Հովհաննես Թումանյան – ռուս գրականություն աղերսները բազմաթիվ են ու բազմաբովանդակ: Հոդվածում պատմական հեռանկարի մեջ ի մի է բերվում բազմաշերտ այդ հարաբերությունների միայն մեկ կողմը, մասնավորապես՝ ժամանակի ռուս մտավորականների (Յու. Վեսելովսկի, Վ. Բրյուսով, Վ. Իվանով, Ս. Գորոդեցկի)՝ Թումանյանին ու նրա ստեղծագործություններին տրված բարձր գնահատականը, մատնանշվում են ժամանակի քննությունն անցած տեսակետներն ու բացահայտումները: Մասնավորապես՝ կարևորվում են Յու. Վեսելովսկու բնութագրական առաջին փորձերը, Վ. Բրյուսովի բացառիկ ջերմ վերաբերմունքն ու թումանյանական աշխարհի խոր վերլուծությունները, Ս. Գորոդեցկու՝ ամենայն հայոց բանաստեղծի մտքի խորությունն ու բանաստեղծական հանճարի ներքին շերտեր տեսնելու կարողությունը: Ռուս մտավորականների բացառիկ գնահատականները այսօր էլ մնում են Հովհ. Թումանյանի ստեղծագործական աշխարհի արժևորման եզակի դրսևորումներ:

О. ТУМАНЯН В ОЦЕНКЕ РУССКОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ ТОГО ВРЕМЕНИ

МНАЦАКАНЯН Е.

Резюме

Ключевые слова: О. Туманян, русская интеллигенция, критика, высокая оценка, популярность, «патриарх» поэзии, духовно-культурная связь.

Связи О. Туманяна с русской литературой и ее яркими представителями были весьма многогранны. В данной статье рассматривается лишь одна грань этих связей и отношений, в частности, высокая оценка творчества О. Туманяна Ю. Веселовским, В. Брюсовым, В. Ивановым, С. Городецким, которые являлись современниками поэта. Всесторонний анализ поэтического мира О. Туманяна (В. Брюсов), глубины его мысли, а также постижение тонких граней его творческого гения (С. Городецкий), конструктивный подход к творческой лаборатории Туманяна (Ю. Веселовский) актуальны и в наши дни, являя собой образцы уникальной исследовательской мысли.

ՆԱԻՐԱ ԲԱԼԱՅԱՆ*
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
nairamelsiki@gmail.com

«ԱՆԴԱՍՏԱՆԸ» ԱԶԳԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԾԻՐՈՒՄ

Բանալի բառեր՝ «Անդաստան», գրական-մշակութային գործունեություն, ուծացում, գեղագիտական ճաշակ, գրական բարձրարժեք գործեր, ազգային ինքնություն, գեղագիտական աշխարհայացք:

Ներածություն

Հասարակության զարգացման, ինչպես նաև նրա մշակութային աշխարհայացքի ձևավորման գործում էական դեր ունի մամուլը: Հայ մշակույթի պատմության հոլովույթում ազգապահպանման, ազգային ինքնության ջատագովման տեսանկյունից հատուկ նշանակություն են ստանում Սփյուռքի պարբերականները, որոնք ընթերցողին մշակույթի տարբեր ոլորտներին ծանոթացնելուց բացի, դիմագրավում են մշտական մարտահրավերների ու պայքարում բարձրարժեք մշակույթով օտար հողում հայ ինքնությունը պահելու, հայ համայնքը ուծացումից փրկելու համար: Ֆրանսահայ գաղթօջախում այդպիսի դերակատարում է ունեցել «Անդաստան» հանդեսը, որը մեծ հեղինակություն է վաստակել առաջին իսկ համարի տպագրությամբ:

«Անդաստանը» սկսել է տպագրվել 1952 թվականից՝ սկզբում հրատարակվելով որպես եռամսյա հանդես, սակայն առաջին համարից հետո մնացած 18 համարները սկսել են տպվել տարեկան հանդեսներով՝ մինչև 1969 թվականը: Պարբերականի խմբագիր Բյուզանդ Թոփալյանն ինքն էր հոգում տպագրության ծախսերը: Դրամական կախում չունենալն էր պատճառը[1], որ հանդեսն ուներ հիրավի մաքուր ու բարձր մշակութային արժեք ստեղծելու նպատակայնություն՝ զերծ կուսակցական գաղափարախոսությունից, մշտական բանակռիվներից: Այն արժևորում էր ներկայի մշակույթը իր ժամանակի

* *Հոդվածը ներկայացվել է 06.06.20, գրախոսվել է 04.06.20, ընդունվել է տպագրության 13.04.21:*

[1] **Պըլտեան** 2019, 714:

մեծապարփակ համադրության մեջ, «հայրենիքի և օտար հորիզոնների» վրա էր փնտրում հայ հոգու ներդաշնակությունը՝ իր ուրույն դիմագծով՝ միտում ունենալով յուրահատուկ կամար դառնալ Հայրենիքից մինչև Սփյուռք, ներկայից մինչև ապագա: Ինչպես իրավամբ կարծում է գրականագետ Գ. Պըլտյանը, «18 թիւերը իսկապէս ճաշակաւոր հատորներ են, որակաւոր գրութիւններով: Վերջին թիւերը որոշ է որ հատընտիրի բնոյթ ունին, բայց ամբողջութիւնը ինքնատպութեան անուրանալի դրոշմը կը կրէ. բան մը որ պարագան չէ շրջանի միւս պարբերականներու»[2]:

Իրականության գլխապտույտ վայրիվերումներում ուծացման վտանգի, նյութական գոյությունն ու բարօրությունն ապահովելու հոգսերի ճնշմանը հակընդդեմ՝ հանդեսը առաջադրում էր Բանի[3]՝ բանաստեղծության, առհասարակ որակյալ գրականության հակակշիռը: Առաջին և երրորդ համարների խմբագրականներում, ընդգծելով արվեստի հզոր ուժը և կարևորելով նրա դերը մարդկության քաղաքակրթության ճանապարհին, խմբագիրը շեշտում է, որ «լոյսի և իմաստութեան համեստ աշխատաւորները» պայքարում են ու պայքարելու են «յանուն հայ ոգիին անաղարտ յաւիտենականութեան», «յանուն հայ ոգիին տեւականութեան»[4]: Այս սեղմ, բայց տարողունակ առաջնորդողներում, որոնցում ամփոփված են հանդեսի խմբագրի ու աշխատակիցների հայեցակետերը, պարզորոշ զգացվում է այն մտայնությունը, որ պարբերականը ինքնին առանձին օրգան չէ, այլ կենսունակորեն կապված է իրենից առաջ եղած, համոզումների ու գաղափարների առնչակցություն ունեցող այլ հանդեսներին՝ «Մեհյան», «Մենք», «Արևմուտք», նաև դասական ու ժամանակի բարձր ճաշակավոր հայ գրականությանը, փորձում է կամրջել հայ և օտար գրականությունը՝ թարգմանաբար ներկայացնելով յուրաքանչյուրը: Հանդեսի աշխատակազմում խմբված էին ֆրանսահայ համայնքի երևելի մտավորականները, որոնց ստեղծագործությունները և ուսումնասիրությունները, գրական ու մշակութային վերլուծությունները, ի թիվս թարգմանական բարձր արվեստ գրական ստեղծագործությունների, գեղագիտական ճաշակ էին թելադրում ոչ միայն ֆրանսահայ գաղութում, այլև մյուս գաղթօջախներում և անգամ հայրենիքում: Ինչպես իրավամբ գրում է Ս. Դանիելյանը, «…Լաւագոյնները դարձան Փարիզի տղաքը՝ ազգայինի ու դէպի «օտարը» փնտրտուքի անվերջանալի թուացող սահմանագծին հաստատելով իրենց ոճն ու բացելով

[2] **Պըլտեան** 2019, 722:

[3] «Անդաստան» 1952, թիվ 1, 1:

[4] «Անդաստան» 1952, թիվ 1, 1:

ներքին ես-ի ու մենք-ի տեսանելի շերտերը»[5]: Նրանք՝ Հրաչ Զարդարյան, Բյուզանդ Թոփալյան, Հարութ Կոստանդյան, Շավարշ Նարդունի, Զարեհ Որբունի, Նշան Պեշիկթաշլյան, Կարո Փոլատյան, Նիկողոս Սարաֆյան, Պետրոս Զարոյան, Փայլակ Միքայելյան և այլք, «այս միջավայրում ինքնուրոյն ու ինքնատիպ դիմագիծ ստացան՝ յընթացս իւրացնելով նաև ֆրանսական ու եւրոպական գրականութիւնների առաջնային աւանդոյթները, իմացական ու գեղագիտական նոր հետաքրքրութիւնները, զարգացնելով մեր գրականութեան այնքան անհրաժեշտ համաշխարհային «շփման» անկիւնները»[6]:

Ա. Վեհազատի (Ա. Յոլյուպեյան)՝ հայ հասարակության համար արվեստի նշանակության ու դերի մասին հայեցողական հոդվածները այս առումով որոշ չափով արտահայտում են հանդեսի աշխարհայացքային ու մտահայեցողական գաղափարախոսությունը և նրա նպատակայնությունը: «Անհրաժեշտ է կատարել ժամանակին համապատասխան ներածումները օրը օրին,- գտնում է հեղինակը «Ներկան և իր զգայարանքը» հոդվածում,- ու մեր անդաստաններէն ներս առնել համամարդկային ստեղծագործութեանց ընտրանի, հայացնելով ու իւրացնելով զայն, ինչպէս կ' ընեն միւս բոլոր ազգերը, մեծ ու փոքր, յանուն յառաջադիմութեան եւ քաղաքակրթութեան նոր նուաճումներու:…Կատարել վերագնահատումը մեր արժէքներուն, ճշգրիտ չափանիշներով եւ իմացական ուղիներով: Սահմանել այն կամուրջները որ պէտք է երկարին օտար անդաստաններէն դէպի մերը, բերելով նոր նիւթեր ու կարելիութիւններ հայ մշակոյթին բարգաւաճման համար: Թոթափիլ ժամանակավրէպ ծանրաբեռնումներէն որոնք կը ճնշեն մեր գրականութեան վրայ ու տալ անցեալին իր անհրաժեշտ տեղը: Կարճ՝ զարգացնել ներկայի զգայարանքը»[7]:

«Անդաստանի» էջերում պարզորոշ զգացվում է բանաստեղծության՝ որպես գրական ժանրի կշռույթը: Բանին՝ բանաստեղծությանը նախապատվություն տալու հանգամանքով պայմանավորված, հանդեսն իր էջերում միշտ տպագրել է որակյալ ու բարձրարժեք չափածո՝ ինչպես միջնադարյան բանաստեղծների, այնպես էլ Սփյուռքի և հայաստանյան հեղինակների ստեղծագործություններ: Ուշագրավ է, որ պարբերականում գերակշռում են գերազանցապես այն բանաստեղծությունները, որոնց հիմնական մոտիվը խոհափիլիսոփայությունն է, որոնցում ստեղծաբանված աշխարհի հոլովույթում են մարդու տեղն ու դերը, տիեզերական գոյության առեղծվածների որոնումները,

[5] **Դանիելյան** 2011, 54:

[6] **Դանիելյան** 2011, 54:

[7] «Ներկան և իր զգայարանքը» 1953, «Անդաստան», թիվ 3, 128:

անհատի մտահայեցողական հայացքները և այլն: «Անդաստանի» ընտրյալ ճաշակը այս առումով ներկայացրել է սփյուռքահայ բանաստեղծների՝ Բ. Թոփալյանի, Հ. Կոստանդյանի, Ն. Սարաֆյանի, Ահարոնի, Վ. Օշականի, Ա. Սեմայի, Ա. Տատրյանի, Գ. Ճիզմեճյանի և ուրիշների բանաստեղծությունները:

Հանդեսի աշխարհայացքային ծիրում բանաստեղծության՝ մշակույթի մեջ մեծ դերակատարման առումով էական նշանակություն են ստանում բանաստեղծությանը նվիրված ուսումնասիրությունները, որոնցից յուրաքանչյուրը լայն ճանաչողական, վերլուծական-տեսական, բազմաբովանդակ գրականագիտական ուսումնասիրություն է: Հատկապես նշելի են Հարութ Կոստանդյանի, Նիկողոս Սարաֆյանի բանաստեղծական ու գրականագիտական խաչմերուկում ծնված ակնարկներն ու հոդվածները, Կարիկ Պասմաճյանի հանրամատչելի գրականագիտական վերլուծությունը[8], որն ուղեկցված է քննվող անգլիական գրականության հեղինակներից մեկական բանաստեղծությամբ, բանաստեղծ ու քննադատ Եդ. Սիմքեշյանի՝ հասարակության ներհայեցողական աշխարհայացքի ընդլայնմանը միտված, բանաստեղծական արվեստի քողազերծումներին վերաբերող ուշագրավ հոդված-ուսումնասիրությունները, հարցազրույցները և այլն, որոնք նույնքան տարբերվող խոհափիլիսոփայական դրույթներ են պարունակում՝ ինչ-որ չափով արտահայտելով և «Անդաստանի» մտայնությունը՝ բանաստեղծության լայնաբովանդակ նշանակության շուրջ: Նրա «Յափտենական քերթողութիւնը»[9], «Մեր գրականութեան մեծ տագնապը»[10] հոդվածները բացառապես բանաստեղծության անցյալի ու ներկայի տագնապների, բացահայտումների ձգտող բանաստեղծական ճշմարտությունների որոնումների արգասիք են:

Ուշագրավ են նաև Կ. Փոլատյանի՝ գրականության, արվեստի, բանաստեղծների՝ որպես հասարակության կրթություն ու դաստիարակության վրա վճռորոշ դեր ունեցողների, գրելու իմաստասիրական խորհումների մասին հոդվածներն ու զրույցները: «Անդաստանի» «Ո՞ւր է արդի բանաստեղծութիւնը» խորագրով հոդվածում ի մի են բերված ոչ միայն հոդվածագրի մտահայեցակարգային դրույթներն ու բանաձևումները, այլև հանդեսում տպվող բանաստեղծների ելակետային հիմնադրույթները՝ բանաստեղծության և բանաստեղծելու կանխահանգումների շուրջ: «Եւ ամէն ճշմարիտ արուեստագէտ՝ ժամանակէն ու միջոցէն դուրս կը ստեղծագործէ, թերեւս ուրիշ ժամանակի եւ ու-

---

[8] Տե՛ս «Ժամանակակից անգլիական պոէզիան» 1969, «Անդաստան», թիվ 18, 164:

[9] Տե՛ս «Յափտենական քերթողութիւնը» 1958, «Անդաստան», թիվ 9, 7:

[10] Տե՛ս «Մեր գրականութեան մեծ տագնապը» 1961, «Անդաստան», թիվ 12, 107:

րիշ միջոցի մը համար…»[11],- գտնում է Ահարոնը: Հ. Կոստանդյանի ձևակերպումը ստեղծաբանելու վերացարկված ճշմարտություն է պարզում. «Գրել չէր նշանակում նկարագրել, այլ ընդհակառակը բոլոր երեւոյթները՝ աներեւութացնել, առարկայականը պէտք էր իսպառ աներեւութանար, որպէսզի կարելի լինէր մի որեւէ երեւոյթ իր իսկութեան մէջ ներկայացնել…»[12]: Նշված հեղինակների հետ զրույցից մեջբերումները և անձամբ հեղինակի խոսքերը արտահայտում են «Անդաստանի» բանաստեղծների աշխարհայացքային գեղագիտությունը, ընթերցող-բանաստեղծ կապի ազուցիկությունը, նրանց ներիմացաբանական մտասուզումները: Հոդվածում Փոլատյանը, ակնարկելով տարբեր գաղթօջախների բանաստեղծական տարբերությունը, առաջադասում է հայեցակետային ուրույն գծերով զատորոշվող ֆրանսահայ բանաստեղծությունը այլ գաղթօջախների բանաստեղծությունից, ընդգծում այլ գաղթօջախների բանաստեղծության «մեծամտությունը»՝ նկատելով, որ դրանք Եվրոպայից 50 տարի հետ են: Այնինչ ֆրանսահայ բանաստեղծությունը նա հավասարազոր է դիտարկում եվրոպականին՝ աղերսներ անցկացնելով ֆրանսիացի արդի բանաստեղծների և ֆրանսահայ նոր բանաստեղծների՝ Բ. Թոփալյանի, Հ. Կոստանդյանի, Գ. Ճիզմեճյանի հետ[13]: Ինչ-որ առումով աչառու դիրքորոշում ունեցող այս հոդվածը, այնուամենայնիվ, բացառիկ է, քանի որ համապարփակ է պարզում հանդեսի՝ գրի ու գրականության մասին մտաճանաչողությունը:

«Անդաստանի» խմբագրակազմը խորապես գիտակցում էր, որ հայ մշակույթը Եվրոպայում հասանելի դարձնելու, գրական ստեղծագործություններին ծանոթանալու համար պետք են վայելուչ թարգմանություններ, որոնք կարժանանան եվրոպական ճաշակավոր ընթերցողի քմայքոտ, բայց դրական գնահատականներին: Առանձնապես կարևորվում է այս միջակայքում Գ. Նարեկացու ստեղծագործությունների ֆրանսերեն թարգմանությունը[14]՝ Լյուկ-Անդրե Մարսելի հեղինակությամբ, ներկայացվում է նաև նրա ուսումնասիրությունը[15]՝ հայ բանաստեղծության և Նարեկացու թարգմանությունների առիթով: Միջնադարյան հանճարի տաղերն ու «Մատյանի» մեծ հատվածներ տպվել են և՛

---

[11] Տե՛ս «Ո՞ւր է արդի բանաստեղծութիւնը» 1957, «Անդաստան», թիվ 6–7, 11:

[12] Տե՛ս «Ո՞ւր է արդի բանաստեղծութիւնը» 1957, «Անդաստան», թիվ 6–7, 18:

[13] Տե՛ս «Ո՞ւր է արդի բանաստեղծութիւնը» 1957, «Անդաստան», թիվ 6–7, 11:

[14] «Գրիգոր Նարեկացիի հազարամեակը» 1952, «Անդաստան», թիվ 1, 53:

[15] «Նարեկացիի եւ միջնադարեան հայ բանաստեղծներու ֆրանսերէն թարգմանութեան մասին» 1953, «Անդաստան», թիվ 3, 120:

առանձին հատորով, և՛ հեղինակավոր «Cahiers du Sud» պարբերականի մի քանի համարներում:

«Անդաստանի» տարբեր համարներում ֆրանսերեն թարգմանվել և հրատարակվել են հայ միջնադարյան տաղեր, Եղ. Չարենցի, Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի, Պ. Դուրյանի, ինչպես նաև հանդեսի աշխատակից բանաստեղծների բարձրարժեք գործերից: Անշուշտ, թարգմանություններ կատարվել են ոչ միայն հայ գրականությունից. հայ ընթերցողին են ներկայացվել եվրոպական և ամերիկյան հայտնի գրողների բազմաթիվ ստեղծագործություններ, դրանք ուղեկցվել են օտար տեսաբանների՝ թարգմանված, ինչպես նաև «Անդաստանի» աշխատակիցների ծավալուն վերլուծականներով, որոնցում քննվում են համաշխարհային գրականության միտումներն ու զարգացումները, պարզվում են բարձրաշխարհիկ գրականության ուղերձները՝ հասու դարձնելով հայ ընթերցողին նրա լայնախորհուրդ մտահայեց ուղությանը: Հետաքրքիր է, որ հանդեսը խնամքով էր վերաբերվում հատկապես այն հեղինակներին, որոնք բարձր էին դասում հայ մշակույթը, արժեվորում էր գրական այն գործերը, որոնցում հայկականություն և իրենց խոսքով՝ «հայու ոգին» կա: 12-րդ համարում ներկայացնելով Վ. Սարոյանի մի քանի գործեր՝ հանդեսը գտնում է, որ գրողի վաստակը բացառիկ է, քանի որ «Օտար լեզուով ստեղծագործող բոլոր համաշխարհային գրողներուն մէջ, Սարոյեանը ամենամօտիկն է մեր գրականութեան, գրեթէ անոր մաս կազմելու աստիճան»[16]: Իսկ Ֆրանց Վերֆելի թարգմանչի՝ Երվանդ Տեր-Անդրեասյանի նոր թարգմանած վեպի առաջաբանին անդրադառնալիս՝ հոդվածագիրը նշում է. «Իր վէպին մէջ Հայաստանի սիրտն է որ կը բաբախէ»[17]: «Անդաստանի» բոլոր համարներում տպագրված են Շ. Նարդունու, Վ. Շուշանյանի, Էդ. Սիմքեշյանի, Ն. Արաբյանի, Կ. Պասմաճյանի թարգմանությունները: Հայտնի գրողների՝ Օսկար Ուայլդի, Գյոթեի, Մորիս Մեթերլինկի, Փոլ Վալերիի, Շառլ Բոդլերի, Թոմաս Էլիոթի, Անդրե Ժիդի, Վիլյամ Սարոյանի, Արթուր Ադամովի թարգմանված ստեղծագործությունները հայ ընթերցողի աշխարհայացքի ծիրում նոր ոլորտներ են ձևավորում: Նշված հեղինակների ստեղծագործությունների խոհափիլիսոփայական շերտերի բացահայտմանն են միտված նրանց մասին խմբագրականները և տեսական ու գրաքննադատական ուսումնասիրությունները: Ուշագրավ է, որ հանդեսը առաջնահերթությունը տալիս էր նոր, բնագ-

[16] «Ուիլեամ Սարոյեանի արուեստը» 1961, «Անդաստան», թիվ 12, 4:

[17] «Վարդավառ» 1949, «Անդաստան», թիվ 1, 83:

րին հարազատ, բարձրարժեք թարգմանություններին: Սա է պատճառը, որ Գյոթեի «Ֆաուստի» թարգմանությունը առաջին անգամ տպելով՝ խմբագիրը թարգմանիչ Կ. Ոկոպեյանի կատարած աշխատանքը բարձր է գնահատում՝ նշելով, որ նրա գրիչը հավատարիմ է բնագրին և չափածո ձևին: Խմբագրի առարկայական գնահատականը գերազանց թարգմանական արվեստի մասին իրոք չափազանցված չէ. ահավասիկ մի հատված.

Բախտը տըւած է հոգի մը իրեն
Որ միշտ դէպ առաջ կը սուրայ անսանձ՝ նըման խենդ հովին
Եւ որուն ձըգտումն այս հարուստ երկրին բիւր բերկրանքներէն
Անդին կը ցատկէ՝ աչքերը յառած աստղին, արեւին[18]:

Այսպիսի համատեքստում կարևորություն են ստանում ֆրանսիական գրականության մասին «Անդաստանի» հեղինակների ուշագրավ ուսումնասիրությունները, ինչպես Ն. Սարաֆյանի «Ֆրանսիական արդի գրականութիւնը»[19], Կ. Փոլատյանի «Ֆրանսիական արդի բանաստեղծությունը»[20], Եղ. Սիմքեշյանի «Փօլ Վալերի»[21] և այլ հոդվածներ: Ֆրանսիական և հայ հասարակության միջև մշակութային կամուրջ դառնալու հենակետային մտածության մյուս կարևորագույն գործոնը ստեղծագործությունների և դրանց շուրջ ուսումնասիրությունների՝ երկու լեզուներով տպված լինելու հանգամանքն է: Լյուկ-Անդրե Մարսելի՝ հայ բանաստեղծությանը նվիրված ընդարձակ վերլուծությունը[22] ըստ էության ոչ միայն հայ, այլև ֆրանսիացի ընթերցողինն է: Այս ստվար ու բազմաբովանդակ ուսումնասիրությունը ինչպես քննման առարկա, հիրավի, մեծ գեղարվեստական արժեքով առանձնացող՝ Մ. Մեծարենցի «Աստուածամար», «Ջրտուք» Դ. Վարուժանի «Ո՜վ Լալագէ», «Օրհնեալ ես դու ի կանայս», «Վահագն», Ե. Չարենցի «Կարմիր սոնետ», «Արևին» բանաստեղծությունները երկու լեզուներով են տպված: Հանդեսը հպարտությամբ թարգմանում ու անսքող պարծանքով է հայ ընթերցողին ներկայացնում նաև ֆրանսերենով տպագրված վերլուծական աշխատանքներ հայ գրականության մասին,

[18] «Ֆաուսթ» 1953, «Անդաստան», թիվ 3, 70:

[19] «Ֆրանսիական արդի գրականութիւնը» 1949, «Անդաստան», թիվ 1, 65:

[20] «Ֆրանսիական արդի բանաստեղծությունը» 1949, «Անդաստան», թիվ 1, 59:

[21] «Փօլ Վալերի» 1957, «Անդաստան», թիվ 6–7, 81–86:

[22] «Հատվածներ Լիւք-Անտրէ Մարսէլի վերլուծումներէն նուիրուած հայ բանաստեղծութեան» 1959, «Անդաստան», թիվ 10, 6:

ինչպիսին Մարգարիտ Լյուվերս-Հալաջյանի «Հայ գրականութիւն» ուսումնասիրությունն է[23]:

Իհարկե, «Անդաստանի» նախապատվությունը գրականության դրսևորման ձևերից չափածոն է, բայց նրա էջերում տպագրվել են նաև աշխատակիցների և այլոց՝ Շավարշ Նարդունու, Բենիամին Նուրիկյանի, Հրաչ Զարդարյանի, Զարեհ Որբունու, Վահե Քաչայի, Բաբկեն Պոտոսյանի արձակ էջերը, որոնք բացահայտում են սփյուռքահայ գրականության այս շրջանի միտումներն ու գեղարվեստական չափորոշիչները, աշխարհայացքային հայեցակետերը: Գեղարվեստական լայնախոհությամբ են առանձնանում նաև Վ. Շուշանյանի, Հ. Կոստանդյանի, Հ. Զարդարյանի, Կ. Փոլատյանի, Գ. Ճիզմեճյանի, Զ. Գազազյանի, Շ. Պերպերյանի խոհագրություններն ու իմաստասիրական զրույցները:

Արվեստին նվիրված, արվեստի համապարփակության ու բազմաշերտայնության մասին զրույցներն անգամ կառուցված են մեծածավալ ու բազմաբովանդակ, առանց իմաստային բացատների տեքստային կառույցներով[24]: Այս առումով հատկապես նկատելի մտահայեցողական ներուժ ունեն Հ. Զարդարյանի «Ժամանակ և խորհուրդք իւր», Եդ. Սիմքեշյանի «Վաղուան գրականութեան ճակատագիրը»[25], Գ. Ճիզմեճյանի խոհաիմաստասիրական խոր դրվագումներով գրվածքները: Վերջինիս խոհագրությունները գոյապաշտությունից առթված լայնածավալ տեքստեր են, որոնցում հեղինակը համադրում է իր աշխարհայացքային հայեցակետերը գրական ուղղության տարբեր մոտեցումների հետ: Գեղագիտական հարուստ չափակշռումներով առանձնացող «Փողոցս» գործը[26] հատկապես ուրվագծվում է բարդության ու խորության բացառիկ հատույթով:

Անցյալ դարի 60-ականներին արդեն իսկ մեծ համբավ վայելող գոյապաշտության խորհրդածական աշխատանք է արձակագիր Ղ. Մելոյանի ուսումնասիրությունը, որ կառուցված է Հայդեգերի իմաստասիրական աշխատանքների համաբանությամբ[27]: Արվեստի իմաստասիրության, բանաստեղծության՝ որպես բարձրագույն արվեստի կոթողի ընդունման մասին է «Անդաստանի» հենց առաջին համարում զետեղված գեղագիտական կատեգո-

[23] «Հայ գրականութիւն» 1969, «Անդաստան», թիվ 18, 83:

[24] «Բրուտի կրպակին առջեւ» 1957, Անդաստան», 6–7, 41:

[25] «Վաղուան գրականութեան ճակատագիրը» 1959, «Անդաստան», թիվ 10, 66:

[26] «Վաղուան գրականութեան ճակատագիրը» 1959, «Անդաստան», թիվ 10, 72:

[27] «Անդաստան», 1957, թիվ 6–7, 127:

րիաներին՝ վեհին, գեղեցիկին, վսեմին նվիրված՝ Հ. Մութաֆյանի իմաստասիրական հանդարտ խոհունակությամբ շաղախված ամրակուռ աշխատանքը[28], որը կառուցված է Է. Զոլայի, Է. Կանտի, Ի. Թենի, Դ. Դիդրոյի աշխատասիրությունների զուգահեռաբանմամբ, և մարդկության աշխարհայացքի ընդլայման համատեքստում այն իրավամբ կարելի է համարել իբրև անստգյուտ ուսումնասիրություն:

Մշակույթի հանրահռչակման, նրա արժեքայնությունն ընդգծելու, հայ ժողովրդի կյանքում մշակույթի, մանավանդ գրականության տեղի ու դերի ճշգրտումներ անելու և լայն իմաստով ժողովրդին դեպի արվեստն ու գրականությունը ուղղելու ճիգեր են գրական վերլուծական մի շարք ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են արվեստի շատ ոլորտների կամ քննում են դրանք մեկ համագոյակից ուսումնասիրության մեջ: Այսպես՝ Շահան Պերպերյանի «Լռութեան շրջանակը» աշխատասիրությունը երաժշտության և մշակույթի տարբեր ոլորտների համաբանությամբ ու զուգահեռմամբ ստեղծաբանված ուրույն աշխատանք է, որում վերլուծված են արվեստի քրոնոտոպյան շրջանակների, լռության՝ որպես իմաստասիրական հասկացության ելակետերը, տրված են գեղագիտական չափորոշիչների տարբեր սահմանումներ: Վերոնշյալ բոլոր հոդված-վերլուծությունները, անտարակույս, կարելի է անգամ այսօր արդիական մտածողության ծիրում դիտարկել, այնքան խոր ու հանգամանալի, իմաստասիրական բազմազան շեշտադրումներով են դրանք դրվագված: Նույն հայեցակարգն ենք տեսնում «Անդաստանի»՝ արվեստի ու գիտության այլ ճյուղերին նվիրված այլ ուսումնասիրությունների տպագրման մեջ ևս, լինի մանրանկարչություն, լեզվաբանություն, պատմագիտություն, քաղաքագիտություն և այլն: Հետազոտական սույն աշխատանքների հետևողական հրատարակման հերթագայության մեջ երևան է գալիս հանդեսի հիմնարար նպատակայնությունը, այն է՝ էջերում միշտ տեղ տալ բացառիկ, գիտական կամ ուսումնահետազոտական այն նյութերին, որոնք բարձրագույն չափորոշիչների են համապատասխանում: Այս են վկայում Օ. Պերպերյանի, Ֆ. Քերեսթեճյանի, Ե. Այվազյանի՝ պատմության, լեզվաբանության, հոգեբանության, թատրոնի մասին գիտահետազոտական ուսումնասիրությունները: Նշանակալի արժեք ունեն Այվազյանի՝ հոգեվերլուծաբանական հայեցակարգերը քննող հոդվածները, որոնք մեծ լույս են սփռել հասարակության հոգեբանական տարաբնույթ խնդիրների վրա և անգամ սնուցել գրողների երևա-

[28] «Արուեստին փիլիոսփայութիւնը» 1949, «Անդաստան», թիվ 1, 101:

կայությունը՝ կերպարների հոգեբանական նկարագրերը գեղարվեստակա-նացման ներմտածական դիրքերից կերտելու համար: Այսպիսի հոդվածներից հատկապես նշելի է նրա «Գողգոթայի խորհուրդը», որը հեղինակը կառուցել է հոգեբանության ժամանակի արդիական ընկալումների հենքով:

Հասարակության գեղարվեստական ճաշակի ձևավորման, գեղագիտա-կան ընկալումների վրա մեծ ազդեցություն են ունեցել նաև «Անդաստանի» գրական բանավեճերը, որոնք ավելի շուտ ըմբոստ ու դիմադարձ կեցվածքով առանձնացող անհատների պատասխաններ են եղել անգամ հայտնի մարդ-կանց գնահատումներին: Հետաքրքրական են այս առումով «Անդաստանի» արվեստագետ աշխատակիցների՝ Նշան Պեշիկթաշլյանի, Զարեհ Որբունու, Մկրտիչ Պարսամյանի, Ա. Վեհազատի հասուն ու խոհափմաստասիրական, մտահայեցողական հարցադրումներով, գրականության կեղծ արժեքները հերքող ու դրա ճշմարիտ չափորոշիչների կարևորությունը հաստատող հոդ-վածները, որոնցում հավաստվում է, որ գրական գործերի գեղարվեստական իսկական արժեքը կարելի է գտնել անգամ սեռը նկարագրող տեսարանների մեջ: Վերոհիշյալ գաղափարաբանությամբ է գրված Ա. Վեհազատի ընդար-ձակ հոդվածը, որը Լ. Զ. Սյուրմելյանի՝ «Հայրենիք» պարբերականում տպագրված հոդվածի հակընդդեմ պատասխանն է: Վեհազատի՝ «Արտա-սահմանը իր հարցականներուն դիմաց (Անգլիերեն լեզու եւ հայկական Մշա-կոյթ)» վերտառությամբ հոդվածը իրականում մշակութաբանական, գրակա-նության, գրողի, Սփյուռքի և հայրենիքի կապի մասին տեսլականն է պար-զում: Հիմնական տարաձայնությունը գրականության լեզուն է՝ անգլերե՞ն օտար, թե՞ հայերեն: Ի տարբերություն Սյուրմելյանի այն դիտարկման, որ լե-զուն արգելք չէ ազգային գրականություն ստեղծելու համար, հեղինակը՝ ի դեմս «Անդաստանի», այստեղ էլ, ինչպես Փոլատյանը «Ահարոնի հետ զրոյց» հարցազրույց-հոդվածում, համոզված է, որ առանց հայերենի ճոխ ու հարուստ բառամթերքի չի կարող ստեղծվել հիրավի հայ ազգային գրականություն: Եվ բացի դրանից, ձուլումը աներկբայորեն դառնալու է օրահաս վտանգ, քանզի օտար լեզվով ստեղծված ազգային գրականության օգնությունը այս հարցում չնչին է: «Մենք պիտի հայերէն գրենք, սիրելի ընկեր, մենք Հայաստանին կը պատկանինք, ո՛չ թէ Ամերիկայի կամ Ֆրանսայի. չի կրնար տարբեր ըլլալ, հայ լեզուին ճանապարհով պիտի քալենք: Ո՛չ մէկ նահանջ այս մասին. ձուլում է, եթէ ոչ՝ վերջնական կորուստ»[29],- հաստատում է «Անդաստանի» հայեցակե-

[29] «Անդաստան» 1953, թիվ 3, 38:

տը Կ. Փոլատյանը «Զրոյց Ահարոնի հետ» հարցազրույց-տեսաբանության մեջ[30]: Վեհազատը նույնպես դիմադարձ է կանգնում Սյուրմելյանի՝ օտար լեզվով գրականություն արարելու հայեցակարգին՝ նշելով, որ գաղութների մեջ հայ գրականությունը այդպես ճապաղանալու է և դառնալու դոնդողացած գրականություն[31], այնինչ իրականում ներկան անցյալի, Սփյուռքը հայրենիքին կապող օղակը, որ արտաքուստ անկարելի է թվում, պիտի «խաղայ անհրաժեշտ դեր մը, թերեւս կարենայ չէզոքացնել հայրենիքէն արտասահման անցքին խոր անբնականութիւնը, եւ փորձելով կապել երկու հակոտնեայ աշխարհներ, մեզ տանի անհաւասարակշռութենէն դէպի ներքին ներդաշնակութիւն»[32]:

Սփյուռքը Հայաստանին կամրջելու յուրօրինակ դրսևորումներ են նաև հայաստանյան ուսումնասիրողների՝ Հ. Մանանդյանի կոթողային երկերը մատուցող հոդվածները, Ալ. Թոփչյանի՝ Հայաստանի ժամանակակից գրականությունը Սփյուռքին ներկայացնելու փորձերը: Հետաքրքիր է, որ անգամ այս ձևաչափում պահպանվում է «Անդաստանի»՝ գրականության հանդեպ բարձր նշաձողի սկզբունքային սահմանումը՝ միայն գրական բարձրարվեստ ու բազմարժան գործերի տպագրումը: Ուշագրավ է, որ խմբագրի՝ Բյուզանդ Թոփալյանի աչքը կրկին չի սխալվում՝ Հայաստանի մի քանի երիտասարդ բանաստեղծների առավել շնորհալի համարելու իրենց խիզախության, չծեծված թեմաներին անդրադառնալու, գրականության մտքի միասնական շարժման օղակը դառնալու համար: Դա է պատճառը, որ Թոփչյանի հոդվածում[33] առաջադրված, դեռևս ժողովածու չունեցող երիտասարդ հեղինակները ժամանակի քննությունը բարձր պահած բանաստեղծներ դարձան հետագայում՝ Դավիթ Հովհաննես, Հովհաննես Գրիգորյան, Սլավիկ Չիլոյան, Հենրիկ Էդոյան:

«Անդաստանի» յուրաքանչյուր համար՝ մեկուկես հարյուրյակ և ավելի էջերով, տարածում էր արվեստի տարբեր ոլորտների մասին տեղեկատվություն, հանդեսի աշխարհայեցողության լույսի ներքո հավաքված գրական նորարարություններից մինչև դասական ստեղծագործությունները, խոհագրական

[30] Գրականության դերի, բանաստեղծության նշանակության, օտար լեզվով ստեղծագործելու դեմ պահանջի, Սփյուռքի գրականության ապագայի և առհասարակ կենսազգացողությունների ողջ համամասնույթի մասին է Կ. Փոլատյանի՝ Ահարոնի հետ ուշագրավ հարցազրույցը, որ զետեղված է հանդեսի երկու համարում: Տե՛ս «Զրոյց Ահարոնի հետ» 1953, «Անդաստան», թիվ 3, էջ 42:

[31] Տե՛ս «Զրոյց Ահարոնի հետ» 1953, «Անդաստան», թիվ 3, 113–119:

[32] Տե՛ս «Զրոյց Ահարոնի հետ» 1953, «Անդաստան», թիվ 3, 117:

[33] «Առայժմ չորսը» 1969, «Անդաստան», թիվ 18, 19:

արձակից մինչև վիպական հատվածները, սեղմ գրախոսականներից մինչև ծավալուն ուսումնասիրությունները առ այսօր շարունակում են զարմացնել ու հիացնել ուշագրավ բացահայտումներով, ազգային-մշակութային համապարփակ ընդգրկումներով ու բացառիկ հայրենանվիրությամբ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դանիելյան Ս. 2011, «Միջուկի տրոհումը. սփյուռքահայ գրականության պատմություն», Գիրք Ա., Երևան, «Զանգակ-97», 407 էջ:

Պըլտեան Գ. 2019, Ֆրանսահայ գրականութիւն, 1922–1972, Երևան, «Անտարես», 894 էջ:

«Անդաստան» ամսագիր, Փարիզ, 1949, թիվ 1:

«Անդաստան» ամսագիր, 1952, թիվ 1:

«Անդաստան» ամսագիր, 1953, թիվ 3:

«Անդաստան» ամսագիր, 1957, թիվ 6-7:

«Անդաստան» ամսագիր, 1958, թիվ 9:

«Անդաստան» ամսագիր, 1959, թիվ 10:

«Անդաստան» ամսագիր, 1961, թիվ 12:

«Անդաստան» ամսագիր, 1969, թիվ 18:

«АНДАСТАН» В РУСЛЕ РАСШИРЕНИЯ НАЦИОНАЛЬНО-КУЛЬТУРНОГО МИРОВОЗЗРЕНИЯ

БАЛАЯН Н.

Резюме

Ключевые слова: «Андастан», литературно-культурная деятельность, ассимиляция, эстетический вкус, высокохудожественные литературные произведения, национальная идентичность, эстетическое мировоззрение.

Роль «Андастана» уникальна с точки зрения распространения и популяризации во Франции армянской культуры, особенно литературы. Стихи, рассказы и отрывки из романов, эссе и мемуаристика, литературоведческие, теоретические и критические очерки, избранное из переводной литературы, а также исследования, посвященные различным сферам искусст-

ва, играли важную роль в развитии эстетического мировоззрения не только армянской диаспоры, но и общин других стран.

Неоценима роль этого издания в вопросе сохранения национальной идентичности на чужбине и воспитания эстетического вкуса подрастающего поколения.

“THE ANDASTAN” IN THE WAY OF EXPANSION OF NATIONAL – CULTURAL WORLD OUTLOOK

BALAYAN N.

Summary

Key words: “The Andastan”, literary-cultural activity, assimilation, aesthetic taste, high value of literary works, national identity, aesthetic worldview.

The role of “The Andastan” is unique in disseminating the Armenian culture in France, especially in the field of literature. Poems, short stories and novels, essays and prose writings, literary, theoretical and literary criticisms, selected works of translated literature, as well as studies in various fields of art, accompanied by paintings, were not only of immense importance to the Armenian language. but also for the development of the aesthetic outlook of the communities of other countries. The overreaching goals of creating literature in Armenian, translating and publishing high-quality literary works, and thus saving the Armenian generation from assimilation in foreign countries, and educating an Armenian with high aesthetic taste, were honored in the twelve issues of the eighteen years' editions of “The Andastan”.

NAIRA GINOSYAN
PhD in History
YSU, Chair of Turkish studies, Assistant Professor
Institut of History NAS RA, Researcher
naira.ginosyan@ysu.am

ARSHAK SAFRASTYAN ON THE TREATY OF SEVRES AND THE ARBITRATION OF PRESIDENT W. WILSON CONCERNING THE FRONTIER QUESTION

The Treaty of Sevres signed as of August 10, 1920 was considered by Armenian socio-political thought exclusively in the context of Articles 88-93, which are directly related to Armenia. This was quite natural, as these articles restored the right of the Armenian people to their homeland, a part of Western Armenia. The mentioned articles of the Treaty of Sevres de jure recognized not only the Republic of Armenia including the Armenian provinces of Transcaucasia, but also United Armenia with Eastern and Western Armenias united. The signatory states, including the Turkish state that was defeated in the First World War, recognized the independence of United Armenia and agreed to expand the borders of Armenia by annexing most of the territories of the provinces of Erzurum, Van and Bitlis, as well as part of the province of Trabzon, thus ensuring the exit of Armenia to the Black Sea[1].

The Conference of the Prime Ministers and Foreign Ministers of England, France, Italy and Japan, convened in London from February 12 to April 10 in

[1] NAA, f. 412, l. 1, work 85, p. 4.

1920, worked out all the main technical issues related to the Armenian-Turkish border.

On April 26, on the initiative of the Prime Minister of Great Britain D. George Lloyd the issue of the demarcation of Armenian territories was redirected to US President W. Wilson, who was invited to take on the role of border arbitrator[2].

The arbitration process started before the signing of the Treaty of Sevres, therefore it was a completely independent international legal document by Great Britain, France, Italy, Japan, as members of the Supreme Council of the Allied Powers on the one hand, and Woodrow Wilson, as President of the United States on the other[3].

W. Wilson had signed the arbitral resolution just 10 days before the sovietization of Armenia on November 22, 1920. The official and the full name of the resolution is "Decision of the President of the United States of America respecting the frontier between Turkey and Armenia, access for Armenia to the sea and the demilitarization of the Turkish territory Adjacent to the Armenian Frontier"[4]. The arbitral award made be US President Woodrow Wilson on the demarcation of the Armenian-Turkish border is an international legal document by which Ottoman-era Turkey, subject to legal rights, was held politically responsible for the Armenian Genocide. This document deprived Turkey of its sovereignty over its former territories[5]. The area to be transferred to Armenia by an arbitral resolution was to be 103,599 sq. km, approximately 40% of Western Armenia[6].

The 1921 London Conference should be considered as an attempt to review the Treaty of Sevres. In January 1921, at a meeting of the Entente General Council in Paris, France proposed a revision of the Treaty of Sevres. In February-March of the same year, at a conference in London with the participation of Germany and the Ottoman Empire, which had lost the war to the Entente Powers, the issue of revising the reconciliation of the Treaty of Sevres was discussed at the suggestion of France and Italy. On the eve of the conference, the official delegation of the

[2] **Մախմուրյան** 2020, 81:
[3] See **Մարուքյան** 2014, 115.
[4] **Հովհաննիսյան** 2016, 48:
[5] **Մարուքյան** 2014, 120:
[6] See **Պապյան** 2007, 75.

Republic of Armenia headed by Avetis Aharonyan and the National delegation headed by Boghos Nubar Pasha had arrived in London.

In that conference an attempt was made to replace the provisions of the Treaty of Sevres, which represented the legal rights of Armenia and the Armenian people, with the vague idea of a "Home National", which, however, was rejected by the Turks themselves. By rejecting this idea at the London conference, the Turks themselves were, in fact, the first to reject the cancellation of the Treaty of Sevres[7].

The Treaty of Sevres could only be replaced by a new document in London, the preamble of which should have specifically emphasized that the treaty was revising or amending the previously signed Treaty of Sevres. Albeit the signatories of the Treaty of Sevres in London announced their intention to revise it, no document was signed during the London Conference. This means that the conference did not achieve its goal, and the attempt to review the Treaty failed.

No.7.

The Armenian Bureau,

153, Regent Street,
London W.1.
12th August 1920.

The Future of Armenia
President Wilson's Arbitration in the Frontier Question.

Russians – Bolshevik, Cadet or Tsarist – have lately been saying that the Western Powers in attempting to re-establish Armenia are defeating their own aims by depriving her of her legitimate, geographical and economic bases. Great Britain and France, they assert, have detached from Armenia. Cilicia and the provinces of Kharput, Diyarbakir and Sivas recognized as Armenian in all previous International pacts, have restricted Armenia to the Republic of Erivan and the immediately adjacent districts, the main part of which was formerly under Russian sovereignty. Starting from these premises the Bolshevik Russians have drawn

[7] **Ահարոնյան** 2001, 142–158:

their own conclusion, and it appears that they are proceeding to effect the reunion of the Russian Empire, as it existed before the war.

It is to be hoped that by the time these lines appear, the Turks may have signed the Peace Treaty, which in the natural course of events will confront President Wilson with the necessity of delimiting the frontiers of Armenia as requested by the Supreme Council of San Remo.

In drawing the Armenian frontiers the following fundamental questions have to be considered: whether Armenia is to be a Black Sea country or an Eastern Mediterranean Power; whether the reconstruction of Armenia in the near future is to tend to national concentration in the North, or an opportunity is to be created for her gradual orientation towards the Eastern Mediterranean following the natural configuration of Anti-Taurus mountains.

It is undeniable that the pressure of historical events has dispersed the Armenian people into peripheries remote from their original nidus; and as a result the Armenian element has been established, firstly on the plateau between the Arax and Kura valleys and secondly between the Arax and the Western Euphrates, the latter plateau being bounded on the South by the Anti-Taurus.

The tendency of the whole discussion regarding the Armenian boundaries, official or otherwise, has been to make Armenia entirely dependent on the Black Sea. It must be admitted at once that the independent Armenia established within any frontiers hitherto proposed, would inevitably be driven into the ambit of Russian influence now and in the future. An independent Armenia made solely dependent on the Black Sea for its economic and political development must not be expected to be anything but the southernmost marches of the Russian Empire. It may be argued that as far as elementary security and a fair measure of material prosperity are concerned the proximity of Russian influence over the Northern frontiers of Armenia may be regarded as not an unmitigated evil.

On the other hand, however, it would be futile to maintain that a spontaneous development of the country can be ensured under those circumstances. The constitution of Armenia under the powerful domination of the Northern Colossus, would be tantamount to the very negation of all that is implied in the terms "political independence" and "autonomous development".

The Armenia of the future, restricted to the region of the Black Sea, would be practically as much land – looked as it used to be, cut off from the West under

the Empire of Byzantium and Turkey when those two Powers were dominating the Dardanelles.

The next alternative is therefore, to provide an unhindered outlet to open seas on the Eastern Mediterranean: a point of contact with the West in emergencies when the Black Sea is again blocked up by wars and blockades in the future. In the absence of a powerful mandatory like the United States to guarantee the security of Armenia for the first generation, there does not seem to exist a single responsible Armenian who desires to see the Armenian boundaries stretching from Sea to Sea. In the light of past experiences of the Armenian people there is at this moment no desire to grab land which is bound to be a burden rather than a blessing. There is certainly no "Imperialistic" tendency among the leading Armenian circles, as has been suggested by certain people. It is essential, however, to draw the frontiers in such a manner as to ensure an easy approach to the Eastern Mediterranean by an economic corridor or otherwise.

Bearing in mind these political and economic factors, it may now be permissible to harmonize those factors with the geographical features of the country.

The town of Malatia, immediately West of the great bend of the Euphrates, holds a central position in regard to delimitations of the Armenian frontiers. It is not only a centre of agricultural and industrial possibilities, but also a link connecting Inner Armenia with Cilicia and Central Mesopotamia with Asia Minor. In the Middle Ages the Byzantine Empire and the Arab Caliphate fought some of their decisive battles near Malatia. The Armenian Taurus, gradually inclining westwards, suddenly drops here into the 3000 feet level and then with a series of undulating spurs juts up again into the Cilician Taurus and Eastern Mediterranean. Its trade routes lead to Mersina, to Samsoun and Diyarbakir; it is therefore likely to be a great emporium in the future.

If the frontiers of Armenia were extended to the district of Malatia in the South-West, there is every reason to believe that the gradual regrouping of the Armenian people would inevitably follow in years to come, thus enabling the Armenian state to rely more and more on its South Eastern outlets to the Sea for its political and economic development.

According to the Turkish Peace Treaty, President Wilson is asked to arbitrate in the question of the Armenian frontiers respecting the provinces of Van, Bitlis, Erzeroum and Trebizond. It is to be hoped that President Wilson will pronounce a

clear and decided moral judgment, taking the whole question into consideration as to what ought to be a scientific and reasonable frontier for Armenia.

Circular to the publisher in the British press this week,
16/2/1921 A.S

The forthcoming Conference in London on Near Eastern questions has given rise to rumours of impending modifications in the terms of the Treaty of Sevres. Whether any changes will be proposed or adopted in the provisions relating to Armenia is not known, but the British Armenia committee desires to take the opportunity of publicly declaring that no whittling down of those parts of the Treaty can be justified on any ground whatever.

Of all the nations that fought on the side of the Entente, none sacrificed as much as Armenia in proportion to her numbers. Trusting to the Allied pledge of liberation and independence, she gave about one-fourth of her population in fighting and massacre to the common cause. By the Treaty of Sevres, in August last, both Allies and Turks solemnly recognized the justice of Armenia's national aspirations and bound themselves to accept the frontiers, which President Wilson has since then delimited.

Between the signing of this Treaty and the present date, the only events which have occurred effecting the position of Armenia in relation to Turkey and the Allies have been a conquest of one half of the Armenian republic of Erivan by the Kemalists and the adoption of a Soviet Government by the other half. Both these changes took place under overwhelming military pressure and through no desire or action of the Armenians themselves. They cannot relieve the Allies of their obligations any more than did the parallel events in Belgium, Serbia and Rumania during the War. Surely, too, political morality has not sunk so low that the Allies would seek to evade their responsibilities upon this pretext.

The recent misfortune to Russian Armenia has cleared the situation in that they have compelled the Allies to deal with the problem of Turkish Armenia as a part of a Turkish settlement alone. It may of course be objected that Turkish Armenia is now without any Armenian population. But in this respect the situation is exactly the same as when the Treaty of Sevres was signed; and, besides, support of that objection would have the immoral effect of endorsing and justifying majority by massacre as a basis for determining political

questions. The Turkish Armenians who survive will return to their homes immediately they are allowed to, and in spite of their diminished numbers, their prolific and industrious character will soon make them once again the predominant. One possible method of obtaining the evacuation of the Armenian vilayets by the Turks suggests itself. The Allies could announce to Mustafa Kemal that the Greek troops will not retire from the territory now occupied by them in excess of what the Treaty of Sevres allots them until the Armenian vilayets are evacuated. In any case, the Allies ought to come to no decision effecting the Armenian provinces of Turkey without consulting the representative of the Turkish Armenians themselves, Boghos Nubar Pasha, who is now in London.

NAA, f. 412, l. 1, work 85, p. 1–2, 1–4.

BIBLIOGHRAPH

Աhարոնյան Ա. 2001, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան (քաղաքական օրագիր 1919–1927), ԵՊՀ հրատ., Երևան, 252 էջ:

Հովհաննիսյան Ռ. 2016, Հայաստանի Հանրապետություն, h. IV, Երևան, Տիգրան Մեծ, 546 էջ:


Մախմուրյան Գ. 2020, Հայաստանի սահմանի հարցով Վ. Վիլսոնի կոմիտեի գործունեությունը, Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, Երևան, Լուսակն, 250 էջ:

Մարուքյան Ա. 2014, Հայոց Ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, Պատմության ինստ., 332 էջ:

Պապյան Ա. 2007, Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու), Երևան, 119 էջ:

Safrastyan A., The Future of Armenia. President Wilson's Arbitration in the Frontier Question, NAA, f. 412, l. 1, work 85, p. 4.

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ
BOOK REVIEWS



ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՌՆԱԿՑՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ 1920–1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստ., 2020, 187 էջ + 1 ներդիր և 2 քարտեզ)

KAREN KHACHATRYAN,
HAMO SUKIASYAN, GEGHAM BADALYAN

ANNEXATION OF THE ARMENIAN TERRITORIES TO TURKEY AND SOVIET AZERBAIJAN IN THE 1920S AND 1930S

(Yerevan, NAS RA, Institute of History, 2020, 187 pages + 1 loose leaf and 2 maps)

As a result of cooperation between the Chair of History, Yerevan State University and the Institute of History, NAS RA a valuable study entitled "The Annexation of the Armenian Territories to Turkey and Azerbaijan in the 1920s and 1930s" authored by the Doctor of History, Professor Karen Khachatryan, PhD in History, Associate Professor Hamo Sukiasyan and PhD in History Gegham Badalyan is now available to readers. The editor of the book is K. Khachatryan. The academic board of the Institute of History, NAS approved the book and it was subsequently published by the same research institute in the "Mesrop Arc. Ashtchean" books series. This study is the republished and the complementary version of the authors' work entitled "The Territory Losses of Soviet Armenia and

the Nagorno Karabakh Autonomous Oblast in the 1920s and 1930s" (Yerevan, "Zangak", 2015) which highlights not only the formation of Armenia's and Artsakh's borders but also the pivotal issue, concerning the annexation of Armenia's and Artsakh's territories to Kemalist Turkey and Soviet Azerbaijan in the 1920s and 1930s.

For political-ideological reasons the study of territorial disputes was not approved in the Soviet era. Such studies were considered as topics that "disrupted the brotherly nations' friendship" and "contradictory in terms of proletariat internationalism". After the restoration of Armenia's independence in 1991, the Armenian historiography was enriched with worthy studies on the loss of the Armenian territories in 1920–1922.

Presently, the interest in the territorial, border issues has increased. It is conditioned by the 44 day war that Azerbaijan and Turkey jointly waged against the Republic of Artsakh in 2020 and by the severe losses that the two Armenian Republics suffered. The issue is also topical due to the 100th anniversary of the three treaties – the Alexandropol Turkish-Armenian Treaty signed on December 2, 1920, the Moscow Russian-Turkish Treaty of March 16, 1921 and the Kars Turkish-Transcaucasian Treaty of October 13, 1921. These three treaties were fatal for Armenians. In this respect, the study "The Annexation of the Armenian Territories to Turkey and Azerbaijan in the 1920s and 1930s" is not only a noteworthy historiographic reference to the unresolved territorial, border issues of the Republic of Artsakh, being still on the agenda of the international diplomacy but also it valuably complements the Armenian historiography.

The valuable documents of the national archives in Georgia, Armenia and the Republic of Artsakh serve as basic source data for the joint research penned by K. Khachatryan, H. Sukiasyan and G. Badalyan. A great many of these documents are available to scholarly diffusion for the first time. The excerpts from the sessions' resolutions, decisions of the Presidium of Transcaucasian Federation's Central Executive Committee and commissions determining the borders of the provinces and regions of Armenia, Georgia and Azerbaijan, also the detailed reports attached to them are the new-found documents. The book also includes documents from the regional executive committee of the Nagorno Karabakh Autonomous Oblast (NKAO) and from the regional committee of the Azerbaijani Communist party, various official party notes, accounts, petitions and letters sent from provinces, maps reflecting the changes in the Armenian and Artsakh

borders. Important facts and testimonies are extracted from the published anthologies of documents and maps that were created and published during the Soviet years.

"The Annexation of the Armenian Territories to Turkey and Azerbaijan in the 1920s and 1930s" consists of a preface, three chapters, eight subchapters, an epilogue, Russian and English summaries and a Bibliography. The two colored maps attached to the work highlight the results of the study.

The first chapter, focusing on such issues as the territory and border formation of Soviet Armenia in 1920–1922 also discusses the Sovietization of Armenia, the territory of the Soviet Socialist Republic of Armenia (SSRA) as of the Yerevan Armenian-Russian agreement signed on December 2, 1920. The present chapter also dwells upon the annexation of the Armenian territories to Turkey and Soviet Azerbaijan as a result of Moscow and Kars treaties, Azerbaijani assaults on the Armenian territories up until the beginning of 1922. The authors emphasize the collapse of the first Republic of Armenia conditioned by the Bolshevist-Kemalist severe political, military pressures which paved the way for the annexation of the Armenian territories to Turkey and Soviet Azerbaijan in 1920–1922. Juxtaposing the territorial estimates introduced in different sources, they evidence that according to the third article of the aforementioned Armenian-Russian agreement, the territory of the newly proclaimed Soviet Armenia was to make up more than 43000 sq. km (page 43). However with the Sovietization of Armenia the issue concerning the Turkish occupation of the Armenian territories was firstly eclipsed by the Soviet-Turkish border designation based on the Treaty of Moscow and Treaty of Kars. Thence, the state border designation was initiated by the Soviet Russia and Kemalist Turkey at the end of 1922. In 1925–1926 due to the work of the Soviet-Turkish committee (having been formed for that particular purpose) the Armenian-Turkish border was set, based on the principles of the aforementioned treaties. In the subsequent decades the border was subjected to re-designation. According to K. Khachatryan, H. Sukiasyan and G. Badalyan, Armenians' only achievement was the inclusion of 260 sq. km territory into the borders of Soviet Armenia. The territory was situated in the Ararat-Kyomurludagh-Arazdayan triangle, lying south of Yerevan province, due to which the village of Kyarki (currently Tigranakert) with a strategic road stretching from Ararat valley to Daralagyaz (currently Vayots Dzor) along with other two villages Jafarlu-Gyunut (Genut) were joined to Armenia. In G. Badalyan's estimation they

covered about 35-40 sq. km. Nevertheless, the latter were gradually “handed” to Nakhichevan Autonomous Soviet Socialist Republic. The work singles out another advantageous point for Armenians in the Kars Treaty as opposed to the Moscow Treaty. If according to the Treaty of Moscow, Azerbaijan was not entitled to concede its custody over Nakhichevan Autonomous region to “a third state”, then with the efforts of Moscow the given condition was eliminated in the Kars Treaty. Moreover, in fact Turkey acknowledged Soviet Russia’s total control over Transcaucasia (pp. 49–50). Referring to the Lori neutral zone, the territorial-border issues in Zangezur, NKAO and north-eastern regions of the Armenian Soviet Socialist Republic, the authors of the work state that the resolution of these problems at the beginning of 1922 resulted in reducing the territory of the SSRA for about ¼, approximating it to 32.000–33.000 sq. km (page 73). The changes made in that period are reflected in the appended map that is entitled “The Formation of the Armenian Soviet Socialist Republic (from December 1920 up to the beginning of 1922).

The second chapter of the work entitled “The Losses of the Soviet Armenia during the Transcaucasian Federation” illustrates the formation of the Transcaucasian Federation and the ongoing Armenian territorial losses to Azerbaijan in 1922–1936. K. Khachatryan, H. Sukiasyan and G. Badalyan have divulged the territorial losses that Socialist Soviet Republic of Armenia suffered in the northeastern, eastern, southeastern parts, bordering on the Soviet Azerbaijan as well as in Lori region bordering on the Soviet Georgia during those years. The losses entailed even greater reduction in the Armenian Republic’s territory, rounding up to 29. 742. 59 sq. km.

The third chapter of the work entitled “The Formation of the NKAO and the Territorial Losses” introduces the annexation of Nagorno Karbakh to Soviet Azerbaijan and its territorial losses. As the authors note, on July 5, 1921 at the plenary session of the Caucasian Bureau of the Central Committee of the Russia’s Communist (bolshevik) Party (RC(b)P) it was illegaly resolved that the territory of the NKAO was to make up 8000 sq. km. However, in 1923-1924, breaching that resolution the NKAO was formed only in one part of the Nagorno Karabakh, covering about 5000 sq. km. In the subsequent years the authorities of Soviet Azerbaijan gradually seized about 600 sq. km, leaving the Oblast with a territory of about 4.400 sq. km. Moreover, the autonomous region through the “Lachin corridor” was artificially isolated from Soviet Armenia (pp. 164–165). In the

appended map “The Territorial Losses of the SSRA and NKAO in 1923–1930s” the aforementioned territorial-border changes are clearly depicted.

The authors of the study K. Khachatryan, H. Sukiasyan. G. Badalyan have drawn the following conclusion: as a result of the territorial-border losses, the NKAO, the Soviet Armenia and the Republic of Armenia, being its assignee, appeared in strategically unfavorable conditions. Only due to the Armenians’ victories in the Artsakh liberation fight, many territories formerly annexed to Azerbaijan in the Soviet rule were liberated, becoming an integral and constitutionally ratified part of Artsakh (Nagorno Karabakh) Republic (AR) (p. 167). From September 27 to November 9, 2020, took place a Turkish-Azerbaijani aggression against the Republic of Artsakh, with the involvment of international terrorist forces. As a result, occurred military-political and territorial changes, but the reference to them is a subject of a separate study.

The work “The Annexation of the Armenian Territories to Turkey and Azerbaijan in 1920s and 1930s” is significantly distinct from other Armenian studies published up until now as for the first time it comprehensively illustrates the territorial losses of Soviet Armenia and the NKAO in terms of chronological existence of Transcaucasian Federation (1922–1936).

The study is not only of scientific but also of ideological-political importance. It is a historically substantiated, unbiased answer to the Azerbaijani authors’ works on the given issue that have been written from a completely different angle. That is why it is desirable that the work be translated into Russian and English.

LILIT HOVHANNISYAN
PhD in History, Associate Professor
Institute of History NAS RA
lilithovannisian@yahoo.com



ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՅԱԳԵՏԻ ԱՐԳԱՍԱԲԵՐ ՈՒՂԻՆ

Լրացավ նշանավոր պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Աղասու Մելքոնյանի ծննդյան 60-ամյակը, որը հարմար առիթ է՝ ներկայացնելու բազմավաստակ գիտնականի, մանկավարժի ու գիտակրթական գործի հմուտ կազմակերպչի անցած արգասաբեր ուղին:

Աշոտ Աղասու Մելքոնյանը ծնվել է 1961 թ. փետրվարի 16-ին Ախալքալաքում՝ մանկավարժ, վաստակավոր ժուռնալիստ, երկար տարիներ Խորհրդային Վրաստան թերթի թղթակից, ազգային դիմագիծ ունեցող մտավորական Աղասի Հարությունի Մելքոնյանի ընտանիքում:

Մայրը՝ Կատյա Մելքոնյանը, բարեկիրթ, վերին աստիճանի համեստ, հյուրասեր և ընտանիքի նվիրյալ հայուհի էր:

Մեծ եղբայրը՝ Կարապետ Մելքոնյանը, ինչ-որ չափով շարունակեց հոր գործը՝ աշխատելով Ախալքալաքում՝ ռադիոհեռուստատեսային համակարգում: Նա նույնպես ազգային դիմագիծ ունեցող, խիզախ ու համարձակ մտավորական էր: Ահա նման հայրենասեր, ազգաշահ, ակտիվ կեցվածք ունեցող և ուսանելի դասեր տվող ընտանիքում էլ ծնվեց կրտսեր որդին՝ Աշոտ Մելքոնյանը, ով հավատարիմ մնաց իր ընտանեկան դաստիարակությանը:

Նա 1977 թ. ոսկե մեդալով ավարտել է տեղի Դերենիկ Դեմիրճյանի անվան 4-րդ հայկական միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական

համալսարանի պատմության ֆակուլտետ: Տողերիս հեղինակը ականատես է եղել, թե ինչպես նույն դպրոցում առանձին անկյուն է հատկացվել դպրոցի մեդալակիր շրջանավարտների համար, որտեղ զետեղվել է գերազանցիկ Աշոտի նկարն ու նրա մասին դպրոցական և ուսանողական տարիներին պատմող հոդվածները, առանձին ակնարկներ և հիշողություններ: Առանձնակի ջերմությամբ ու հպարտությամբ են նրա ուսուցիչներն ու դպրոցի տնօրենը խոսել Աշոտ Մելքոնյան գերազանցիկ, հասարակական ակտիվիստ դպրոցականի մասին, ում օրինակով նրանք սերունդների մեջ դաստիարակում են հայի ազգային ոգին, ներարկում են հայրենասիրություն, հարուստ գիտելիքների պաշար և հավատարմություն ազգային արժեքների նկատմամբ:

ԵՊՀ պատմության ֆակուլտետում Ա. Մելքոնյանը շարունակել է սովորել գերազանց առաջադիմությամբ, որի համար ստացել է Հակոբ Մանանդյանի անվան կրթաթոշակ: Դեռևս ուսանողական տարիներին, դրսևորելով գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակություններ և հմտություններ, Ա. Մելքոնյանն արժանանում է ֆակուլտետի ու համալսարանի ղեկավարության ուշադրությանն ու գնահատանքին: Ուսանողական տարիներին նա ակտիվորեն մասնակցել է Ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին, որտեղ հանդես է եկել բազմաթիվ հետաքրքիր ու բովանդակալից զեկուցումներով: 1982թ. գերազանցությամբ ավարտելով Մայր բուհը՝ մինչև 1985 թ. եղել է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: 1989 թ. ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Սուրեն Երեմյանի ղեկավարությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Արևմտյան Հայաստանի Էրզրում նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին» թեմայով: 1986 թ. հոկտեմբերից Ա. Մելքոնյանը աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ համակարգում նախ՝ որպես պատմության ինստիտուտի լաբորանտ, գիտաշխատող, ապա՝ գիտական քարտուղար և գիտական հարցերով փոխտնօրեն: 2002 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» թեմայով: Նույն թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն: 2004 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2014 թ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Ակադեմիկոս Ա. Մելքոնյանի կենսագործունեության ոլորտը լայն է և ընդգրկուն, քանզի նա փայլուն հետազոտող լինելուց բացի, հմուտ գիտակազմակերպիչ է, մանկավարժ և հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ

մասնակից: Հայաստանի Հանրապետությունում և արտերկրի հայագիտական և հասարակագիտական շրջանակներում նրան ճանաչում են՝ որպես ականավոր ու վաստակաշատ գիտնականի, գիտակրթական ոլորտի փորձառու մասնագետի, ուղղամիտ մարդու, համազգային խնդիրների նկատմամբ ամենաակտիվ և սկզբունքային դիրքորոշում ունեցող քաղաքացու: Այս ամենի արդյունքում Ա. Մելքոնյանը իրավամբ լայն հեղինակություն է վայելում հայրենիքում և սփյուռքում:

Դեռ ուսանողական տարիներից նվիրվելով հարազատ ժողովրդի պատմության լուսաբանմանը, պատմագիտության ու հայագիտության զարգացմանը, Ա. Մելքոնյանը իր գիտական գործունեության ամբողջ ընթացքում տասնամյակներ շարունակ անխոնջ գիտահետազոտական աշխատանքով ծանրակշիռ ներդրում է ունեցել գիտության զարգացման գործում և դրանով իսկ խոշոր ծառայություն մատուցել հայագիտությանն ու հայրենիքին: Լայն ու ընդգրկուն է Ա. Մելքոնյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր, Հայկական հարց, Հայոց ցեղասպանություն, Արևմտյան Հայաստանի պատմության հարցեր, Ջավախքի պատմություն, հայ-վրացական, հայ-թուրքական հարաբերություններ և այլն: Ուրույն բնագավառ են կազմում հանրապետական և միութենական գիտական հանդեսներում նրա հրատարակած մի շարք հոդվածները նվիրված հայ պատմագիտության խնդիրներին:

Ակադեմիկոս Ա.Մելքոնյանին բնորոշ է պատմագիտության մեջ հաստատակամությունը, ծայրահեղություններին տեղիք չտալու գործելակերպը: Նա հավասարակշռված և միաժամանակ պատմագիտության առաջ ծառացած խնդիրները խորապես ընկալող առաջատար մասնագետներից է: Տարաբնույթ աղբյուրների հիմնավոր իմացությունը և մասնագիտական գրականության քաջատեղյակությունը զուգորդելով քննական ու վերլուծական կարողությունների հետ՝ գիտնականը հաջողությամբ զբաղվեց Հայաստանի նոր և նորագույն պատմության ամենատարբեր հարցերի ու խնդիրների գիտական հետազոտությամբ:

Հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության ուսումնասիրության ասպարեզում լուրջ ներդրում է Ա. Մելքոնյանի խոր և բազմակողմանի գիտելիքների վրա հենվող նրա ինքնուրույն դատողությունները, տրամաբանական կուռ եզրակացությունները, որոնք հնարավորություն են տվել նշանավոր

պատմաբան-հայագետին քննվող հարցերին մոտենալ նորովի՝ նոր հարցադրումներով:

Նրա կողմից հայոց միջնադարյան, նոր և նորագույն պատմության մեջ մշակված շատ դրույթներ կամ հիմնովին փաստարկվել են, կամ էլ լուսաբանվել ու բացահայտվել են պատմագիտության նվաճումների լույսով:

Ա. Մելքոնյանին բնորոշ են արգասավոր աշխատասիրությունը, գիտական բարեխղճությունը, մշտական գիտական որոնումների ձգտումը: Նրա պատկառելի գիտական վաստակի արգասիքն են կազմում 18 գրքերը (մենագրությունները) և 450-ից ավելի գիտական հոդվածները: Ա. Մելքոնյանի առաջին մենագրությունը նրա թեկնածուական ատենախոսությունն ամփոփող «Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» 1994 թ. լույս տեսած աշխատությունն է: Այս մենագրությունը հակահարված է թուրքական պատմագիտության այն կեղծիքին, թե իբրև Արևմտյան Հայաստանում կամ իրենց խոսքերով ասած Արևելյան Անատոլիայում, չի եղել մի վարչամիավոր, որտեղ հայերը կազմեին բնակչության մեծամասնությունը: Պանթուրքիստական այս տեսակետի նպատակը հեռու գնացող այն կեղծիքն է, որով փորձ է արվում ժխտել մեր ժողովրդի իրավունքը այդ տարածքների նկատմամբ: Արևմտյան Հայաստանի զգալի մասը կազմող Էրզրում նահանգի պատմաժողովրդագրական բուռն գործընթացներով աչքի ընկնող մի ժամանակահատվածի՝ XIX դարի առաջին երեսնամյակի պատմական բազմաթիվ անցուդարձերի ուսումնասիրությունը Ա. Մելքոնյանի կողմից թուրքական պնդումների մերկացման տեսակետից արժեքավոր հետազոտություն է: Գրախոսականում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Բարթիկյանը, արժեվորելով Ա. Մելքոնյանի սույն մենագրությունը մասնավորապես նշել է. «Մելքոնյանի մենագրության հաջողությունը պայմանավորված է եղել երկու էական հանգամանքով.

առաջին՝ հեղինակը օգտագործել և շրջանառության մեջ է դրել բազմաբնույթ և հարուստ աղբյուրագիտական նյութ: Օգտագործվել են ինչպես Երևանի (հատկապես Մատենադարանի մի շարք ֆոնդեր), այնպես էլ Մոսկվայի և Թիֆլիսի տարբեր արխիվների նյութերը: Երկրորդ՝ մանրակրկիտ համատեղվել է հավաքված հարուստ նյութը և Կարնո նահանգի 16 գավառների ժողովրդագրության, նրանցում ազատագրական շարժումների, սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ ստեղծվել է աշխատությունների մի ինքնատիպ շարք: Հեղինակի ուշադրության կենտրոնում են այնպիսի կարևոր հիմնախն-

դիրներ, ինչպիսիք են՝ նահանգի բնակավայրերի տեղագրությունը, ազգաբնակչության թվաքանակը, ազգային կազմը, էթնիկական տեղաշարժերը, դրանց սոցիալ-քաղաքական նախադրյալների բացահայտումը և այլն» (ՊԲՀ, 2016, № 1, էջ 254, 255):

Իր այս աշխատությամբ Ա. Մելքոնյանը ըստ էության հայ պատմագրության ասպարեզում միանգամայն նոր բնագավառի, գիտաքաղաքական կարևորագույն նշանակություն ունեցող հիմնահարցի՝ Հայաստանի նահանգների վարչատարածքային և ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրության նախաձեռնողներից եղավ, խիստ կարևորելով դրա հրատապությունն ու գիտա-քաղաքական նշանակությունը: Պատահական չէ, որ նրա ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործում է թեմատիկ խումբ, և այդ ուղղությամբ աշխատանքները լայն ծավալ ընդունեցին: Առանց երկմտելու կարելի է նշել, որ Ա. Մելքոնյանը ժողովրդագրության դպրոց ստեղծեց: Նրա ղեկավարությամբ մեծ թվով գիտական թեզեր պաշտպանվեցին, հատկապես Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգների ժողովրդագրական վիճակի վերաբերյալ, որոնք լույս են սփռում Հայաստանի տարբեր շրջանների բնիկ հայկական լինելու հարցի վրա: Հարկավոր է նշել, որ նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 14 թեկնածուական ատենախոսություն, որոնց մեծ մասը նվիրված է Հայաստանի պատմական ժողովրդագրության, ցեղասպանության և այլ թեմաներին:

Վերոնշյալ մենագրության տրամաբանական շարունակությունը կարելի է համարել Ա. Մելքոնյանի «Ջավախք. պատմության ուրվագծեր» (1999) և «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» (2003) աշխատությունները, քանզի ջավախահայերի մեծ մասի նախնիները տեղափոխվել էին Էրզրումի նահանգից 1829–1830 թթ.:

Այս գրքերից երկրորդը, նվիրված է հայ պատմագրության մեջ սակավ ուսումնասիրված, բայց մեծ կարևորություն ներկայացնող բնագավառներից մեկին՝ Հյուսիսային Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնախնդիրներին, որոնք, գիտական նշանակությունից բացի, ձեռք են բերում նաև քաղաքական նշանակություն և կարող են օգտակար լինել ոչ միայն քաղաքագետների, այլև պետական ու քաղաքական գործիչների համար:

Աշխատությունն ընդգրկում է Ջավախքի քաղաքական պատմության, պատմական աշխարհագրության, Հայ առաքելական եկեղեցու պատմության, Հյուսիսային Հայաստանի քարտեզագրության, մշակութաբանության, վիճա-

կագրության բնագավառները: Չնայած գրքի վերնագրին՝ այն ավելի ընդգրկուն է և շոշափում է բազմաթիվ ու բազմապիսի հարցեր: Գիտական շրջանառության մեջ դրված արխիվային հարուստ նյութը՝ կարևոր է ինչպես Ջավախքի, այնպես էլ հարևան Ախալցխայի, Ասպինձայի, Ծալկայի և այլ գավառների, առհասարակ հայ-վրացական հարաբերությունների ու ողջ տարածաշրջանի պատմության ուսումնասիրության համար: Պատահական չէ, որ ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը՝ սույն գրքի գրախոսականում արժեվորելով աշխատությունը գրել է. «Ա. Մելքոնյանն ընտրել է թեմայի բազմաքանակ ու բազմաբնույթ, հաճախ խճողված հարցերը քննարկելու և լուսաբանելու միանգամայն ճիշտ ու արդարացված եղանակ՝ պատմաքննական մեթոդը: Շնորհիվ լեզուների և առաջին հերթին վրացերենի իմացության, բոլոր անհրաժեշտ սկզբնաղբյուրների ու գրականության նյութը ներառելու և պատմագիտական հիմնավոր պատրաստվածության, Աշոտ Մելքոնյանը ստեղծել է բարձրարժեք ու մնայուն աշխատություն: Տեսական լավ պատրաստվածությունը, պատմական աշխարհագրության և ժողովրդագրության հեղինակի մասնագիտական իմացությունները մեծապես նպաստել են հաջողված մենագրություն ստեղծելուն: Հաջողության գրավականներից մեկն էլ եղել է այն, որ հետազոտողը պատմական երկարատև ժամանակաշրջանում իրեն զբաղեցնող հիմնահարցերը քննարկել է Անդրկովկասի և Ռուսաստանի պատմության ընդհանուր հետնախորքի վրա: Մենագրության ընդհանրացումներն ու եզրահանգումները փաստագրված են ու համոզիչ (ՊԲՀ, 2003, 2, էջ 297)»:

Ա. Մելքոնյանը հեղինակել է «Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ)» (2005) աշխատությունը, որտեղ եկեղեցու թեմական կառույցների ընդհանուր հենքի վրա նկարագրել է հիշյալ երկու գավառների հոգևոր-կրթական կյանքը: 1829 թ. Ռուսաստանին միացումից հետո Սամցխե-Ջավախքում հայ քաղաքական ու հոգևոր-կրթական կյանքի աշխուժացման արդյունքում ծխական, մասնավոր ու պետական հարյուրավոր դպրոցներ բացվեցին տարածաշրջանում: Աշխատանքը համալրված է արխիվային բազմաթիվ փաստաթղթերով՝ որպես հետազոտվող նյութ: (ՊԲՀ, 2016, N 1, էջ 256):

2011 թ. հրատարակվեց Ա. Մելքոնյանի «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժողովածու)» գիրքը: Այդ նույն թվականին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ, լույս տեսավ նրա կենսամա-

տենագիտությունը: Գրքույկն ամփոփում է անվանի պատմաբանի 25-ամյա գիտահասարակական գործունեության ամբողջական պատկերը:

Բացի մենագրություններից, Ա. Մելքոնյանը հեղինակել է նաև բազմաթիվ կոլեկտիվ աշխատանքներ: Վ. Ղազախեցյանի հետ կազմել ու խմբագրել է «Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)» (2008) ժողովածուն և Է. Լ. Դանիելյանի համահեղինակությամբ գրել է «Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (2008) գիրքը: (ՊԲՀ, 2016, N 1, էջ 256) Հարկ է առանձնահատուկ ընդգծել պատմաբանի՝ հայրենասեր և ազգային արժեքներ դավանող քաղաքացիական հստակ ու սթափ դիրքորոշումը մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հարցերի, մասնավորապես Հայկական հարցի, Հայոց ցեղասպանությանը, հայ-թուրքական արձանագրություններին, հայ-վրացական փոխհարաբերություններին վերաբերող հիմնախնդիրների հրապարակային քննարկումների ժամանակ: Այդ հարցերին են նվիրված «Հայոց պատմության դասերն ու պատգամները» (2013) և «Ցեղասպանություն և հայրենազրկում. Ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ)» (2015) ժողովածուները: Դրանցից երկրորդում տեղ են գտել նաև Հայոց ցեղասպանության վերաբերյալ տարբեր լեզուներով հեղինակի ինչպես հրատարակված, այնպես էլ անտիպ հոդվածները, զեկուցումները և հարցազրույցները: Հայոց Մեծ եղեռնի հետևանքների վերացման և հատուցման հասնելու տեսանկյունից կարևորվում է միջազգային օրենսդրության մեջ հայրենազրկում հասկացության ձևակերպման անհրաժեշտությունը, այդ հարցում համահայկական և պետական հայեցակարգի ստեղծումը: (Տե՛ս, ժողովածուի մասին պ.գ.թ. Արմեն Կարապետյանի գրախոսականը, ՊԲՀ, 2016, Հ-1, էջ 224–227):

Նրան բնորոշ են արգասավոր աշխատասիրությունը, գիտական բարեխղճությունը, մշտական գիտական որոնումների ձգտումը:

Մեր հանրապետության քաղաքացիները քաջածանոթ են նաև հայ- թուրքական հարաբերությունների և նախաստորագրված արձանագրությունների վերաբերյալ նրա դիրքորոշմանը: Քաղաքացիական արիության ու սեփական հավատամքին անդավաճան մնալու վառ օրինակ է ՀՀ Ազգային ժողովում «Նախաստորագրված արձանագությունները և Հայաստան-Թուրքիա հարաբերությունների գործընթացը» թեմայով խորհրդարանական լսումներին նրա ելույթը:

Ա. Մելքոնյանն ազնիվ է, շիտակ, սկզբունքային, ընկերասեր: Անմնացորդ հայրենասիրության յուրահատուկ դրսևորումներ են 1997 թվականից, սկսվող նրա ուխտագնացություններն Արևմտյան Հայաստան և Կիլիկիա: Այդ ուխտագնացությունների արդյունք է «Կարոտի էրգիր» (2006) ֆիլմը: 2007 թ. օգոստոսի 10-ին՝ հայ ժողովրդի համար բախտորոշ Սևրի դաշնագրի օրը, նա բարձրացել է Արարատ լեռան գագաթը, և դրա հիման վրա ստեղծել «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» գիտահանրամատչելի և պատմավավերագրական համանուն ֆիլմը (2008)՝ նվիրված հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակին (1809 թ.) և Դորպատի համալսարանի պրոֆ. Ֆրիդրիխ Պարրոտի հետ Խ. Աբովյանի Արարատի գագաթը բարձրանալու 180-ամյակին (1829 թ.):

Ակադեմիկոս Ա. Մելքոնյանի հմուտ գիտակազմակերպչական և տքնաջան աշխատանքի շնորհիվ կյանքի կոչվեց «Հայոց պատմություն» ակադեմիական նոր բազմահատորյակը: Նրա հրատարակության պատրաստման ու տպագրության հարցում, անհրաժեշտ է նշել, ականավոր պատմաբանի ներդրումը: Նրա տնօրինության օրոք Պատմության ինստիտուտում հիմնվեց «Մեսրոպ արք. Աշճյան» գիտական կենտրոնը, արքեպիսկոպոսի անունը կրող մատենաշարը: Նրա նախաձեռնությամբ սկսեցին պարբերաբար հրատարակվել «Հայոց պատմության հարցեր» տարեկան ժողովածուները, ստեղծվեց ինստիտուտի գիտահրատարակչական-տպագրական բազան:

Նրա գիտական խմբագրությամբ լույս են տեսել տասնյակ աշխատություններ, ժողովածուներ, դպրոցական դասագրքեր և բուհական ձեռնարկներ: Բազմիցս մասնակցել է և միջազգային գիտական հեղինակավոր խորհրդաժողովների, 5 տասնյակից ավելի երկրներում հանդես է եկել ելույթներով և դասախոսություններով, որոնց շնորհիվ մեծ ճանաչում է ստացել ոչ միայն հայության, այլև արտասահմանի մասնագետ-պատմաբանների շրջանում: Ուստի բոլորովին էլ պատահական չէ, որ նա արժանացել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի գլխավոր մրցանակին՝ «Երիտասարդ գիտնական 94» անվանակարգով, «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին»՝ «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի դրամաշնորհին և Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին և այլն:

Վաղուց հասունացել էր Երևանի պատմության ամբողջական նոր շարադրանքի անհրաժեշտությունը, որը զերծ կլիներ խորհրդային ժամանակնե-

րին բնորոշ գաղափարախոսական պարտադրանքից և կարտացոլեր վերջին հիսնամյակում գիտության նոր ձեռքբերումները՝ այս ասպարեզում: Այս հանգամանքը հաշվի առնելով հայրենի գիտնականների մի խումբ. Ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի ղեկավարությամբ հանձն առավ լրացնելու հայոց պատմագրության մեջ եղած կարևոր այդ բացը: 2018թ. Ա. Մելքոնյանի հեղինակությամբ և խմբագրությամբ հրատարակված՝ «Երևանի պատմություն (հեղ. խումբ) », Երևան, «Երևան բուք», ՍՊԸ, 342 էջ աշխատությունը, որը հարազատ քաղաքի պատմությունը սկզբից մինչև մեր օրերն համակարգված, ամբողջական, հիմնավոր և հանրամատչելի ներկայացնելու առաջին փորձն է, որը նվիրված է մայրաքաղաքի 2800-ամյակին: Մեր կարծիքով նշված աշխատությունը, լինելով բազմամյա, տարիների ընթացքում ձեռք բերած գիտական մտքի ընդհանրացված արտացոլանքը, տեղեկատվության և պատմության անփոխարինելի սկզբնաղբյուր կարող է լինել: Ճշմարտությանը սատար կանգնելու նոր մտայնությամբ, ելույթներով և գրավոր խոսքով նա հանդես եկավ 1988 թ. Արցախյան իրադարձությունների տարիներին:

2010 թ. սկսած Ա. Մելքոնյանը Հայոց պատմության և մշակույթի պատմության դասախոսությունների շարք է իրականացնում Հայոց բանակում՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի զորամասերում, նպատակ ունենալով բարձրացնել հայ զինվորականի պատմաճանաչողական կարողությունները և ռազմահայրենասիրական ոգին:

Ակադեմիկոս Ա.Մելքոնյանի անմիջական ղեկավարությամբ, 21-րդ դարասկզբին ստեղծվեցին հայոց ամբողջական պատմության նոր դասագրքեր, որտեղ հատկապես նոր և նորագույն շրջանի շատ հարցեր լուսաբանվեցին հանրամատչելի ու միանգամայն նորովի մոտեցումներով:

Այս դասագրքերը բազմիցս վերահրատարակվել են և նպաստել հայրենասեր սերնդի դաստիարակման գործին, որի ապացույցը արցախյան 2-րդ և 3-րդ պատերազմներին երիտասարդ սերնդի ակտիվ և նվիրյալ մասնակցությունն էր: Նա լուրջ վաստակ ունի նաև բուհական դասագրքերի, ուսումնական ծրագրերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման գործում: 2018 թ. լույս տեսավ Ա. Մելքոնյանի «Հայոց պատմություն» (ակնարկներ հնագույն ժամանակներից մինչև 20-րդ վերջը) ձեռնարկը՝ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողության, հայաստանյան և սփյուռքյան դպրոցների աշակերտության համար: Գրքում տեղ են գտել Հայաստանի պատմության առավել կարևոր և հանգուցային խնդիրների վերաբերյալ վերջին տասնամյակնե-

րին հայ պատմագիտության մոտեցումները: Տասնամյակներ շարունակ նշանավոր գիտնականը դասախոսում է Երևանի պետական համալսարանում, հատկապես պատմության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետներում, դասավանդելով հատուկ մասնագիտական և ընդհանուր դասընթացներ, տարիներ շարունակ ղեկավարում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի պետական քննական հանձնաժողովը: Նա ոչ միայն հարուստ գիտելիքներ է հաղորդում ուսանողությանը, այլև հոգածությամբ նպաստում է գիտական կադրերի պատրաստմանը: Գիտավարչական աշխատանքին զուգահեռ ակադեմիկոսը դասավանդում է նաև ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնում: 2004-2006 թթ. զբաղեցրել է Երևանի բժշկական համալսարանի Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնը: Բազմիցս եղել է տարբեր բուհերի (Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Արցախի պետական համալսարաններ, Գյումրիի մանկավարժական ինստիտուտ) պատմության ֆակուլտետների պետական քննական հանձնաժողովների նախագահ:

Ա. Մելքոնյանը իր ընդառաջող և գործունյա խառնվածքի շնորհիվ ակտիվ մասնակցություն է բերում հանրապետության գիտակրթական կյանքին: Լինելով շուրջ տասից ավելի հեղինակավոր հաստատությունների և բուհերի գիտական խորհուրդների անդամ, նա գլխավորում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտացված խորհուրդը:

Ա. Մելքոնյանի ղեկավարությամբ կազմակերպվել են տասնյակ հանրապետական, համամիութենական և միջազգային գիտաժողովներ, որոնք նշանակալից ներդրում են ունեցել հայագիտության ասպարեզում:

Ա. Մելքոնյանն իր գիտական եզրակացություններն ու մտորումները տարիներ ի վեր ներկայացրել է ու այսօր էլ շարունակում է այդ արդյունավետ շփումը լսարանների հետ՝ տարբեր գիտաժողովներում: Նա դասախոսություններով ու ելույթներով հանդես է գալիս ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում իր ծանրակշիռ խոսքն ուղղելով սփյուռքահայ և օտարազգի ունկնդիրներին՝ Ուկրաինայում, Գերմանիայում, Վրաստանում, ԱՄՆ-ում, Թուրքիայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Եգիպտոսում, Շվեդիայում, Իրանում, Իսպանիայում, Լիբանանում, Հունաստանում, Շվեյցարիայում, Հունգարիայում, Սիրիայում, Մեծ Բրիտանիայում, Կիպրոսում, Մոլդովայում և այլուր:

Մեծահարգ գիտնականը անդամակցում է ԵՊՀ-ի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, ԵՊՀ Պատմության ֆակուլտետի, Երևան քաղաքի պատմության թանգարանի գիտական խորհուրդներին, հանդիսանում է նաև մի շարք գիտական հանդեսների՝ «Հայոց պատմության հարցեր» (խմբագիր), «Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Պատմություն և Մշակույթ», «Պատմություն և Հասարակագիտություն», «Բանբեր հայագիտության», «Վէմ», «Կանթեղ», «Բանբեր Հայաստանի արխիվների», «Вестник гуманитарных и юридических наук (Ставрополь Северокавказский федеральный университет)», «Регион и мир» խմբագրական խորհուրդների անդամ:

Տասնամյակներ շարունակ կայացած գիտամանկավարժական հայրենանվեր աշխատանքով ու անմնացորդ նվիրումով Ա. Մելքոնյանը մեծ հեղինակություն է վայելում հանրապետության մտավորականության և ժողովրդի լայն շրջանակներում:Նրա մարդկային բարձր ու առինքնող հատկանիշներն են համեստությունը, բարությունը, ազնվությունն ու գործին նվիրվածությունը, որի շնորհիվ վայելում է ակադեմիական և համալսարանական կոլեկտիվների և ուսանողության սերն ու համակրանքը: Նա պարզ է, անկեղծ ու բարյացակամ:

Նշանավոր գիտնականի երեքուկես տասնամյակի վաստակը ծանրակշիռ է և ուսանելի: Մասնագիտական բարձր որակը, պահանջկոտությունը իր և շրջապատի նկատմամբ բնորոշ են Ա. Մելքոնյան անհատականությանը: Ա. Մելքոնյանը լինելով լայնախոհ, սկզբունքային ,քաղաքացիական բարձր նկարագիր ունեցող հայրենասեր մտավորական՝ միաժամանակ սիրված դասախոս է թե՛ ուսանողության և թե՛ գործընկերների շրջանում: Բավական հետաքրքիր ու բովանդակալից են, փաստերով հագեցած, տրամաբանական կուռ հիմքի վրա կառուցված նրա դասախսությունները, որոնց բնորոշ են բարձր գիտական մակարդակն ու մատչելիությունը: Հարուստ և բազմակողմանի գիտելիքներով օժտված գիտնականը քառորդ դարից ավելի դասավանդում է Երևանի պետական համալսարանում: Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում և այլուր:

Պրոֆեսոր Ա.Մելքոնյանը անմնացորդ նվիրումով իր գիտելիքներն է հաղորդում բազմաթիվ ուսանողների: Նրա հարյուրավոր սաներ աշխատում են հանրապետության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ հանգուցային բնագավառներում:

Գիտությունն իր մեջ ամբարած Ա.Մելքոնյանին գիտական անաչառության հետ մեկտեղ բնորոշ է ազգային շահի գիտակցումն ու պետական մտածողությունը: Այդ որակներն են, որ իբրև դասախոս և մանկավարժ նա ջանում է ներարկել երիտասարդ ու կրթված բազմաթիվ ուսանողության մեջ:

Գիտությանը զուգահեռ, Ա. Մելքոնյանը մտահոգված է մեր երկրի հոգսերով, իրականացրել և իրականացնում է հասարակական-քաղաքական արդյունավետ գործունեություն: Բարձր է գնահատվել Ա. Մելքոնյանի ծառայությունները Հայրենիքին և գիտությանը: Նա պարգևատրվել է բազմաթիվ մրցանակներով, Հայաստանի և Արցախի հանրապետությունների կառավարական բարձր պարգևներով, ի թիվս որոնց՝ Երևանի բժշկական համալսարանի «Ոսկե» (2005 թ.), «Ֆրիտյոֆ Նանսեն» ոսկե, (2010 թ.), «Ակսել Բակունց» (2011 թ.), ԵՊՀ-ի ոսկե (2011 թ.), «Մանկավարժական համալսարան» ոսկե (2011 թ.), ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» (2011 թ.), ՀՀ ՊՆ «Անդրանիկ Օզանյան» (2013 թ.), «ԼՂՀ ազգային-ազատագրական պայքարի 25-ամյակի առթիվ» (2013 թ.), «Արգիշտի Առաջին» (2015 թ.), «Վաչագան Բարեպաշտ» (2018 թ.) հուշամեդալներով և մեդալներով: Պատմագիտության բնագավառում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար Ա. Մելքոնյանին շնորհվել է «Մովսես Խորենացի» (2003 թ.), Հայոց ցեղասպանության 90-ամյա միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու համար՝ ՀՀ վարչապետի (2005 թ.) մեդալները:

Շնորհավորելով հոբելյանի կապակցությամբ, ակադեմիկոս Ա.Մելքոնյանին՝ համարձակ, շիտակ, կամեցող մարդուն, մաղթում ենք քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր, ստեղծագործ կյանք, և նոր ու բազմաթիվ աշխատություններ՝ ի մարմնավորումն իր գիտական անսպառ մտահղացումների և երիտասարդական եռանդի, ընտանեկան երջանկություն և նորանոր ձեռքբերումներ նրա այնքան սիրելի պատմության, և ընդհանրապես հայագիտության ասպարեզում:

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան

Հրատ. պատվեր N 1091
Ստորագրված է տպագրության 16.04.2021 թ.:
Չափսը՝ 70x100 1/16: 16.75 տպ. մամուլ:
Տպաքանակը 150 օրինակ:

Խմբագրության հասցեն. 375019, Երևան-19,
Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4, հեռ. (+374 10) 521362, 010.564180

Адрес редакции: 375019, Ереван-19,
пр. Маршала Баграмяна 24/4, тел.: (+374 10) 521362, 010.564180

24/4, Marshal Baghramyan
Ave., Yerevan, 375019. Tel: (+374 10) 521362, 010.564180

www.hayagithimnadram.am
Email: joas2015@yahoo.com, info@haygithimnadram.am

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն փպարան, 375019,
Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24.
Printing House of the "Gitutuyn" Publishing of the NAS RA, 375019,
Yerevan, Marshal Baghramian ave., 24.
Типография издательства «Гитутюн» НАН РА, 375019,
Ереван, пр. Маршала Баграмяна, 24.